— Սանի,— ասում էր— Դե, շարժվիր։

— Իսկ մի՞թե դուք չեք ուզում նախ զրուցել,— հարցնում եմ ես։ Երեխայությունն է, իհարկե, բայց ես սոսկալի անհարմար էի զգում։— Մի՞թե դուք այդպես շտապում եք։— Նա նայեց ինձ, ինչպես կնայեն հոգեկան հիվանդին։

— Ի՞նչ խոսելու բան կա,— հարցնում էր

— Ձգիտեմ։ Հենց այնպես։ Կարծում էի, երևի կցանկանաք մի քիչ զրուցել։

Նա նորից նստեց սեղանի մոտի բազկաթոռին։ Բայց դա նրա սրտովը չէր։ Էլի սկսեց օրորել ոտքը. շատ նյարդային աղջիկ էր։

— Գուցե սիգարետ կցանկանայիք,— հարցնում եմ։ Մոռացել էի, որ նա չի ծխում։

— Ես չեմ ծխում։ Լսեցեք, եթե ասելու բան ունեք, ասացեք։ Ես ժամանակ չունեմ։

Բայց բոլորովին չգիտեի, թե ինչ խոսեմ նրա հետ։ Կցանկանայի հարցնել, թե ինչպես է պոռնիկ դարձել, բայց վախեցա։ Միևնույն է, չէր ասի։

— Նյու-Յորքի՞ց եք,— հարցնում եմ։ Ուրիշ բան չգտա հարցնելու։

— Չէ, Հոլիվուդից եմ,— ասում էր Հետո վեր կացավ ու մոտեցավ մահճակալին, որտեղ ընկած էր նրա զգեստը։— Կախիչ ունե՞ք, թե չէ կճմրթվի զգեստս, նոր եմ բերել մաքրման կետից։

— Իհարկե,— ասում եմ։

Շատ ուրախացա, որ գործ ճարվեց։ Զգեստը վերցրի ձեռքից ու կախեցի պահարանում։ Տարօրինակ է, բայց տխրեցի, երբ կախում էի զգեստը։ Պատկերացրի, թե ինչպես է նա մտնում խանութ ու գնում զգեստը, և ոչ ոք չի կասկածում, որ նա պոռնիկ է։ Գործակատարը, հավանաբար, մտածում է, որ սովորական աղջիկ է, ու վերջ։ Շատ տխրեցի, ինքս էլ չեմ իմանում ինչու։

Հետո նորից նստեցի, փորձեցի խոսք բանալ։ Բայց մի՞թե նման զրուցակցուհու հետ կարող ես խոսել։

— Դուք ամեն երեկո աշխատո՞ւմ եք,— հարցրի ու անմիջապես էլ զգացի, որ սարսափելի բան եմ հարցնում։

— Ըհը՛,— ասում էր Նա արդեն քայլում է սենյակում, սեղանի վրայից վերցրեց մենյուն ու կարդաց։

— Իսկ ցերեկն ի՞նչ եք անում։

Նա ուսերը թոթվեց։ Ուսերը նիհարի՛կ, նիհարի՛կ են։

— Քնում եմ։ Գնում եմ կինո։— Նա ցած դրեց մենյուն ու նայեց ինձ։— Լսիր, ինչո՞ւ ենք... Ես ժամանակ չունեմ...

— Գիտեք ինչ,— ասում եմ։— Ես ինձ լավ չեմ զգում։ Ամեր օր եմ անցկացրել։ Ազնվորեն եմ ասում։ Ես ձեզ կվճարեմ ինչ-որ պետք է, բայց դուք ինձնից չե՞ք նեղանա, եթե ոչինչ չլինի։

Վատն այն էր, որ ոչինչ չէի ուզում։ Ճիշտն ասած, ինձ համակել էր թախիծը, և ոչ թե ինչ-որ ոգևորություն։ Նա սոսկալի թախիծ էր պատճառում ինձ։ Հապա նրա կանաչ զգե՞ստը, որ կախված էր պահարանում։ Հետո, բացի այդ էլ, ինչպե՞ս կարելի է այդպիսի բանով զբաղվել մի մարդու հետ, որը մի ամբողջ կեսօր նստում ու ապուշ կինոներ էր նայում։ Չէի կարող, և վերջ, ազնիվ խոսք։

Նա մոտեցավ ինձ ու այնպես տարօրինակ նայեց, ասես չէր հավատում։

— Ի՞նչ է պատահել,— հարցնում է

— Ոչ մի բան,— ասում եմ։ Այստեղ ինքս էլ սկսեցի նյարդայնանալ։— Ես, պարզապես, վերջերս եմ վիրահատություն ենթարկվել։

— Հետո՞։ Ի՞նչդ են կտրել։

— Էն բանը, դե՝ կլավիկորդան։

— Հա՞, իսկ որտե՞ղ է էդ բանը։

— Կլավիկորդա՞ն,— ասում եմ։— Գիտեք, դա շատ խորն է, ողնուղեղի մեջ։ Շատ խորը, գիտեք, անմիջապես ողնուղեղի մեջ։

— Հա՞,— ասում էր— Դա շատ վատ բան է։— Ու մեկ էլ փլվում է ծնկներիս։— Իսկ դու լավիկն ես։

Ես սոսկալի նյարդայնանում էի։ Փչում էի աջ ու ձախ։

— Լավ չեմ առողջացել,— ասում եմ։

— Դու նման ես մի արտիստի, կինոյից։ Գիտե՞ս։ Ի՞նչ էր անունը։ Ախր գիտես, է՛։ Ինչ էր անո՞ւնը։

— Չգիտեմ,— ասում եմ։ Իսկ նա չի իջնում իմ ծնկներից։

— Դե չէ, գիտես՝ Մելվին Դուգլասի հետ էր խաղում։ Նա, որ կրտսեր եղբոր դերն էր կատարում։ Որ ընկավ նավակից։ Հիշեցի՞ր։

— Չէ, չհիշեցի։ Ես ընդհանրապես կինո չեմ գնում։— Այստեղ նա սկսեց լկտավել։ Այնպես կոպտորեն, հասկանո՞ւմ եք։

— Վերջ տվեք, խնդրեմ,— ասում եմ։— Տրամադրություն չունեմ։ Ասացի, չէ՞, նոր եմ վիրահատությունից վեր կացել։

Մնկներիցս չէր իջնում, բայց մեկ էլ ծուռ նայեց ինձ, իսկ աչքերը սոսկալի չարություն էին արտահայտում։

— Լսիր,— ասում է,— ես քնած էի, իսկ այդ գրողի տալած Մորիսը ինձ արթնացրեց։ Ինչ է, քո կարծիքով...

— Ասացի, չէ՞, որ կվճարեմ։ Աղնիվ խոսք, կվճարեմ։ Շատ փող ունեմ։ Բայց նոր եմ վեր կացել ծանր վիրահատությունից, դեռ չեմ առողջացել։

— Հապա էլ ինչո՞ւ էիր Մորիսին ասում, թե քեզ աղչիկ է հարկավոր։ Եթե վիրահատել են քո այդ, ինչ էր անունը... Ինչո՞ւ էիր ասում։

— Կարծում էի, մի քիչ լավ կդգամ ինձ։ Բայց ժամանակից շատ շուտ եմ ոտքի ելել։ Լուրջ եմ ասում։ Մի՛ նեղացեք։ Մի րոպե վեր կացեք, միայն դրամապանակս վերցնեմ։ Վե՛ր կացեք մի րոպե։

Սոսկալի կատաղած էր, բայց, այնուամենայնիվ, իջավ ծնկներիցս, այնպես որ հնարավորություն ունեցա մոտենալու պահարանին և հանելու դրամապանակս։ Ես հինգ դոլար հանեցի ու տվեցի նրան։

— Շատ շնորհակալ եմ,— ասում եմ,— շատ-շատ շնորհակալություն։

— Այստեղ հինգ է, իսկ գինը՝ տասն է։

Երևում է, ինչ-որ բան էր որոշել։ Իզուր չէր, որ վախենում էի, համոզված էի, որ այդպես էլ լինելու է։

— Մորիսն ասաց՝ հինգ,— ասում եմ։— Նա ասաց, մինչև առավոտ տասնհինգ, իսկ ժամանակավորը՝ հինգ։

— Ոչ, տասը։

— Մորիսն ասաց՝ հինգ,— ասում եմ։— Ներեցեք, աղնիվ խոսք, բայց ավելին չեմ կարող։

Նա թոթվեց ուսերը, ինչպես քիչ առաջ, խիստ արհամարհանքով։

— Բարի եղեք, տվեք զգեստս։ Թե ձեզ համար դժվար չէ, իհարկե։

Սոսկալի աղչիկ է։ Շատ բարալիկ ձայնով է խոսում, բայց միևնույն է, նրա հետ սոսկալի է։ Թե նա մի հաստատմարմին պառավ պոռնկուհի լիներ, ամբողջովին քամված, ապա այդքան սարսափելի չէր լինի։

Հանեցի զգեստը։ Նա հագավ։ Հետո վերցրեց վերարկուն։

— Դեհ, առայժմ, հիմարիկ,— ասում է։

— Առայժմ,— ասում եմ։ Ես նրան շնորհակալություն չհայտնեցի։ Եվ լավ է, որ չհայտնեցի։

14

Նա գնաց, իսկ ես նստեցի բաղկաթոռին ու իրար հետևից երկու սիգարետ ծխեցի։ Դրսում արդեն լույսը բացվում էր։ Տեր աստվա՜ծ, այս որքան վատ եմ զգում ինձ։ Այնպիսի դատարկություն էր, որ պատկերացնել անգամ չեք կարող։ Ու ես սկսեցի բարձրաձայն զրուցել Ալլիի հետ։ Հաճախ եմ նրա հետ զրուցում, երբ թախիծը պատում է հոգիս։ Ես նրան ասում եմ. «Ող վերցնի հեծանիվը ու ինձ սպասի Բոբի Ֆելոնի տան մոտ։ Բոբի Ֆելոնը ապրում էր Մելբոռնում, մեր տան մոտ, դա վաղուց էր։ Եվ, ահա թե ինչ եղավ։ Ես ու Բոբին որոշել էինք հեծանիվներով գնալ Սեդերբիգո լճի մոտ։ Մտադիր էինք նախաճաշ վերցնել ու այն ամենը, ինչ անհրաժեշտ կլիներ, և մեր փոքր տրամաչափի հրացանները. մենք շատ փոքր էինք ու կարծում էինք, թե փոքր տրամաչափի մեր հրացաններով կարող ենք որս խփել։ Մի խոսքով, Ալլին լսել էր ինչպես ենք պայմանավորվում, ու խնդրում էր իրեն էլ վերցնենք, իսկ ես նրան չվերցրի, ասացի՝ դեռ փոքր ես։ Իսկ հիմա, երբ թախիծը համակում է սիրտս, ես նրան ասում եմ. «Լավ, վերցրու հեծանիվդ ու ինձ սպասիր Բոբի Ֆելոնի տան մոտ։ Միայն թե մի՛ ուշանա»։

Ոչ թե ես նրան երբեք ինձ հետ չէի տանում։ Չէ՛, տանում էի, բայց այդ օրը չտարա։ Իսկ նա բոլորովին չէր նե-

դացել,— նա երբեք չէր նեղանում,— բայց ես միշտ այդ մասին հիշում էի, երբ շատ էի տխուր լինում։

Վերջապես, այնուամենայնիվ, հանվեցի ու պառկեցի։ Պառկեցի ու մտածում եմ. աղոթե՞մ, թե չէ։ Բայց քան լըսացվեց։ Չեմ կարողանում աղոթել, նույնիսկ երբ ուզում եմ։ Նախ՝ ես մասամբ աթեիստ եմ։ Քրիստոսն ընդհանրապես ինձ դուր է գալիս, բայց աստվածաշնչային մնացած խառնափնթորությունը՝ ոչ այնքան։ Վերցնենք հենց թեկուզ առաքյալներին։ Ճիշտն ասած, նրանք ինձ սոսկալի կատաղեցնում են։ Իհարկե, երբ Քրիստոսը մեռավ, նրանք իրենց վատ չպահեցին, բայց քանի դեռ կենդանի էր, նրանցից միայն վնաս էր տեսնում։ Անընդհատ խաբում էին նրան։ Աստվածաշնչի մեջ ամենից քիչ ինձ այդ առաքյալներն են դուր գալիս։ Ճիշտն ասած, Քրիստոսից հետո ես Աստվածաշնչից սիրում եմ այն խենթուկին, որ ապրում էր քարանձավում ու ամբողջ ժամանակ իրեն ճանկռտում էր քարերով և այլ բաներով։ Ես այդ ողորմելի հիմարին տասն անգամ ավելի եմ սիրում, քան առաքյալներին։ Երբ Հուտտոնի դրպրոցում էի, ես միշտ վիճում էի մեր հարկում ապրող մի տիպի՝ Արթուր Չայլդսի հետ։ Այդ Չայլդսը կվակեր[1] էր և միշտ Աստվածաշունչ էր կարդում։ Նա լավ տղա էր, ես սիրում էի նրան, բայց Աստվածաշնչի հարցում մենք տարբեր կերպ էինք դատում, հատկապես առաքյալների հարցում։ Նա ինձ համոզում էր, որ եթե ես առաքյալներին չեմ սիրում, ուրեմն Քրիստոսին էլ չեմ սիրում։ Նա ասում էր, քանի որ Քրիստոսն ինքն է իր առաքյալներին ընտրել, ուրեմն պետք է նրանց սիրել։ Իսկ ես ասում էի. գիտեմ, որ նա ինքն է ընտրել, բայց ընտրել է պատահմամբ։ Ասում էի, որ Քրիստոսը ժամանակ չուներ ընտրություն կատարելու, ես բոլորովին էլ չեմ մեղադրում Նրան։ Մի՞թե նա մեղավոր էր, որ ժամանակ չուներ։ Հիշում եմ, մի անգամ հարցրի Չայլդսին. ինչ է կարծում նա, Հուդան, որ մատնեց Քրիստոսին, ինքնասպան լինելուց հետո դժո՞խք ընկավ, թե չէ։

Չայլդսը ասում է, իհարկե, ընկավ։ Եվ այստեղ ոչ մի կերպ չէի կարողանում համաձայնել նրա հետ։ Ես ասում եմ. գրազ կգամ հազար դոլլարով, որ Քրիստոսը ոչ մի դեպքում այդ ողորմելի Հուդային դժոխք չէր ուղարկի։ Ես հիմա էլ գրազ կգայի հազար դոլլարով, եթե այդքան ունենայի։ Այդ առաքյալներն, օրինակ, անպայման դժոխք կուղարկեին Հուդային, առանց տատանվելու։ Իսկ Քրիստոսը՝ ո՛չ, պիտովս եմ երդվում։ Այդ Չայլդսն ասում էր, որ ես այդպես եմ մտածում, որովհետև եկեղեցի չեմ գնում։ Ինչ որ ճիշտ է, ճիշտ է, չեմ գնում։ Նախ՝ իմ ծնողները տարբեր հավատի են, ու մեր քոտանիքում բոլոր երեխաներս աթեիստներ ենք։ Անկեղծ ասած, հոգևորականներին ես տանել չեմ կարողանում։ Բոլոր դպրոցներում, որտեղ որ ես սովորել եմ, բոլոր հոգևորականներն էլ հենց որ սկսում են քարոզել, նրանց ձայնը դառնում է քաղցր-մեղր, անտանելի։ Օ՛հ, ատում եմ դրանց։ Չեմ հասկանում, թե ինչու չեն կարողանում սովորական ձայնով խոսել։ Այնքան են ծռմռվում, որ անհնար է լսելը։

Մի խոսքով, երբ պառկեցի, ոչ մի աղոթք չկավ միտքս։ Հենց ուզում եմ մի աղոթք հիշել, այդ Սանիի ձայնն եմ լսում, որ ինձ հիմարիկ անվանեց։ Ի վերջո նստեցի անկողնիս մեջ ու մի սիգարետ էլ ծխեցի։ Փենսիից դուրս գալուց հետո երևի արդեն երկու տուփ սիգարետ ծխած կլինեի։

Ու հանկարծ հենց որ պառկեցի, ինչ-որ մեկը ծեծեց դուռը։ Հույսով մտածում էի, որ երևի իմ դուռը չեն ծեծում, բայց հրաշալի հասկանում էի, որ հենց իմ դուռն է։ Չգիտեմ ինչու, բայց անմիջապես հասկացա ով է։ Ես շատ զգայուն եմ։

— Ո՞վ է,— հարցնում եմ։ Շատ վախեցա։ Այդպիսի հարցերում վախկոտ եմ։

Նորից ծեծեցին։ Միայն թե ավելի ուժգին։

Վերջապես վեր կացա, միայն պիժամայով, ու բացեցի դուռը։ Նույնիսկ լույսը վառելու հարկ չեղավ. արդեն առավոտ էր։ Շեմքին կանգնած էին այդ Սանին ու Մորիսը՝ պզոսկոտ վերելակավարը։

— Ի՞նչ է պատահել,— հարցնում եմ։— Ի՞նչ եք ուզում։— Չորս ժամ դուռը դողում էր։

— Դատարկ բան,— ասում է այդ Մորիսը։— Ընդամե-

1 Քրիստոնեական բողոքական աղանդ, որ առաջացել է XVII դ. Անգլիայում։ Լայնորեն տարածված է Հյուսիսային Ամերիկայում։

նր հինգ դոլլար։— Նա խոսում էր երկուսի փոխարեն, իսկ աղջնակը կանգնել էր բերանը բաց և ոչինչ չէր ասում։

— Ես նրան արդեն վճարել եմ,— ասում եմ։— Ես նրան հինգ դոլլար եմ տվել։ Իրեն հարցրեք— օհ, ինչպե՞ս էր դողում ձայնս։

— Տասը պետք է տաք, շեֆ։ Ես ձեզ ասացի, տասը ժամանակավորապես, տասնհինգ՝ ամբողջ գիշերվա համար։ Ես ձեզ ասացի, չէ՞։

— Ճիշտ չէ, չեք ասել։ Դուք ասացիք՝ հինգ ժամանակավորապես, տասնհինգ՝ ամբողջ գիշերվա համար, ես շատ լավ եմ լսել...

— Շուտ արեք, շեֆ։

— Ինչի՞ համար,— հարցնում եմ։ Ասաված իմ, սիրտս այնպես էր տրոփում, որ ասես հիմա դուրս է թռչելու։ Գոնե հագնված լինեի։ Անտանելի է պիժամայով կանգնել, երբ այդպիսի բան է կատարվում։

— Դե տվե՛ք, շեֆ, տվե՛ք,— ասում է Մորիսը։ Ու այնպես է հրում իր կեղտոտ թաթով, որ քիչ է մնում շրմփամ հատակին. շատ ուժեղ էր շան որդին։ Ու դեռ չէի սթափվել, որ երկուսն էլ հայտնվեցին սենյակում։ Այնպիսի տեսք ունեին, ասես դա իրենց սենյակն էր։ Սանին նստեց լուսամուտագոգին։ Մորիսը նստեց բազկաթոռին ու արձակեց օձիքը. նրա հագին վերնակավարի համազգեստ էր։ Ծեր ասոված, ինչպե՞ս էի նյարդայնանում։— Դե լավ, շեֆ, հանեք փողերը, ես գործի պիտի գնամ։

— Ձեզ արդեն ասացի, այլևս ոչ մի ցենտ պարտք չեմ։ Ես նրան հինգանոց եմ տվել։

— Հերիք է աչքներիս թող փչեք, փողը դրեք սեղանին։

— Ինչի՞ համար պետք է հինգ դոլլար էլ տամ,— ասում եմ ես, ու ձայնս այնպե՞ս է դողում։— Դուք ուզում եք ինձ կողոպտել։

Մորիսը մինչև վերջ արձակեց բաճկոնի կոճակները։ Դրա տակ կեղծ օձիք էր, առանց վերնաշապկի։ Նա հաստ, մազոտ ու վիթխարի փոր ուներ։

— Ոչ ոք ոչ ոքի չի ուզում կողոպտել,— ասում է նա։— Փողը տվեք, շեֆ։

— Չեմ տա։

Դեռ խոսքը բերանումս՝ նա վեր կացավ ու եկավ ինձ վրա։ Նա այնպիսի տեսք ուներ, ասես սոսկալի հոգնած էր կամ ուղղակի զահլան գնացել էր։ Ծեր ասոված, ինչպե՞ս վախեցա։ Հիշում եմ, ձեռքերս խաչեցի կրծքիս։ Ամենավատն այն էր, որ ես պիժամայով էի։

— Փողը տվեք, շեֆ,— նա կիպ մոտեցավ ինձ։ Անվերջ նույն բանն էր կրկնում։— Ցվեք փողը, շե՛ֆ։— Իսկապե՞ս կրետին։

— Ջե՛մ տա։

— Շեֆ, դուք ինձ համբերությունից հանում եք։ Ստիպված կլինեմ ձեզ հետ կոպտորեն վարվել։ Ջեմ ուզում ձեր քեֆին կպչեմ, բայց երևում է ուրիշ ճար չկա։ Դուք մեզ պարտք եք հինգ դոլլար։

— Ես ոչ մի բան էլ պարտք չեմ,— ասում եմ։— Իսկ եթե մատով կպել եք ինձ, այնպես կգոռամ, որ ամբողջ հյուրանոցը գլխիդ կհավաքեմ։ Ոստիկանությանը, բոլորին ոտքի կհանեմ,— խոսում եմ, բայց ձայնս դոնդողի պես դողում է։

— Դե գոռա՛։ Գոռա՛, ինչքան քեֆդ կտա։ Սկսի՛ր։ Ուզում ես, ծեղոններդ իմանան, որ գիշերն աղջկա հետ ես անցկացրե՞լ։ Հա դեռ լավ ընտանիքի զավակ ես համարվում։— Եա՞ տ խորամանկն էր այդ շան որդին։ Ե՞ա տ

— Ինձ հանգիստ թողեք։ Ուրիշ բան, եթե ասած լինեիք՝ տասը։ Դուք որոշակիորեն ասացիք...

— Փողը տալի՞ս եք, թե չէ,— նա ինձ գեմ տվեց դռանը։ Իր փրչոտ ուտած փորը ուղղակի գցել էր վրաս։

— Հանգիստ թողեք ինձ ու կորեք իմ սենյակից,— ասացի։ Իսկ ինքս ձեռքերս խաչել ու տեղիցս էլ չեմ շարժվում։ Տեր ասոված, ինչպիսի՞ ոչնչություն եմ ես։

Քանկարծ Սանին խոսեց. մինչ այդ նա լուռ էր։

— Լսիր, Մորիս, վերցնե՞մ դրա դրամապանակը։ Այ, այնտեղ է, այն բանի վրա...

— Այո՛, այո՛, վերցրու։

— Արդեն վերցրի,— ասում է Սանին ու ինձ ցույց տալիս հինգ դոլլարանոցը։— Տե՞ս, ավելին չեմ վերցնում, միայն պարտքս։ Ես գող չեմ։ Մենք գող չենք։

Ու հանկարծ ես լաց եղա, չեմ ուզում լալ, բայց լալիս եմ։

— Հա՜, գող չեք։ Հինգ դոլլարը գողանում են ու ասում՝ գող չենք։

— Ջա՛յնդ,— ասում է Մորիան ու գրում ինձ։

— Թող կորչի, լսո՞ւմ ես,— ասում է Սանին։— Արի գնանք։ Մենք մեր պարտքն ստացանք։ Գնա՛նք։ Լսո՞ւմ ես, գնանք այստեղից։

— Գալիս եմ,— ասում է Մորիսը, բայց կանգնած է գեռ։

— Մորիս, լսո՞ւմ ես, ասում եմ, թո՛ղ դրան։

— Իսկ ո՞վ է նրան ձեռք տալիս որ,— պատասխանում է նա անմեղ ձայնով։ Ու հանկարծ այնպե՞ս է հասցնում պիժամայիս։ Ջեմ ասում, թե որ մասիս, բայց սոսկալի ցավ զգացի։ Ես գոռացի, որ նա կեղտոտ, ստոր կրետին է։

— Ի՞նչ ասացիր,— ասում է։ Ու ձեռքը դրել է ականջին ինչպես խուլը։— Ինչ ասացի՞ր։ Ես ո՞վ եմ։

Իսկ ես կանգնած զոռում եմ։ Կատաղությունս գալիս է։ Համբերությունից հանեց ինձ։

— Դու ստո՛ր, կեղտո՛տ կրետին ես,— ասում եմ։— Կեղտոտ կրետին ես, խաբեբա։ Իսկ մի երկու տարի հետո մուրացիկ ես դառնալու, փողոցներում ողորմություն հավաքես։ Բլուզդ փսլնքոտած, կեղտոտ, հոտած ման ես գալու փողոցներում...

Այստեղ նա այնպես հասցրեց, որ չկարողացա մի կողմ թեքվել, սոսկալի հարված զգացի փորիս։

Գիտակցությունս չկորցրի, որովհետև հիշում եմ, հատակին ընկած նայում էի, թե ինչպես գնացին նրանք ու իրենց հևից ծածկեցին դուրս։ Երկար ժամանակ վեր չէի կենում տեղիցս, ինչպես այն ժամանակ Սարեդլեյթերի հետ կռվելուց հետո... Բայց հիմա ինձ թվում էր, թե մեռնում եմ, ազնիվ խոսք։ Թվում էր, թե խեղդվում եմ, շունչս կտրվում էր, չէի կարողանում արտաշնչել։ Իսկ երբ ելա և գնացի լոգարան, չէի կարող նույնիսկ կռանալ, երկու ձեռքով բռնել էի փորս։

Բայց ես, հավանաբար, խենթ եմ, աստված վկա, գիժ եմ ուղղակի։ Լոգարան գնալիս երևակայեցի, թե իբր գնդակ կա աղիքներիս մեջ։ Երևակայեցի, թե Մորիսը կրակել է ինձ վրա։ Ու հիմա գնում եմ լոգարան, որպեսզի մի կում հին վիսկի խմեմ, նյարդերս հանգստացնելու համար, և գործի անցնեմ։

Պատկերացրի, որ դուրս եմ գալիս լոգարանից արդեն հագնված, ատրճանակը ձեռքիս, ու թեթևակի օրորվում եմ։ Ու իջնում եմ աստիճաններով, վերելակ, իհարկե, չեմ նստում։ Գնում եմ բազրիքից բռնած, արյունը կաթում է բերանիս անկյունից։ Ես մի քանի հարկ այդպես ցած կիջնեի փորս բռնած, արյունը կհոսեր հատակի վրա, ու հետո կկանչեի վերելակը։ Ու հենց որ այդ Մորիսը բացեր դուռը, տեսներ ինձ ատրճանակը ձեռքիս, կգոռար սարսափից, վայնասուն կբարձրացներ, որպեսզի ձեռք չտամ իրեն։ Բայց ես նրան ցույց կտայի։ Միանգամից վեց գնդակ կարձակեի նրա ճարպոտ ու փրչոտ փորի մեջ։ Հետո ատրճանակը կնետեի վերելակի հորը, իհարկե, նախապես մաքրելով մատնահետքերս։ Ապա կսողայի իմ համարը ու կզանգահարեի Ջեյնին, որպեսզի նա գար ու կապեր իմ վերքը։ Ու պատկերացնում էի, թե նա ինչպես է սիգարետը բռնել իմ շրթունքների մոտ, իսկ ես ծխում եմ ու արնաքամ լինում։

Անիծյալ կինո։ Այ թե ինչ օրի է գցում մարդուն։ Ինքներդ էլ հասկանում եք...

Ես լոգարանում նստեցի մոտ մի ժամ, լոգանք ընդունեցի, մի քիչ ուշքի եկա։ Հետո անկողին մտա։ Երկար ժամանակ չէի կարողանում քնել,— բոլորովին չէի հոգնել,— բայց ի վերջո քնեցի։ Շատ էի ուզում վերջ տալ կյանքիս։ Պատուհանից դուրս նետվել։ Թերևս դուրս նետվեի, եթե համոզված լինեի, որ որևէ մեկը անմիջապես կմոտենա ու կծածկի ինձ։ Չէի ցանկանա, որ ինչ-որ հետաքրքրասեր ապուշներ հավաքվեն նայելու, թե ես ինչպես եմ բենկած արնաշաղախ վիճակում։

15

Երկար չքնեցի, կարծեմ ժամը տասն էր, երբ արթնացա։ Մի սիգարետ ծխեցի ու անմիջապես զգացի, որ շատ քաղցած եմ։ Բրոսսարի ու էկլիի հետ էգերսթաունում կերած կոտլետից հետո բան չէի կերել։ Դա այնքա՜ն վաղուց էր, ասես տասնհինգ տարի էր անցել։ Հեռախոսը կողքիս էր, ուզում էի զանգահարել ու պատվիրել, որ նախաճաշ մատուցեն համարում, բայց վախեցա, թե այդ վերելակավար Մո-

րիսի հետ կուղարկեն, իսկ եթե կարծում եք, որ երաժշտ էի նրան տեսնել, շատ եք սխալվում։ Պատկել ու սիգարետ էի ծխում։ Ուզում էի զանգահարել Ջեյնին, իմանալ տա՞նն է արդյոք, բայց տրամադրություն չունեի։

Այդ ժամանակ զանգահարեցի Սալլի Հեյսին։ Նա Մերի է. Ուդրոֆի պանսիոնում էր սովորում և դիտեի, որ արդեն տանը կլինի. մի շաբաթ առաջ էի նրանից նամակ ստացել։ Ոչ թե նրա համար գժվում էի, այլ ուղղակի ծանոթներ էինք, ու ես հիմարաբար կարծում էի, թե նա խելացի է։ Այդպես էի կարծում, որովհետև նա շատ-շատ բան գիտեր թատրոնի, պիեսների և ամեն տեսակ գրականության մասին։ Եթե մարդը հարուստ է նման գիտելիքներով, ապա միանգամից դժվար է գլուխ հանել՝ հիմար է նա, թե ոչ։ Ես այդ Սալլի Հեյսից տարիներ շարունակ գլուխ չէի հանում։ Երևի ավելի շուտ գլխի ընկնեի, որ հիմարի մեկն է, եթե այդքան չհամբուրվեի նրա հետ։ Վատն այն է, որ երբ համբուրվում եմ աղջկա հետ, միշտ կարծում եմ, թե նա խելոք է։ Մեկը մյուսի հետ ոչ մի կապ չունի, բայց ես, միևնույն է, այդպես եմ կարծում։

Մի խոսքով, զանգեցի նրան։ Նախ՝ մոտեցավ տնտեսուհին, հետո՝ նրա հայրը։ Վերջապես կանչեցին նրան։

— Դո՞ւ ես, Սալլի,— հարցնում եմ։

— Այո, ո՞վ է խոսում,— հարցնում է նա. շատ ձեռնոցն է, հա՛։ Արդեն հորն ասել էի ով է խոսողը։

— Հոլդեն Քոլֆիլդն է։ Ինչպե՞ս ես։

— Ա՜խ, Հոլդեն։ Շնորհակալություն, լավ եմ։ Դո՞ւ ինչպես ես։

— Հրաշալի։ Լսիր, ինչպե՞ս ես, դպրոցի գործե՞րդ ինչպես են։

— Ոչինչ,— ասում է,— դե ինքդ էլ գիտես։

— Հրաշալի է։ Ահա թե ինչ էի ուզում հարցնել։ Դու ազա՞տ ես։ Ճիշտ է, այսօր կիրակի է, բայց հավանաբար առավոտյան ներկայացումներ կան։ Բարեգործական, թերևս, կուզե՞ս գնալ։

— Շատ եմ ուզում, շա՛տ։ Դա հիասքանչ կլինի։

«Հիասքանչ», զգվում եմ այդպիսի բառերից։ Ի՞նչ զարշելի բան է։ Քիչ էր մնում ասեի, թե մենք ոչ մի տեղ էլ չենք գնա։ Հետո մի քիչ բլբլացինք հեռախոսով, ավելի ճիշտ նա էր բլբլում,-ես լուռ լսում էի։ Նա ոչ մեկին հերթ չի տա խոսելու։ Սկզբում պատմում էր հարվարդցի ինչ-որ պիժոնի մասին,— հավանաբար, առաջին կուրսեցու, բայց դա չէր ասում, իհարկե,— իբր այդ տղան հալվում է իր համար։ Գիշեր-ցերեկ զանգում է իրեն։ Այո, գիշեր-ցերեկ, քիչ էր մնում հոհոային։ Հետո մեկ այլ տիպի մասին, Վետո-Փանթից մի կազետի մասին. սա էլ է պատրաստ ինքնասպան լինել իր համար։ Սոսկալի՜ բան է։ Ես խնդրեցի նրան ժամը ուղիղ երկուսին ինձ սպասել «Բիլթմոր» հյուրանոցի տակ, որովհետև ցերեկային ներկայացումները սկսվում էին երկուսն անց կեսին։ Իսկ նա միշտ ուշանում էր։ Ու հրաժեշտ տվի։ Ձահլաս գնում էր նրանից, բայց նա զարմանալի գեղեցիկ էր։

Պայմանավորվեցի Սալլիի հետ, հետո վեր կացա, հագնվեցի, կարգի բերի ճամպրուկս։ Դուրս գալիս պատուհանից նայեցի տեսնեմ ինչ են անում այդ հոգեկան հիվանդները, բայց նրանք քանձր վարագույրներն իջեցրել էին։ Առավոտյան նրանք համեստից էլ համեստ են։ Հետո վերելակով իջա ու հաշիվս փակեցի դռնապանի հետ։ Բարեբախտաբար, մոբիսը ոչ մի տեղ չերևաց։ Ես առանձնապես չէի էլ ցանում տեսնել այդ սրիկային։

Հյուրանոցի մոտից տաքսի վերցրի, բայց չգիտեի ուր գնամ։ Պարզվում է, գնալու տեղ չունեի։

Օրը կիրակի էր, իսկ ես մինչև չորեքշաբթի չէի կարող տուն գնալ, ծայրահեղ դեպքում մինչև երեքշաբթի։ Իսկ մեկ այլ հյուրանոց գնալ, որպեսզի այնտեղ էլ գլուխս չարգեն՝ չնորհակալ եմ, չեմ ուզում։ Վարորդին պատվիրեցի ինձ տանել Կենտրոնական կայարան։ Դա «Բիլթմոր» հյուրանոցի մոտ էր, որտեղ պետք է հանդիպեի Սալլիին։ Ու որոշեցի այսպես անել։ Իրերս պահպանության հանձնել-փոքրիկ պահարանում, որի բանալին տալիս են ձեռքդ, ապա նախաճաշել։ Շատ էի քաղցած։ Տաքսու մեջ հանեցի դրամապանակս ու հաշվեցի։ Չգիտեմ որքան կար, բայց այնքան էլ շատ չէր։ Երկու շաբաթվա ընթացքում ես բավական շատ էի ծախսել։ Բնույթով սոսկալի շռայլ եմ։ Ինչն էլ որ չեմ վատնում, կորցնում եմ։ Երբեմն մոռանում եմ մանրը վերցնել որևէ

ռեստորանում կամ գիշերային գինետանը։ Մնողներս ուղղակի կատաղում են։ Ես նրանց հասկանում եմ։ Բնև հայրս բավական հարուստ է, չգիտեմ ամսական որքան է վաստակում,— ինձ հետ այդ մասին չի խոսում,— բայց երևի բավական շատ։ Նա կորպորացիայի իրավախորհրդատու է։ Իսկ դրանց փողը բահով են հավաքում։ Գիտեմ, որ հարուստ է, որովհետև միշտ դրամ է ներդնում Բրոդվեյում ինչ-որ ներկայացումների համար։ Այդ ներկայացումները միշտ էլ տապալվում են, ու մայրիկս կատաղությունից իրեն կորցնում է, երբ հայրս դրանց հետ կապի մեջ է մտնում։ Ընդհանրապես մայրիկս Ալլիի մահից հետո շատ է ընկել։ Դրա համար էլ շատ էի վախենում ասել նրան, որ ինձ դարձյալ վտարել են։

Ճամպրուկներս հանձնեցի պահպանության ու մտա կայարանի բուֆետը նախաճաշելու։ Լավ կերա. նարնջահյութ, ապուխտով ձվածեղ, տոստ[1], սուրճ։ Սովորաբար միայն առավոտներն եմ հյութ խմում։ Շատ քիչ եմ ուտում, անչափ քիչ։ Դրանից էլ այսպես նիհար եմ։ Ինձ խորհուրդ են տվել խմրելն շատ ուտել ու նման բաներ, որպեսզի քաշս տեղը բերեմ, բայց մտքովս էլ չէր անցնում։ Երբ որևէ տեղ եմ գնում, սովորաբար շվեցարական պանրով բուտերբրոդ եմ վերցնում ու մի բաժակ կաթնային սուֆլե։ Դատարկ բաներ են դրանք, բայց փոխարենը սուֆլեի մեջ վիտամիններ շատ կան։ Հ. Վ. Քոլֆիլդ։ Հոլդեն Վիտամին Քոլֆիլդ։

Ես ձվածեղ էի ուտում, երբ ներս մտան երկու միանձնուհիներ՝ ճամպրուկներն ու պայուսակները ձեռքներին, երեվի ուրիշ մենաստան էին տեղափոխվում և սպասում էին գնացքին։ Ճամպրուկները վատն էին, էժանագին, ոչ թե կաշվից, այլ այնպես, չգիտես թե ինչից։ Գիտեմ, դա կարևոր չէ, բայց ես տանել չեմ կարողանում էժանագին ճամպրուկները։ Ամոթ է ասելը, բայց ես ահաճությամբ եմ նայում այն մարդուն, որի ճամպրուկները էժանագին են։ Դա ինձ մի դեպք է հիշեցնում։ Երբ սովորում էի Էլբտոն-Հիլլում, ապրում էի Դիկ Սլեգլի հետ մի սենյակում։ Նրա ճամպրուկները անպետք բաներ էին։ Նա դրանք պահում էր իր մահճակալի տակ և ոչ թե դարակի վրա, որպեսզի ոչ ոք չտեսներ դրանք

[1] Բոված, կարմրացրած հացի կտոր։

իմ ճամպրուկների կողքին։ Դրանից ես վատ էի զգում, պատրաստ էի ճամպրուկներս դեն նետել կամ ընդմիշտ փոխել նրա ճամպրուկների հետ։ Իմոնք գնված էին Մարկ Կրոսսի մոտից, իսկական կաշվից էին, բոլոր պարագաներով հանդերձ, և ասված գիտեմ, թե որքան արժեին։ Բայց ահա թե ինչ տարօրինակ բան եղավ։ Մի անգամ ես վերցրի իմ ճամպրուկներն ու խցկեցի մահճակալիս տակ, որպեսզի ծերուկ Սլեգլը ազատվի այդ ոչ լիարժեքության կոմպլեքսից։ Գիտե՞ք նա ինչ արեց։ Նոր էի ճամպրուկները մտցրել մահճակալիս տակ, նա հանեց ու նորից դրեց դարակի վրա։ Միայն հետո հասկացա, թե ինչու այդպես արեց. նա ուզում էր, որ բոլորը կարծեն, թե դրանք իր ճամպրուկներն են։ Այո՛, այո՛, ճիշտ այդպես։ Տարօրինակ տիպ էր։ Միշտ ձեռ էր առնում իմ ճամպրուկները։ Ասում էր, թե չափից դուրս շատ են նոր և խիստ քաղքենիական են։ Դա նրա սիրած բառն էր։ Ինչ-որ տեղ լսել էր ու յուրացրել։ Ինչ որ ունեի, բոլորը «քաղքենիական» էր համարում։ Նույնիսկ ինքնահոսս քաղքենիական էր։ Նա միշտ վերցնում էր ինձնից ու, միևնույն է, էլի քաղքենիական էր համարում։ Մենք ընդամենը երկու ամիս ապրեցինք միասին։ Իսկ հետո երկուսս էլ խնդրեցինք, որ մեզ տեղափոխեն։ Եվ ծիծաղելին այն է, որ, երբ բաժանվեցինք, շատ էի կարոտում նրան, որովհետև նա իսկապես հումորի զգացում ուներ, ու մենք հաճախ էինք լավ զվարճանում։ Իմ կարծիքով, նա էլ ինձ էր կարոտում։ Սկզբում նա միայն ձեռ էր պոնում ինձ, իրերս համարում քաղքենիական, իսկ ես ուշադրություն էլ չէի դարձնում դրա վրա, նույնիսկ ծիծաղում էի։ Բայց հետո տեսա, որ նա չի կատակում։ Բանն այն է, որ դժվար է մի սենյակում ապրել մարդու հետ, եթե քո ճամպրուկները անհամեմատ լավն են, քան նրանը, եթե քո ճամպրուկները իսկապես հրաշալի են, իսկ նրանը՝ ոչ։ Դուք կասեք, եթե մարդը խելացի է և հումորի զգացում ունի, ապա նրա համար՝ թքած։ Դրա համար էլ տեղափոխվեցի այդ բութ անասունի՝ Սարեդլեյթերի մոտ։ Համենայն դեպս, նրա ճամպրուկները իմից վատը չէին։

Մի խոսքով այդ միանձնուհիները նստեցին ինձ մոտ, ու մենք զրույցի բռնվեցինք։ Կողքիս նստածը ծղուրե զամբյուղ ուներ. այդպիսի միանձնուհիները և Փրկության բանակի

կույսերը սովորաբար փող են հավաքում Մննդյան տոների կապակցությամբ։ Միշտ կանգնած են լինում փողոցի անկյուններում, հատկապես՝ Հինգերորդ ավենյուի անկյունում, մեծ խանութների մոտ։ Կողքիս նստածը հանկարծ գցեց զամբյուղը, իսկ ես կռացա ու վերցրի։ Հարցրի, թե բարեգործական նպատակներով հավաքո՞ւմ է։ Նա պատասխանեց՝ ոչ։ Պարզապես զամբյուղը չի տեղավորվել ճամպրուկում, ստիպված ձեռքում է պահում։ Նա այնպես սիրալիր էր ժպտում, նայում էր ու ժպտում։ Քիթը երկար էր և մետաղե շրջանակով ոչ այնքան գեղեցիկ ակնոց էր կրում, բայց դեմքը անասահման բարի էր։

— Ուզում էի ասել, եթե դրամ եք հավաքում, ես էլ կարող էի մի փոքրիկ գումար զոհաբերել,— ասում եմ։— Թաք վերցրեք, երբ հավաքելիս կլինեք, սա էլ կավելացնեք վրան։

— Օ՜, որքան սիրալիր եք դուք,— ասաց նա, իսկ մյուսը՝ նրա ուղեկցուհին, նույնպես նայեց ինձ։ Մյուսը սուրճ էր խմում ու գիրք կարդում, Աստվածաշնչի նման, բայց շատ բարակ մի գրքույկ։ Նախաճաշի համար նրանք միայն տոստով սուրճ էին վերցրել։ Ես հուզվեցի։ Ատում եմ ամեն տեսակ ապխտով ձվածեղն ու մյուս բաները, երբ կողքիդ նստածը միայն տոստով սուրճ է խմում։

Նրանք ինձնից տասը դոլար ընդունեցին։ Անվերջ հարցնում էին, թե ես կարո՞ղ եմ նման բան թույլ տալ։ Ասացի, որ բավականաչափ փող ունեմ, բայց նրանք ինչ-որ չէին հավատում։ Այնուամենայնիվ, փողը վերցրին։ Ու այնպես էին երկուսն էլ շնորհակալություն հայտնում, որ ես վատ զգացի։ Խոսակցության նյութը փոխեցի ու հարցրի, թե ուր են գնում։ Ասացին, որ ուսուցչուհիներ են, եկել են Չիկագոյից, մտադիր են դասավանդել ինչ-որ գիշերօթիկում, չգիտեմ Հարյուրվաթսունութերորդի, թե Հարյուրութսունվեցերորդի վրա, մի խոսքով, ինչ-որ գրողի ծոցում։ Կողքիս նստած ակնոցավորը, պարզվեց, անգլերեն էր դասավանդում, իսկ ընկերուհին՝ պատմություն և ամերիկյան սահմանադրություն։ Ես ուղղակի այրվում էի հետաքրքրասիրությունից, թե այդ ինչպես է, որ անգլերենի ուսուցչուհին միանձնուհի է և, այնուամենայնիվ, որոշ գրքեր է կարդում անգլիական գրականությունից, ոչ թե անվայել գրքեր, ես դրանց մասին չեմ

ասում, այլ գրքեր, որտեղ սեր կա, սիրահարներ, ընդհանրապես նման բաներ։ Վերցնենք, օրինակ, Թոմաս Հարդիի «Վեհաշարժ հայրենիք» գրքի Յուստասիա Վեյին։ Այդտեղ առանձնապես կրքեր չկան, բայց, այնուամենայնիվ, հետաքրքիր է՝ ի՞նչ է մտածում միանձնուհին Յուստասիայի մասին կարդալիս։ Ես, իհարկե, ոչինչ չհարցրի, բայց ասացի որ ամենից լավ անգլիական գրականությունն եմ սովորել։

— Ի՞նչ եք ասում, որքան հաճելի է,— ուրախացավ անգլերենի ուսուցչուհին, ա՛յն, որ ակնոցով էր։— Ի՞նչ եք կարդացել այս տարի։ Շատ հետաքրքիր է իմանալ։

Բարեհամբո՛ւյր, բարի՛։

— Դե, ինչ ասեմ, թերևս ավելի շատ անգլոսաքսերին, գիտե՞ք, Բեովուլֆին, Գրենդելին և «Ռենդալ, որդիս», դե, բոլորը, ինչ պետք էր կարդալ։ Բայց մեզ տնային ընթերցանություն էլ էին հանձնարարում ու դրա համար առանձին գնահատական էին դնում։ Թոմաս Հարդիի «Վերադարձ հայրենիքը», «Ռոմեոն և Ջուլիետը», «Հուլիոս Կես...»

— Ա՜խ, «Ռոմեոն և Ջուլիե՜տը», սքանչելի է, երևի, ձեզ շատ դուր եկավ։— Նա բոլորովին էլ միանձնուհու նման չէր խոսում։

— Այո, շա՜տ-շատ դուր եկավ։ Որոշ բաներ իսկի դուր չեկան, բայց ընդհանրապես շատ հուզիչ է։

— Ձեզ ի՞նչը դուր չեկավ։ Ձե՞ք կարող հիշել, թե հատկապես ինչը։

Անկեղծ ասած, մի տեսակ անհարմար էի զգում նրա հետ քննարկել «Ռոմեոն և Ջուլիետը»։ Չէ՞ որ այդ պիեսում շատ տեղեր կան սիրո և այլ բաների մասին, իսկ նա, համենայն դեպս, միանձնուհի էր, բայց դե ինքը հարցրեց, և ես ստիպված եղա պատմել։

— Գիտե՞ք, ես հիացած չեմ հենց Ռոմեոյով ու Ջուլիետով,— ասում եմ,— այսինքն՝ նրանք ինձ դուր են գալիս, բայց, այնուամենայնիվ... ինքս էլ չգիտեմ, երբեմն ուղղակի վրդովվում եմ։ Ուզում եմ ասել, որ ավելի շատ խղճացի, երբ սպանեցին Մերկուցիոյին, քան երբ մեռան Ռոմեոն և Ջուլիետը։ Հասկանո՞ւմ եք, Ռոմեոն այլևս ինձ դուր չէր գալիս, երբ այդ խեղճ Մերկուցիոյին սուսերով ծակեց Ջուլիետի այդ զարմիկը, մոռացել եմ անունը...

— Տիբալդը։

— Ճիշտ է, Տիբալդը։ Միշտ մոռանում եմ դրա անունը։ Իսկ մեղավորը Ռոմեոն էր։ Ինձ բոլորից շատ այդ Մերկուցիոն է դուր գալիս։ Ինքս էլ չգիտեմ ինչու։ Իհարկե, այդ բոլոր Մոնտեքիներն ու Կապուլետիները նույնպես ոչինչ, հատկապես Ջուլիետը, բայց Մերկուցիոն... Չէ, դժվարանում եմ բացատրել։ Նա այնքան խելացի էր, ուրախ։ Հասկանո՞ւմ եք, կատաղում էմ, որ այդպիսի մարդկանց սպանում են, այդպիսի ուրախ, խելացի մարդկանց, այն էլ ուրիշի մեղքով։ Ռոմեոյի և Ջուլիետի բանն ուրիշ է, նրանք իրենք են մեղավոր։

— Դուք ո՞ր դպրոցում եք սովորում, բարեկամս,— հարցնում է նա. երևի ձանձրացավ Ռոմեոյի և Ջուլիետի մասին լսելուց։

Ասում եմ՝ Փենսիում։ Պարզվում է, նա լսել է այդ դպրոցի մասին։ Ասաց, որ հիանալի դպրոց է։ Ես լռեցի։ Այդ ժամանակ, նրա ընկերուհին, որ պատմություն և սահմանադրություն էր դասավանդում, հիշեցրեց, որ իրենց գնալու ժամանակն է։ Ես վերցրի նրանց չեկը, բայց նրանք քույլ չտվին վճարել իրենց կերածի համար։ Ակնոցավորը չեկը խլեց ձեռքիցս։

— Առանց այդ էլ դուք չափից դուրս ձեռնասուտ գտնվեցիք,— ասաց։— Դուք զարմանալի սիրալիր տղա եք։— Նա ինքը շատ լավն էր։ Մի փոքր հիշեցնում էր Էռնեստ Մորուի մորը, որի հետ ճամփորդել էի գնացքով։ Հատկապես ժպտալիս։— Այնքան հաճելի էր ձեզ հետ զրուցել,— քավելացրեց նա։

Ասացի, որ ինձ համար էլ հաճելի էր, ու չէի ձևացնում։ Բայց շատ ավելի հաճելի կլիներ զրուցել, եթե չվախենայի, որ հանկարծ կարող են ինձ հարցնել, թե կաթոլի՞կ եմ արդյոք։ Կաթոլիկները միշտ ջանք են թափում պարզել՝ կաթոլի՞կ ես դու, թե չէ։ Ինձ հետ հաճախ է պատահում, գլխավորապես այն պատճառով, որ ազգանունս իռլանդական է, իսկ իռլանդացիները մեծ մասամբ ծագումով կաթոլիկ են։ Ի դեպ հայրս էլ առաջ կաթոլիկ է եղել։ Իսկ հետո, երբ ամուսնացել է մորս հետ, թողել է դա։ Բայց կաթոլիկները ընդհանրապես միշտ ջանում են պարզել՝ կաթոլի՞կ ես դու, թե չէ, նույնիսկ եթե ազգանունդ չգիտեն։ Ես մի կաթոլիկ ծա-

նոթ ունեի՝ Լուի Գորմանը, նրա հետ Հուստոնի դպրոցում էի սովորում։ Առաջինը այնտեղ նրա հետ ծանոթացա։ Մենք կողք-կողքի նստած՝ բժշկի մոտ մտնելու համար հերթի էինք սպասում, պարապմունքների առաջին օրն էր, սպասում էինք բժշկական քննության ենթարկվելու և զրուցում էինք թենիսի մասին։ Նա շատ էր տարված թենիսով, ես՝ նույնպես։ Ասում էր, որ ամեն ամռան լինում է Ֆորեստ-Հիլլի մրցումներին, ասացի, որ ես էլ եմ լինում, իսկ հետո սկսեցինք քննարկել, թե ով է լավագույն խաղացողը։ Իր տարիքի համար նա շատ լավ էր գլուխ հանում թենիսից։ Լրջորեն հետաքրքրվում էր։ Իսկ հետո առանց որևէ կապի հարցրեց. «Դու չգիտե՞ս, որտեղ է կաթոլիկական եկեղեցին»։ Նրա տոնից անմիջապես հասկացա, որ ուզում է իմանալ՝ ես կաթոլի՞կ եմ թե ոչ։ Ուզում է իմանալ նվ ոչ թե նախապատվություն էր տալիս կաթոլիկներին, ո՛չ, պարզապես ուզում էր իմանալ։ Նա հաճույքով էր խոսում թենիսի մասին, բայց անմիջապես երևում էր, որ այդ զրույցը նրան ավելի մեծ հաճույք կպատճառեր, եթե իմանար, որ ես կաթոլիկ եմ։ Այդպիսի բաներն ուղղակի կատաղեցնում են ինձ։ Չեմ ուզում ասել, որ դրա պատճառով մեր ամբողջ զրույցը գրողի ծոցը գնաց, չէ, զրույցը շարունակվում էր, բայց մի տեսակ ոչ այնպես։ Ահա թե ինչու ուրախացա, որ միանձնուհիները ինձ չհարցրին՝ կաթոլիկ եմ, թե ոչ։ Գուցեև դա չիսնդարեր մեր զրույցին, բայց, այնուամենայնիվ, ամեն ինչ այլ կերպ կընթանար։ Ես բոլորովին չեմ մեղադրում կաթոլիկներին։ Գուցե, եթե ես էլ կաթոլիկ լինեի, ես էլ հարցնեի։ Ընդհանրապես, սա ինչ-որ չափով նման է ճամպրուկների այն պատմությանը, որ պատմեցի։ Ես միայն ուզում եմ ասել, որ իսկական ջեմ զրույցին նման բաները միայն խանգարում են։ Ուրիշ ոչինչ։

Իսկ երբ միանձնուհիները ոտքի եկան և ուզում էին գնալ, ես հանկարծ մի հիմար անշնորհք արարք թույլ տվի։ Սիգարետ էի ծխում, ու երբ ոտքի եկա, որպեսզի նրանց հրաժեշտ տամ, անզգուշորեն ծուխը փչեցի ուղիղ նրանց աչքերի մեջ։ Միանգամայն անզգուշաբար։ Ժպի պես սկսեցի ներողություն խնդրել, իսկ նրանք շատ սիրալիրությամբ ընդունեցին իմ ներողությունները, բայց միևնույն է, սոսկալի անհարմար բան ստացվեց։

Երբ նրանք գնացին, ես ափսոսացի, որ ընդամենը տասը դոլլար տվեցի բարեգործության համար։ Բայց այլ կերպ հնարավոր չէր. պայմանավորվել էի Սալլի Հեյսի հետ ցերեկային ներկայացում գնալ, դրա համար էլ չպետք է ծախսեի բոլոր փողերս։ Բայց, միևնույն է, վրդովվեցի։ Գրողը տանի այդ փողերին։ Միշտ դրանց պատճառով տրամադրությունդ ընկնում է։

16

Ժամը տասներկուսին մոտ էր, երբ ավարտեցի նախաճաշս, իսկ Սալլիին պետք է հանդիպեի երկուսին, դրա համար էլ որոշեցի մի քիչ զբոսնել։ Այդ երկու միանձնուհիները դուրս չէին գալիս ուղեղիցս։ Անվերջ աչքիս առաջ էր ծղոտե հին զամբյուղը, որով նրանք գնում էին մանրագրամ հավաքելու, երբ դասեր չէին ունենում։ Ջանում էի պատկերացնել, թե ինչպես մայրս կամ մեր ծանոթներից որևէ մեկը, մորաքույրս կամ այդ թեթևսոլիկը՝ Սալլի Հեյսի մայրը, հանրախանութի մոտ կանգնած, փող են հավաքում աղքատների համար, մաշված ծղոտե զամբյուղով։ Նույնիսկ դժվար է պատկերացնել։ Իմ մայրիկին դեռ կարելի է մի կերպ պատկերացնել, իսկ այն երկուսին՝ չէ։ Թեև մորաքույրս հաճախ է զբաղվում բարեգործությամբ (և՛ կարմիր խաչով, և՛ այլ բաներով), բայց նա միշտ հրաշալի հագնված է, երբ բարեգործությամբ է զբաղվում, գարձյալ հրաշալի հագնված է լինում, շրթունքները ներկված ու ամեն ինչ տեղը տեղին։ Ես չէի կարողանում պատկերացնել, որ նա կարող է զբաղվել բարեգործությամբ, եթե հարկ լիներ միանձնուհու պարիգոտ հագնել ու չներկել շրթունքները։ Իսկ Սալլիի մայրի՞կը։ Տեր աստվա՜ծ, նա կհամաձայներ գավաթը ձեռքին շրջել ու փող հավաքել, միայն եթե յուրաքանչյուր փող ավող համաձայներ բծնել նրան։ Իսկ եթե մարդիկ պարզապես փողը գցեին ու թողնեին գնային առանց մի խոսք ասելու, առանց նրան ուշադրության արժանացնելու, ապա նա մի ժամ հետո կհրաժարվեր այդ գործից։ Անմիջապես կձանձրանար։ Գավաթը կհանձներ ու կգնար մի որևէ շքեղ ռեստորանում ճաշելու։ Դրա համար էլ ինձ դուր էին գալիս այդ միանձնուհիները։

Անմիջապես երևում է, որ նրանք երբեք չեն ճաշում շքեղ ռեստորաններում։ Ու տրամադրությունս ընկավ, երբ մտածեցի, որ նրանք երբեք չեն ճաշի շքեղ ռեստորաններում։ Համականում էի, որ դա այնքան էլ կարևոր չէ, բայց միևնույն է, տխրեցի։

Ես Բրոդվեյ գնացի, պարզապես հաճույքի համար, հարյուր տարի կլիներ, որ այնտեղ չէի եղել։ Բացի այդ, գրամոֆոնի ձայնապնակների խանութ էի որոնում, որը կիրակի օրերը բաց է լինում։ Ուզում էի Ֆիբրի համար մի ձայնապնակ գնել՝ «Պատիկ Շերլի Բինգը»։ Այդ ձայնապնակը շատ դժվար էր ճարվում։ Դա մի փոքրիկ աղջնակի մասին է, որն ամաչում է տնից դուրս գալ, որովհետև ատամներն ընկել են։ Ես այդ երգը Փենսիում էի լսել, մի տղայի մոտ, որ ինձնից մի հարկ վերևում էր ապրում։ Ուզում էի նրանից գնել այդ ձայնապնակը, գիտեի, որ՝ իմ Ֆիբին ուրախությունից ուղղակի կգժվի, բայց նա չվաճառեց։ Ծնցող ձայնապնակ էր, թեև արդեն մաշված, քանի տարի առաջ այն երգել էր Նեզրուհի Էսթելա Ֆլետչերը։ Նա երգում էր հարավային ձևով, նույնիսկ փողոցային ձևով, որից երգը բոլորովին նվնվան ու ոչ-ոքա-ձայն չէր դառնում, եթե սովորական սպիտակամորթ երգչուհի երգեր, հավանաբար, կնվնվար, բայց այդ Էսթելա Ֆլետչերը իր գործը գիտեր։ Կյանքումս նման հրաշալի ձայնապնակ չեմ լսել։ Որոշեցի, որ ձայնապնակը կգնեմ մի որևէ խանութում, որտեղ կիրակի օրերին էլ են առևտուր անում, իսկ հետո կտանեմ զբոսայգի։ Կիրակի օրերին Ֆիբին հաճախ է գնում զբոսայգի, այնտեղ շմուշկներով սահում է։ Գիտեի որտեղ է լինում սովորաբար։

Եղանակն ավելի տաքացավ, քան երեկ, բայց արևը չէր երևում, և զբոսնելն այնքան էլ հաճելի չէր։ Ինձ միայն մի բան էր դուր գալիս։ Իմ առջևից մի ամբողջ ընտանիք էր քայլում, հավանաբար, հկեղեցուց էին դուրս եկել, հայրը, մայրը և մոտ վեց տարեկան մի տղա։ Երևում էր, որ բավական աղքատ էին։ Հոր գլխին բաց գորշագույն շլյապա էր. նման գլխարկներ աղքատներն էին կրում, երբ ցանկանում էին զարդարվել։ Նա քայլում էր կնոջ հետ ու զրուցում, իսկ տղայի վրա ոչ մի ուշադրություն չէին դարձնում։ Իսկ տղան հիանալի երեխա էր։ Նա քայլում էր ոչ թե մայթով, այլ

մայթեզրի երկարությամբ սալարկի վրայով։ Նա ջանում էր ուղիղ գծի վրայով քայլել. երեխաները սիրում են այդպես քայլել։ Գնում էր ու իր համար քթի տակ երգում։ Ես դիտմամբ շատ մոտեցա, որպեսզի լսեմ ինչ է երգում։ Նա այսպիսի երգ էր երգում. «Եթե դու մեկին բռնել ես երեկոյան տարեկանի արտում...» Զայնն էլ շատ հետաքրքիր էր։ Երգում էր սեփական հաճույքի համար, դա պարզ զգացվում էր։ Մեքենաներն անցնում են կողքից, արգելակում այնպես, որ ճռնչում են արգելակները, ծնողները ոչ մի ուշադրություն չեն դարձնում, իսկ նա իր համար քայլում է ճամփեզրով ու երգում. «Երեկոյան տարեկանի արտում...» Տրամադրությունս բարձրացավ։

Բրոդվեյում մարդիկ հրմշտում էին իրար, աղմկում։ Կիրակի էր, բոլորը գնում էին կինո «Պարամաունտ» կամ «Աստոր», «Սթրենդ» կամ «Կապիտոլի», մի խոսքով, որևէ մարդաշատ վայր։ Բոլորը զարդարվել էին։ Կիրակի էր։ Ու դա ավելի զզվելի էր։ Իսկ ամենազզվելին այն էր, որ ա ն հ ա մ բ ե ր շ տ ա պ ու մ էի ն կինո։ Նրանց նայելուց սիրտ էր խառնում։ Ես դեռ հասկանում եմ, երբ կինո են գնում անգործությունից, բայց զզվելի է մտածել, որ մարդիկ վազում են, շտապում, որովհետև իսկապես ո ւ զ ո ւ մ ն ն կինո ընկնել։ Հատկապես, երբ միլիոնավոր մարդիկ հերթի են կանգնել մի ամբողջ թաղամաս երկարությամբ, որպեսզի տոմս գնեն, ինչպիսի՞ համբերություն է հարկավոր։ Ես չկարողացա սպասել, այնպես էի ուզում հեռանալ այդ անիծյալ Բրոդվեյից։

Բայց իմ բախտը բերեց։ Դրամձայնապնակների առաջին իսկ խանութում ես ձեռք բերի «Պատլիկ Շերլի Բինզը»։ Հինգ դոլար պոկեցին ինձնից, հազվադեպ ձայնապնակ էր, ես չափսոսացի։ Այնպես ուրախացա, որ չէի դիմանում, ուզում էի շուտ հասնել զբոսայգի և ձայնապնակը տալ քրոջս։

Դուրս եկա խանութից։ Մի սրճարան պատահեց, ներս մտա։ Մտածեցի՝ չզանգահարե՞մ Ջեյնին, գուցե նա արդեն տուն է վերադարձել արձակուրդին։ Մտա ավտոմատ ու զանգահարեցի։ Դժբախտաբար, հեռախոսին մոտեցավ մայրը, ստիպված եղա կախել լսափողը։ Երկար-բարակ խոսելու տրամադրություն չունեի։ Առհասարակ չեմ սիրում աղջիկներ

րի մայրերի հետ խոսել։ Այնուամենայնիվ, հարկավոր էր հարցնել, թե տա՞նն է արդյոք Ջեյնը։ Դրանից ես չէի մեռնի, բայց, չգիտեմ ինչու, չուզեցի։ Այդպիսի խոսակցությունների համար տրամադրություն է պահանջվում։

Սակայն հարկավոր էր այդ անիծյալ թատրոնի տոմս ճարել, ստիպված եղա թերթ գնել և նայել, թե որտեղ ինչ է գնում։ Կիրակի օրվա կապակցությամբ բեմադրվում էին միայն երեք պիես։ Ես մոտեցա և երկու տոմս գնեցի «Ես գիտեմ սերը» ներկայացման համար։ Բարեգործական ներկայացում էր հօգուտ ինչ-որ բանի։ Առանձնապես ցանկություն չունեի այդ պիեսը դիտելու, բայց գիտեի, որ Սալլին ապրել չի կարող առանց կոտրատվելու, անպայման հիացմունք կարտահայտի, երբ ասեմ, որ պիեսում մասնակցում են Լանտերը[1]։ Սալլին պաշտում է լուրջ և նրբաճաշակ համարվող պիեսները, Լանտերի մասնակցությամբ և այլն։ Իսկ ես չեմ սիրում։ Ընդհանրապես, անկեղծ ասած ես այնքան էլ չեմ սիրում թատրոն գնալ։ Իհարկե, կինոն ավելի վատ է, բայց դե թատրոնում էլ ոչ մի լավ բան չկա։ Նախ՝ ես ատում եմ դերասաններին։ Նրանք բեմի վրա իրենց բոլորովին մարդու նման չեն պահում։ Միայն երևակայում են, թե նման են։ Լավ դերասանները երբեմն բավական նման են լինում, բայց ո՛, այնքան, որ հետաքրքիր լինի նայել։ Բացի այդ էլ, եթե դերասանը լավն է, անմիջապես երևում է, որ նա այդ բանը գիտակցում է, իսկ դա անմիջապես փչացնում է ամեն ինչ։ Վերցնենք, օրինակ, սըր Լոուրենս Օլիվյեին[2], ես նրան տեսել եմ «Համլետում»։ Դ. Բ-ն անցյալ տարի ինձ ու Ֆիբիին տարավ նայելու։

Սկզբում նա մեզ տարավ նախաճաշելու, իսկ հետո՝ կինու։ Նա արդեն տեսել էր «Համլետը» ու նախաճաշի ժամանակ այնպես էր պատմում դրա մասին, որ ես մեծ ցանկություն ունեցա դիտելու։ Բայց ընդհանրապես ինձ դուր չեկավ։ Ջեմ հասկանում, ի՞նչ մի առանձնահատուկ բան կա այդ լոու-

---

1. Ալֆրեդ Լանտը և նրա տիկին Լին Ֆոնտանը ԱՄՆ-ի հանրահայտ դրամատիկ դերասաններ են։

2 Անգլիացի նշանավոր արտիստ, որ նկարահանվել է բազմաթիվ ֆիլմերում։

բենս Օլիվյեի մեջ։ Զայնը ցնցող է, նա լափից դուրս գեղեցիկ է, և հաճելի է նրան նայել, երբ քայլում է կամ մենամարտում, բայց բոլորովին այնպիսին չէր, ինչպիսին Դ. Բ-ի ասելով պետք է լիներ Համլետը։ Նա ավելի շատ նման էր մի որևէ գեներալի, քան մի քիչ խախտված տարօրինակություններով մարդու։ Այդ ֆիլմում ինձ ամենից շատ դուր էր գալիս այն մասը, երբ Օֆելյայի եղբայրը, նա, որ վերջում մենամարտում է Համլետի հետ, մեկնում է, իսկ հայրը նրան բազմապիսի խորհուրդներ է տալիս. մինչ հայրը նրան տալիս է այդ խորհուրդները, Օֆելյան ամբողջ ընթացքում խաղում է, մեկ նրա դաշույնն է դուրս քաշում պատյանից, մեկ ծաղրում է նրան, իսկ նա ջանում է ձևացնել, թե ուշադիր լսում է հիմար խորհուրդները։ Այդ մասը շատ լավ էր։ Ինձ շատ դուր եկավ։ Բայց նման տեղեր քիչ կային։ Իսկ քրոջս՝ Ֆիբիին, դուր էր եկել միայն, երբ Համլետը շոյում է շանը։ Նա ասաց՝ ի՜նչ հետաքրքիր է, ի՜նչ լավ շուն է, և իսկապես շատ լավ շուն էր։ Այնուամենայնիվ, ստիպված կլինեմ կարդալ «Համլետը»։ Վատն այն է, որ պիեսը անպայման պետք է կարդամ ինքս ինձ համար։ Երբ դերասանը խաղում է, ես գրեթե բան չեմ լսում։ Անընդհատ վախենում եմ, որ նա հիմա կսկսի ծոմովել ու ընդհանրապես ամեն ինչ անել ցուցադրաբար։

Լանտերի մասնակցությամբ ներկայացման տոմսեր գնեցի, հետո տաքսի նստեցի ու գնացի զբոսայգի։ Հարկավոր էր մետրոյով գնալ, մոտս քիչ փող էր մնացել, բայց դե ուզում էի որքան հնարավոր է շուտ ազատվել այդ երիցս անիծյալ Բրոդվեյից։

Զբոսայգում գարշելի էր։ Այնքան էլ ցուրտ չէր, բայց արևը դուրս չէր գալիս, և շուրջն առհասարակ ոչ ոք չկար՝ միայն շների ոտնահետքեր էին, թքահետքեր ու մեկ էլ ծխախոտի մնացորդներ այն նստարանների մոտ, որոնց վրա ծերունիներ էին նստել։ Թվում էր, թե բոլոր նստարանները ամբողջովին թաց են, ու եթե նստես, խոնավությունը կներծծվի քո մեջ։ Ես շատ տխուր էի, նույնիսկ երբեմն դող էր անցնում մարմնովս։ Բոլորովին չէր զգացվում, թե շուտով սկսվելու են Մննդյան տոները, ընդհանրապես թվում էր, թե երբեք այլևս ոչինչ չի լինելու։ Այնուամենայնիվ, ես հասա վաղքուղուն։ Ֆիբին միշտ այնտեղ է գնում. նա սիրում է նվագախմբին մոտիկ սահել։ Միծաղելի է, որ ես էլ էի սիրում այնտեղ սահել, երբ փոքրիկ էի։

Բայց երբ մոտեցա վազքուղուն, Ֆիբին այնտեղ չէր։ Ինչ-որ երեխաներ կային, որ սահում էին, տղաները գնդակ էին խաղում, բայց Ֆիբին չկար։ Հանկարծ ես մի աղջնակ տեսա նրա տարիքին, նստարանին նստած՝ չմուշկներն էր ամրացնում։ Մոտեցի, գուցե ճանաչում է Ֆիբիին և կասի, թե նրան որտեղ փնտրեմ, ու մոտեցա նստեցի կողքին։

— Պատահմամբ դու չե՞ս ճանաչում Ֆիբի Քոլֆիլդին։

— Ո՞ւմ,— հարցնում է։ Նրա հագին տաբատ էր և մի քսան հատ սվիտեր։ Երևում էր, որ նրա սվիտերները տանն էին գործում, այնպես անճոռնի էին, մեծ-մեծ։

— Ֆիբի Քոլֆիլդին։ Ապրում է Յոթանասունմեկերորդ փողոցում, Չորրորդ դասարանում է սովորում։

— Իսկ դուք ճանաչո՞ւմ եք Ֆիբիին։

— Դե, իհարկե։ Ես նրա եղբայրն եմ։ Չգիտե՞ս որտեղ է նա։

— Նա միսս Քելլոնի դասարանի՞ց է։— հարցնում է աղջիկը։

— Չգիտեմ։ Կարծեմ, այո։

— Նշանակում է, հիմա նրանք Բանգարանում են։ Մեր դասարանը անցյալ շաբաթ է գնացել։

— Ո՞ր Բանգարանում,— հարցնում եմ։

Նա ուսերն է թոթվում։

— Չգիտեմ,— ասում է,— պարզապես Բանգարանում։

— Հասկանում եմ, բայց դա այն Բանգարանո՞ւմ է, որտեղ նկարներ են, թե՞ որտեղ հնդկացիներ են։

— Որտեղ հնդկացիներ են։

— Շատ շնորհակալություն։

Ես ելա, ուզում էի գնալ, բայց հանկարծ հիշեցի, որ այսօր կիրակի է։

— Ախր այսօր կիրակի է,— ասում եմ ես այդ աղջկան։ Նա նայեց ինձ։

— Լհը՛։ Ուրեմն այնտեղ չեն։

Նրան ոչ մի կերպ չէր հաջողվում ամրացնել չմուշկը։ Ձեռնոցներ չուներ, թաթիկները կարմրել էին, սառել։ Ես

օդնեցի պատել չմուշկը։ Գրողը տանի, հարյուր տարի կլինի, բանալին ձեռքս չեմ առել։ Բայց դա ոչինչ չի նշանակում։ Հիսուն տարի հետո էլ կարելի է չմուշկի բանալին իմ ձեռքը տալ, թեկուզ խավարում, ու ես անմիջապես կիմանամ, թե դա ինչ բան է։ Աղջիկը շնորհակալություն հայտնեց, որ ամբարցրի չմուշկը։ Քաղաքավարի աղջիկ էր, բարեհամբույր։ Շատ հաճելի բան է, երբ այդպիսի փոքրիկին օգնում ես ամրացնել չմուշկը, ու նա քիչ ասում է՝ «շնորհակալություն», այնպես քաղաքավարությամբ, սիրալիր։

Փոքրիկներն առհասարակ բոլորն էլ շատ լավն են։ Ես նրան հարցրի, թե չի՞ ուզում արդյոք տաք շոկոլադ խմել, նա պատասխանեց՝ շնորհակալություն, չեմ ուզում։ Ասաց, որ ընկերուհին սպասում է իրեն։ Այդ փոքրիկներին միշտ որևէ մեկն սպասում է։ Շատ հետաքրքիրն են։

Թեև օրը կիրակի էր ու Ֆիբրին իր դասարանի հետ թանգարան չէր գնացել, ու թեև գարշելի եղանակ էր, խոնավ, այնուամենայնիվ, ես ամբողջ ըբոսայդու երկարությամբ գնացի դեպի ազգագրական թանգարան։ Դրա մասին էր ասում աղջնակը։ Ես այդ թանգարանային էքսկուրսիաներն անգիր գիտեի։ Ֆիբրին սովորում էր այն նույն տարրական դպրոցում, որտեղ հաճախում էի ես փոքր ժամանակս, ու մենք միշտ գնում էինք այդ թանգարանը։ Մեր ուսուցչուհի միսս էլիսինգերը գրեթե ամեն շաբաթ օր մեզ տանում էր այնտեղ։ Երբեմն կենդանիներ էինք նայում, երբեմն հնդկական զանազան իրեր՝ ամանեղեն, ծղոտե զամբյուղներ և այլ շատ բաներ։ Նույնիսկ հիմա էլ հաճույքով եմ հիշում այդ թանգարանը։ Հիշում եմ, թե ինչպես հնդկական իրերի դիտումից հետո մեզ համար որևէ կինոնկար էին ցուցադրում մեծ լսարանում։ Կոլումբոսի մասին։ Սովորաբար ցույց էին տալիս, թե Կոլումբոսն ինչպես հայտնագործեց Ամերիկան, թե ինչպես տանջվեց, մինչև որ կարողացավ Ֆերդինանդից ու Իզաբելլայից փող պոկել նավերի համար, իսկ հետո նավաստիները խռովություն բարձրացրին նրա դեմ։

Կոլումբոսն առանձնապես ոչ ոքի չէր հետաքրքրում, բայց երեխաներն իրենց հետ սառնաշաքար ու ծամոն էին բերում, և դահլիճում հրաշալի բուրմունք էր տարածվում։ Այնպիսի բուրմունք, ասես դրսում անձրև էր տեղում (թեև գուցե անձրև

չկար էլ), իսկ դու նստած ես այդտեղ, ու դա աշխարհիս միակ չոր ու տաքուկ անկյունն է։ Շատ էի սիրում այդ հիմար թանգարանը, ազնիվ խոսք։ Հիշում եմ, նախ մենք անցնում էինք հնդկական դահլիճով, հետո մտնում լսարան։ Դա մի հսկայական երկարուկ լսարան էր, և խոսելիս պետք է շշընջայիր։ Ուսուցչուհին գնում էր առջևից, իսկ ամբողջ դասարանը նրա ետևից։ Գնում էինք զույգերով։ Ես էլ իմ զույգն ունեի։ Սովորաբար ինձ հետ կանգնեցնում էին մի աղջկա, որի անունը Գերտրուդա Լեվինա էր։ Նա միշտ բռնում էր ձեռքս, իսկ նրա ձեռքը խոնավ ու կպչուն էր։ Դահլիճի հատակը քարից էր, ու եթե փոքրիկ խճաքարեր էիր ունենում ու հանկարծ գցում էիր ձեռքիցդ, դրդոցն աշխարհ էր բրռնում, և ուսուցչուհին կանգնեցնում էր ամբողջ դասարանն ու մոտենում տեսնելու, թե ինչ է պատահել։ Բայց երբեք չէր բարկանում մեր միսս էլլեսինգերը։ Հետո մենք անցնում էինք հնդկական երկարուկ նավակի մոտով, որ երեք «կադիլակից» ավելի երկարություն կունենար, եթե դրանք շարեին իրար ետևից։ Նավակում կային մոտ քսան հնդկացիներ, ոմանք թիավարում էին, ոմանք պարզապես կանգնած էին, նրանք կատաղի տեսք ունեին ու բոլորի դեմքերն էլ ներկված էին։ Իսկ նավախելին նստած էր դիմակով մի սարսափելի տիպ։ Դա նրանց կախարդն էր։ Նրան նայելիս ես փշաքաղվում էի, բայց, այնուամենայնիվ, նա ինձ դուր էր գալիս։ Եվ հետո, երբ անցնելիս ձեռք ես տալիս ասենք թիակին կամ մի որևէ այլ բանի, հսկիչն անմիջապես ասում է. «Երեխաներ, չի կարելի ձեռք տալ ոչ մի բանի»,— բայց նրա ձայնը բարի է և ոչ թե ինչ-որ ոստիկանի ձայնի նման։ Այնուհետև անցնում էինք ապակեպատ վիթխարի ցուցափեղկի մոտով, որտեղ հնդկացիները նստած փայտի կտորներ էին շփում, որպեսզի կրակ ստանան, իսկ մի հնդկուհի էլ գորգ էր գործում։ Այդ կինը, որ գորգ էր գործում, կուացել էր, ու երևում էր կուրծքը։ Մենք բոլորս նայում էինք նրան, նույնիսկ աղջիկները. նրանք դեռևս փոքրիկ էին ու դեռևս կուրծք չունեին, ինչպես տղաները։ Իսկ անմիջապես լսարանի դռան մոտ դրված էր էսկիմոսը։ Նա նստած էր լճի սառցանցքի մոտ և ձուկ էր որսում։ Սառցանցքի կողքին ընկած էին նրա բռնած երկու ձկները։ Որքա՜ն այդպիսի ցուցափեղկեր կային այդ

թանգարանում։ Իսկ վերին հարկում ավելի շատ կային. այնտեղ եղջերուները չուր էին խմում առավոտից, թռչունները չվում էին հարավ՝ ձմեռելու։ Ավելի մոտ գտնվող թռչունները խըրտվիլակներ էին, մետաղալարերից կախված, իսկ հեռվում գըտնըվողները պարզապես նկարված էին պատի վրա, քայց թվում էր, թե բոլորն էլ իրականում թռչում են դեպի հարավ։ Բայց այդ թանգարանում ամենալավն այն էր, որ ամեն ինչ մնում էր իր տեղում։ Ջէր շարժվում։ Կարելի էր հազար անգամ էլ գալ, և էսկիմոսը միշտ էլ ձուկ էր բռնում ու երկուսն արդեն բռնել էր, թռչունները թռչում էին հարավ, եղջերուները չուր էին խմում առվից և նրանց եղյուրներըը միշտ այնպես գեղեցիկ էին, իսկ ոտքերն այնպես բարակ, և այդ մերկ կուրծք հնդկուհին միշտ գործում հա գործում էր միևնույն գորգը։ Ոչինչ չէր փոխվում։ Փոխվում ես միայն ինքդ։ Եվ ոչ թե այնպես, որ միանգամից մեծանում ես։ Ջէ, դա չէ։ Դու փոխվում ես, և ուրիշ ոչինչ։ Մեկ նոր վերարկու ես հագել, մեկ ուրիշ ընկերոջ հետ ես եկել, որովհետև նախորդ ընկերդ հիվանդացել է քութեչով։ Կամ միսս էգլետինգերի փոխարեն մեկ այլ ուսուցիչ է առաջնորդում ձեզ թանգարան, կամ առավոտյան լսել ես, թե հայրիկդ ու մայրիկդ ինչպես էին վիճում լոգարանում, կամ փողոցում չրափոս ես տեսել, որի վրա տարածվել էին բենզինի երիփներանգ բծերը։ Մի խոսքով, դու ինչ-որ չափով այլևս այն չես. ես չեմ կարող ինչպես հարկն է բացատրել, թե հատկապես ինչ։ Իսկ գուցեև կարող եմ, բայց չեմ ուզում։

Ճանապարհին գրպանիցս հանեցի որսորդական գլխարկս ու քաշեցի գլուխս։ Գիտեի, որ ծանոթ մարդու չեմ հանդիպելու, և շատ խոնավ էր եղանակը։ Ես քայլում էի, քայլում ու մտածում, թե քույրիկս շաբաթ օրերը ինչպես է գնում նույն թանգարանը, որ ես էլ եմ գնացել։ Մտածեցի, որ հիմա նա դիտում է նույն բաները, ինչ որ ես եմ դիտել, ու ամեն անգամ նա փոխվում է, դառնում ուրիշ մարդ։ Այդ մտքերից ոչ թե ավելի շատ ընկավ տրամադրությունս, այլ այդ ամենի մեջ առհասարակ շատ քիչ ուրախ բան կար։ Լավ կլիներ որոշ բաներ առհասարակ չփոխվեին։ Լավ կլիներ դրանք դնել ապակեպատ ցուցափեղկում ու ձեռք չտալ։ Գիտեմ, որ դա անհնար է, բայց հենց դա էլ վատ է։ Ես ամբողջ ժամանակ

դրա մասին էի մտածում, քանի դեռ ման էի գալիս դրոսաշրջում։

Անցնելով խաղահրապարակի մոտով՝ ես կանգ առա ու նայեցի, թե երկու փոքրիկներ ինչպես էին ճոճվում տախտակի վրա։ Մեկը չաղլիկ էր, դրա համար էլ ես բռնեցի տախտակի այն ծայրից, որտեղ նիհարիկն էր նստած, որպեսզի նրանց հավասարակշռեմ, բայց անմիջապես էլ զգացի, որ խանգարում եմ, ու հեռացա։

Իսկ հետո շատ հիմար բան ստացվեց։ Մոտեցա թանգարանին ու անմիջապես զգացի, որ ոչ մի տեսակ փողով ես այնտեղ չեմ կարող գնալ։ Ջէր քաշում ինձ, և վերջ, մինչդեռ կարել անցել էի ամբողջ դրոսայգին ու այնպե՞ս սպասել դրան։ Իհարկե, կթե Ֆիբին այնտեղ լիներ, կմտնեի, բայց նա այնտեղ չէր։ Եվ ես տաքսի վերցրի թանգարանի մոտից ու գնացի «Բիլթմոր» հյուրանոցը։ Տրամադիր չէի գնալու, բայց արդեն պայմանավորվել էի Սալլիի հետ։

17

Ես շատ շուտ հասա հյուրանոց, նստեցի կաշվե բազմոցին, ժամացույցի տակ, ու սկսեցի նայել աղջիկներին։ Շատ պանսիոններում ու քոլեջներում արդեն սկսվել էր արձակուրդը, և հոլլում հարյուրավոր աղջիկներ էին հավաքվել, սպասում էին իրենց կավալերներին։ Ոմանք նստել էին ոտքը ոտքին գցած, ոմանք՝ ուղիղ, ոմանք հրաշալի ոտքեր ունեին, ոմանք՝ այլանդակ, ոմանք հաճելի տեսք ունեին, ոմանց վրայից էլ անմիջապես երևում էր, որ տականք են, բավական է միայն մոտենալ։ Ընդհանրապես հաճելի էր նայել նրանց, դուք ինձ հասկանո՞ւմ եք։ Հաճելի էր ու նաև տխուր, որովհետև ամբողջ ժամանակ մտածում ես. իսկ ի՞նչ է լինելու սրանց բոլորի վերջը։ Ասենք ավարտեցին իրենց քոլեջները, պանսիոնները։ Ես կարծում էի, որ դրանց մեծ մասը կամուսնանա ինչ-որ գարշելի տիպերի հետ։ Այնպիսի տիպերի, որոնք հենց միայն գլուխ գովել գիտեն, թե ժամում քանի մղոն կարող են կարել իրենց հիմար մեքենայով, այդ ընթացքում ծախսելով ընդամենը մեկ գալոն վառելանյութ։ Այնպիսի տիպերի հետ, որոնք երեխայի պես խոովում են,

երբ նրանց տանում ես ոչ միայն գոլֆում, այլև պինգ-պոնգի նման հիմար խաղում։ Շատ ստոր տիպերի հետ։ Այնպիսի տիպերի հետ, որոնք կյանքում մի գիրք էլ չեն կարդացել։ Սոսկալի ձանձրալի տիպերի հետ։ Ասենք, դա հարաբերական հասկացողություն է, թե ում կարելի է ձանձրալի համարել, ում՝ ոչ։ Ես դրանից բան չեմ հասկանում։ Իսկապես, չեմ հասկանում։ Երբ սովորում էի էլբռոն-հիլլում, երկու ամիս ապրեցի մի տղայի հետ, որին անվանում էին Հարրիս Մաքլին։ Նա շատ խելացի տղա էր, բայց նրանից ավելի ձանձրալի մարդ աշխարհը դեռ չի տեսել։ Նա սոսկալի ճռճռան ձայն ուներ ու ամբողջ ժամանակ խոսում էր։ Եվ ամենասոսկալին այն էր, որ երբեք որևէ հետաքրքիր բանի մասին չէր խոսում։ Բայց մի բան շատ լավ էր կարողանում։ Այդ սատանան չտեսնված սուլում էր։ Անկողինն էր կարդի բերում, թե իրերը կախում պահարանում (նա իրերը միշտ կախում էր պահարանում ու ինձ կատաղեցնում), մի խոսքով, որևէ բան էր անում ու հետո էլ սուլում, ոնց իհարկե, գլուխդ չէր տանում իր ճռճռան ձայնով։ Նա նույնիսկ դասական երաժշտություն էր կարողանում սուլել, բայց ամենից լավ ջազ էր սուլում։ Մի որևէ չափից դուրս աշխույժ ջազ էր սուլում, ասենք՝ «Բլյուզ տանիքի վրա», ու իր լաթերը կախ տալիս կախարանից, այնպես հրաշալի էր սուլում, որ ուղղակի քեֆդ գալիս էր։ Իհարկե, ես երբեք նրան չէի ասում, թե լավ է սուլում։ Հո մարդու երեսին չես ասի՝ «Դու հրաշալի ես սուլում»։ Ջնաջած ուղղակի զահլաս գնում էր, բայց դե էլի ամբողջ երկու ամիս ապրեցի նրա հետ և դա այն պատճառով, որ կյանքումս նման սուլողի չեմ հանդիպել։ Այնպես որ դեռ հարց է, թե ո՞վ է ձանձրալի, ով՝ չէ։ Գուցե չարժի ափսոսալ, երբ մի լավ աղջիկ ամուսնանում է որևէ ձանձրալի տիպի հետ, քանհանրապես դրանք բավական անմեղ բաներ են, իսկ գուցեև նրանք առանձին եղած ժամանակ կարողանում են հրաշալի սուլել կամ մի որևէ այլ բան։ Ո՛վ գիտե, դա իմ խելքի բանը չէ։

Վերջապես աստիճանների վրա հայտնվեց իմ Սալլին, ու ես ընդառաջ գնացի նրան։ Որքա՜ն գեղեցիկ էր նա։ Ազնիվ խոսք։ Սև վերարկուով և ինչ-որ սև բերետով։ Սովորաբար նա գլխաբաց էր ման գալիս, բայց բերետը շատ էր սազում

նրան։ Սիծաղելի է, հենց որ նրան տեսա, ցանկացա հետը ամուսնանալ։ Չէ, այնուամենայնիվ, ես աննորմալ եմ։ Նա նույնիսկ շատ չէր դուր գալիս ինձ, իսկ այդ պահին զգացի, որ սիրահարված եմ և պատրաստ եմ նրա հետ ամուսնանալ։ Աստված վկա, ես աննորմալ եմ, ինքս եմ խոստովանում։

— Հոլդե՞ն,— ասում է,— որքա՜ն ուրախ եմ։ Հարյուր տարի կլինի չենք հանդիպել։— Սոսկալի բարձր է խոսում, նույնիսկ անհարմար է լինում, երբ նրա հետ որևէ տեղ հանդիպում ես։ Նրա համար դա ոչ մի նշանակություն չուներ, որովհետև այնքա՜ն գեղեցիկ էր, բայց շփոթմունքից իմ աղիքները ոլորվեցին։

— Ուրախ եմ քեզ տեսնելուս համար,— ասացի ես ու չէի ասում, աստված վկա։— Հը, ինչպե՞ս ես։

— Հրաշալի, չտեսնված։ Հո չե՞մ ուշացել։

Չէ, ասում եմ, բայց, իսկապես, նա մի տասը րոպե ուշացել էր։ Բայց ինձ համար դա նշանակություն չուներ։ Բոլոր այդ դատարկ-մատարկ բաները, «Սեթերդեյ Իվնինգ պոստի» բոլոր ծաղրանկարները, որ պատկերում են, թե տղան ինչպես է խեղճ-խեղճ կանգնել անկյունում, որովհետև աղջիկն ուշացել է տեսակցությունից, հնարովի բաներ են։ Թե տեսակցության է գալիս գեղեցիկ աղջիկը, ապա ո՞ւմ տրամադրությունը կբնկնի, թե նա ուշացել է՝ ոչ ոքի։

— Հարկավոր է գնալ,— ասում է,— ներկայացումն սկըսվում է երկուսն անց քառասուն։

Մենք աստիճաններով իջանք տաքսիների կայան։

— Ի՞նչ ենք նայելու,— հարցրեց նա։

— Չգիտեմ։ Լանտերին էլ ուրիշ տոմսեր չկարողացա ճարել։

— Ախ, Լանտերի՞ն։ Սքանչելի՜ է։

Ասացի, չէ՞, որ նա գժվում է, երբ լսում է Լանտերի՝ անունը։

Մենք մի քիչ պայպլվեցինք տաքսու մեջ։ Սկզբում նա չէր ուզում, որովհետև վախենում էր շրթնաներկը լղոզվի, բայց ես ինձ պահում էի իսկական գայթակղողի նման, ու նա ստիպված եղավ տեղի տալ։ Երկու անգամ, երբ մեքենան արգելակեց լուսաֆորի առաջ, քիչ մնաց ես ընկնեի։ Անիծյալ վարորդներ, երբեք չեն նայում, թե ինչ են անում։ Երդվում

եմ, վարել չգիտեն։ Բայց ուզո՞ւմ եք իմանալ, թե որ աստիճան խենթ եմ ես։ Հենց որ ամուր փաթաթվեցինք, ես նրան ասացի, որ սիրում եմ և նման բաներ։ Իհարկե, դա փչոց էր, բայց աղն էլ հենց այն է, որ այդ պահին ես էլ համոզված էի դրանում։ Ջէյ, ես աննորմալ եմ։ Աստված վկա, դիժ եմ։

— Ա՛խ, սիրելիս, ես էլ քեզ եմ սիրում,— ասում է Սալլին ու անմիջապես էլ ավելացնում։— Միայն թե խոստացիր, որ մադիկը կերկարացնես, հիմա ոդնաձև սանրվածքը մոդայից դուրս է եկել, իսկ քո մազիկները սքանչելի են։

«Մադիկնե՞ր»— պայթել կարելի է։

Ներկայացումն այն անպետքներից չէր, որոնք ես առաջներում տեսել էի։ Բայց դե սա էլ մի բան չէր։ Ինչ-որ ծեր ամուսինների մասին էր, որոնք հինգ հարյուր հազար տարի միասին էին ապրել։ Սկսում է այնտեղից, որ նրանք դեռևս չահել են, և աղջկա ծնողները թույլ չեն տալիս նրան ամուսնանալ այդ տիպի հետ, բայց աղջիկը, այնուամենայնիվ, ամուսնանում է։ Իսկ հետո նրանք ծերանում են, ծերանում։ Ամուսինը պատերազմ է գնում, իսկ կնոջ եղբայրը հարբեցող է։ Մի խոսքով հետաքրքիր չէ։ Ուզում եմ ասել, որ ինձ համար միևնույն էր՝ նրանց ընտանիքում մեռնո՞ւմ էր որևէ մեկը, թե ոչ։ Մեջը բան չկար՝ զուտ դերասանություն էր։ Ճիշտ է, մարդ ու կին հրաշալի ծերուկներ էին, սրամիտ և այլն, բայց նրանք էլ ինձ չէին հուզում։ Նախ ամբողջ ժամանակ, սիևսի ամբողջ ընթացքում մարդիկ թեյ էին խմում կամ էլ մեկ այլ բան։ Հենց որ վարագույրը ետ էր քաշվում, սպասավորը թեյ էր մատուցում կամ կինը թեյ էր լցնում որևէ մեկի համար։ Եվ ամբողջ ժամանակ որևէ մեկը ներս էր մտնում կամ դուրս էր գալիս։ Գլուխդ պտտվում է դրանից, որ անընդհատ ինչ-որ մարդիկ են նստում կամ վեր կենում։ Մեր ամուսինների դերերը կատարում էին Ալֆրեդ Լանտը և Լին Ֆոնտանին։ Նրանք շատ լավ էին խաղում, բայց ինձ դուր չէին գալիս։ Ես հասկանում էի, որ նրանք նման չեն մնացած դերասաններին։ Նրանք իրենց պահում էին ոչ դերասանների պես, ոչ էլ սովորական մարդկանց, ինձ համար դժվար է դա բացատրել։ Նրանք այնպես էին խաղում, առես ամբողջ ժամանակ հասկանում էին, որ իրենք նշանավոր են։ Հասկանո՞ւմ եք, նրանք լավ էին խաղում, միայն թե չափից դուրս

լավ։ Հասկանո՞ւմ եք՝ մեկը խոսքը դեռ չվերջացրած, մյուսն արդեն պատասխանում էր։ Ասես իրականում մարդիկ զրուցում էին միմյանց հետ, մեկը մյուսի խոսքը կտրում և այլն։ Հենց դա էլ փչացնում էր, որ շատ էր նման, թե մարդիկ ինչպես են կյանքում զրուցում և մեկը մյուսի խոսքը կտրում։ Նրանք իրենց դերը կատարում էին ճիշտ այնպես, ինչպես Էռնին էր նվագում Գրինչ-Վիլեջում, երբ մի որևէ բան չափից դուրս լավ ես կատարում, ապա, եթե չհետևես քեզ, դառնում ես ցուցադրական։ Իսկ այդ դեպքում այլևս լավ չի կարող լինել։ Բայց, համենայն դեպս, այդ ներկայացման մեջ այդ լանտերը միակն էին, որ նման էին մարդու, նրանց գլուխն աշխատում էր, դա պետք է խոստովանել։

Առաջին գործողությունից հետո մենք բոլոր մյուս պիժոնների հետ գնացինք ծխելու։ Ա՛յ թե տեսարան էր։ Հա, կյանքում երբեք այդ աստիճան ցուցադրական սեթևեթանք չեմ տեսել։ Մխում էին ու բարձրաձայն խոսում պիեսի մասին, որպեսզի բոլորը լսեն, թե որքան խելացի են իրենք։ Մի ինչ-որ կեղծ կինոդերասան էլ մեզ մոտ կանգնած էր ծխում։ Ազգանունը չգիտեմ, բայց պատերազմական ֆիլմերում նա միշտ խաղում է այն տիպի դերը, որը վախենում է գրոհից առաջ։ Նրա հետ կանգնած էր մի ապշեցուցիչ շիկահեր, և երկուսն էլ անտարբեր տեսք էին ընդունել, ձևացնում էին, թե չեն նկատում, որ նայում են իրենց։ Համեստ են, գրողի տարածները։ Միծագելի էր։ Իսկ իմ Սալլին գրեթե չէր խոսում, միայն հիանում էր լանտերով, նա ժամանակ չուներ, աչ ու ձախ հայացքներ էր նետում, կոտրատվում։ Հանկարծ նա ծխատրանի հակառակ ծայրում տեսավ մի ծանոթ պիժոնի, մոտ գորշագույն կոստյումով ու վանդականախշ բաճկոնով։ Բարեբաշխարհի՛կ առյուծ։ Ազնվակա՞ն։ Մխել է թունդ ու կանգնել է ձանձրացողի տեսքով, ատելի՛։ Սալլին անընդհատ կըրկնում է.

— Ինչ-որ տեղ ծանոթացել եմ նրա հետ, ես նրան ճանաչում եմ։

Նա միշտ բոլորին ճանաչում է։ Այնքան ձանձրացրեց անընդհատ նույն բանը կրկնելով, որ ես ասացի.

— Ճանաչում ես, գնա հետը համբուրվիր, նա երևի կուրախանա։

Սալլին սոսկալի վիրավորվեց ինձնից։ Վերջապես այդ պիժոնը ճանաչեց նրան, մոտեցավ մեզ ու բարևեց։ Մի տեսնեիք, թե ինչպես էին բարևում իրար։ Ասես քսան տարի չէին տեսել։ Կարելի էր մտածել, թե երեխա ժամանակ նրանց մի տաշտի մեջ էին լողացրել։ Այնպիսի ընկերներ են, որ աիրտդ խառնում է վրանները նայես։ Ամենածիծաղելին այն է, որ նրանք հավասարաբար ընդամենը մեկ անգամ են հանդիպել, մի որևէ ապուշ երեկույթում։ Վերջապես, երբ նրանք գազարեցին հրճվանքի փուչիկներ արձակել, Սալլին ծանոթացրեց մեզ։ Նրա անունը Ջորջ էր, ազգանունը չեմ հիշում, աովորում էր էնդովերում։ Այո՛, այո՛, ազնվական էր։ Մի տեսնեիք նրան, երբ Սալլին հարցրեց, թե պիեսը դուր եկա՞վ, արդյոք։ Նրա նմանները ամեն ինչ ցուցադրաբար են անում, նրանք նույնիսկ տեղ են բացում իրենց համար նախքան պատասխանելը։ Նա մի քայլ ետ գնաց ու տրորից ետևում կանգնած մի տիկնոջ ոտք։ Երևի ճզմեց ամբողջ թաթը։ Նա ասաց, որ պիեսն ինքնին գլուխգործոց չէ, բայց լանտերը «ուղղակի հրեշտակնե՛ր են»։ Հրեշտակնե՛ր են, գրողը տանի։ Հրեշտակնե՛ր են։ Մեռնել կարելի է։

Հետո նա ու Սալլին սկսեցին հիշել հազար ու մի ծանոթներ։ Կյանքումս նման սեթևեթանք չեմ տեսել։ Իրար ետևից որևէ քաղաքի անուն էին տալիս ու տեղնուտեղն էլ հիշում, թե ծանոթներից ով է ապրում այնտեղ։ Արդեն սիրտս խառնում էր նրանցից, երբ ընդմիջումն ավարտվեց։ Իսկ հաջորդ ընդմիջմանը նրանք նորից սկսեցին նույն երգը։ Նորից սկսեցին ինչ-որ մարդկանց հիշել։ Վատն այն էր, որ այդ պիժոնը այնպիսի կեղծ, ազնվականական ձայն ուներ, այնպիսի, գիտեք, հոգնա՜ծ, պճնամոլի ձայնիկ։ Ինչպես աղջկա ձայն։ Ու չամաչեց այդ արիկան՝ աղջկան խլել իմ ձեռքից։ Մտածում էի, որ երևի մեզ հետ տաքսի էլ կնստի, ներկայացումից հետո երկու թաղամաս մեզ հետ եկավ ոտքով, բայց կոկտեյլարանում պետք է հանդիպեր ուրիշ պիժոններին։ Պատկերացնում էի, թե նրանք ինչպես են-նստած որևէ բարում, իրենց պիժոնային վանդակավոր բաճկոններով ու քննադատում են և՛ ներկայացումները, և՛ գրքերը, և՛ կանանց, իսկ ձայները այնքա՜ն հոգնած, պճնամոլային են։ Ուղղակի մեռնել կարելի է այդպիսի տիպերի երեսից։

Ինձ համար Սալլիին նայելն էլ զազրելի էր, նրբ տաքսի նստեցինք. ինչո՞ւ էր տասը ժամ շարունակ ականջ կախել էնդովարի այդ տականքին։ Որոշել էի Սալլիին տանել տուն, ազնիվ խոսք, բայց հանկարծ նա ասաց.

— Ես մի հանճարեղ բան եմ մտածել,— նա միշտ հանճարեղ բան է մտածում։— Գիտես ինչ,— ասում է։— Ե՞րբ ես գնալու տուն ճաշի։ Շա՞տ ես շտապում, թե չէ։ Որոշակի ժամի բեզ սպասո՞ւմ են տանը։

— Ի՞նձ։ Չէ, չէ, ոչ ոք ինձ չի սպասում,— ասում եմ։ Եվ դա զուտ ճշմարտություն էր։— Իսկ ի՞նչ կա որ։

— Արի գնանք Ռադիո-սիթի, չմուշկներով սահելու։

Ահա թե ինչպիսի հանճարեղ մտքեր ունի։

— Ռադիո-սիթի՝ սահելո՞ւ։ Ինչպես, հենց հիմա՞։

— Թեկուզ մի ժամով, ոչ ավելի։ Չե՞ս ուզում։ Իհարկե, եթե տրամադիր չես...

— Մի՞թե ասացի չեմ ուզում,— ասում եմ։— Խնդրեմ, եթե սիրտդ ուզում է։

— Դու իսկապե՞ս ուզում ես։ Եթե չես ուզում, պետք չէ։ Ինձ համար միևնույն է։

Չի երևո՞ւմ, թե միևնույն է։

— Այնտեղ ապառիկով այնպիսի սքանչելի կարճ շրջազգեստներ են տալիս,— ասում է Սալլին։— Չեննեթ Կալլը անցյալ շաբաթ վերցրել էր։

Ահա թե ինչո՞ւ էր ուզում անպայման այնտեղ ընկնել։ Ուզում էր ցուցադրել իրեն այդ շրջազգեստով, որը հազիվհազ է ետևը ծածկում։

Մի խոսքով, մենք գնացինք այնտեղ, և մեզ սկզբում չմուշկներ տվին, իսկ հետո Սալլին հագավ այդպիսի մի կապույտ շրջազգեստ, որը հենց միայն ետևը պարացնելու համար էր։ Բայց դե իրեն շատ-շատ էր սազում, պետք է խոստովանել։ Եվ մի՛ կարծեք, թե նա այդ բանը չէր հասկանում։ Դիտմամբ իմ առջևից էր գնում, որպեսզի ես տեսնեմ, թե ինչպիսի սիրունիկ, կլորիկ ետև ունի։ Պետք է խոստովանել, իսկապես վատը չէր։

Բայց ամենածիծաղելին այն էր, որ այդ անիծյալ սահադաշտում մենք ամենավատ սահողներն էինք։ Այո՛, այո՛, ամենավատ։ Տեր աստվա՜ծ, ի՞նչ էր կատարվում։ Սալլիի

կոճերն այնպես էին ոլորվում, որ ուղղակի քսվում էին սառույցին։ Ու ոչ միայն հիմար տպավորություն էր թողնում, հավանաբար նաև ուժեղ ցավ էր զգում։ Համենայն դեպս, իմ բոլոր տեղերը ցավում էին։ Քիչ էր մնում մեռնեի։ Մի տեսնե՛ք մեզ։ Ու ամենազզվելին այն էր, որ մի երկու հարյուր բերանբացներ էլ կանգնած նայում էին, էլ ուրիշ բան ու գործ չունեին, միայն նային, թե մարդիկ ինչպես են ցած ընկնում։

— Գուցե կցանկանայիր գնանք բա՞ր, սեղան վերցնենք, մի որևէ բան խմենք,— ասացի ես վերջապես։

— Մ՛յ դա հանճարեղ միտք է,— ասում է նա ուղղակի հալից ընկել էր։ Անմարդկային բան է այդպես տանջանքների ենթարկվել, ես նույնիսկ խղճացի նրան։

Մենք հանեցինք այդ սոր չմուշկներն ու գնացինք բար, որտեղ կարելի է խմել, նստել միայն գուլպաներով ու հեռվից նայել սահողներին։ Սեղանի մոտ Սալլին հանեց ձեռնոցները, և ես նրան սիգարետ տվի։ Նա բավական ողորմելի տեսք ուներ։ Մատուցողը մոտեցավ, ես նրա համար կոկա-կոլա և ինձ համար սոդայով վիսկի պատվիրեցի, միայն թե այդ արիական հրաժարվեց ինձ վիսկի տալուց, և ես էլ ստիպված կոկա-կոլա խմեցի։ Հետո սկսեցի լուցկի վառել։ Ես հաճախ եմ անում այդպես, երբ տրամադրությունս ընկնում է։ Լուցկին բռնում էի այնքան, մինչև լրիվ այրվում էր, այնպես որ այլևս հնարավոր չէր լինում բռնել, և գցում էի մոխրամանը։ Նյարդային սովորություն է։

Հանկարծ առանց այլևայլության Սալլին ասում է.

— Լսիր, ես ուզում եմ հաստատ իմանալ՝ ճրագալույցին չլո՞ւ ես մեզ մոտ առնածառը զարդարելու, թե չէ։ Նախապես պետք է իմանամ։

Երևում է, կատաղել էր, որ ոտքերը ցավում էին չմուշկներից։

— Ես գրել եմ, չէ՞, որ կգամ։ Դու հարյուր անգամ արդեն հարցրել ես։ Իհարկե, գալու եմ։

— Հասկանո՞ւմ ես, ես պետք է հաստատ իմանամ,— ասում է նա ու աչք ածում շուրջը, տեսնի ծանոթներ չկա՞ն։ Հանկարծ ես դադարեցի լուցկիներ վառելուց, սեղանի վրայով կռացա դեպի նա։ Շատ բան ունեի նրան ասելու։

— Լսիր, Սալլի,— ասում եմ։

— Ի՞նչ է,— հարցնում է։ Ու նայում է դահլիճի մյուս ծայրին գտնվող ինչ-որ աղջկա։

— Քեզ պատահո՞ւմ է, որ ամեն ինչի հանդեպ նողկանք զգաս,— հարցնում եմ։— Հասկանում ես, քեզ պատահո՞ւմ է այնպես, որ կարծես ամեն ինչ գրողի ծոցը կգնա, եթե որևէ բան չնախաձեռնես, պատահո՞ւմ է, որ վախենաս։ Ասա, դու սիրո՞ւմ ես դպրոցը, ընդհանրապես ամեն ինչ։

— Չէ, իհարկե, այնտեղ սոսկալի ձանձրալի է։

— Բայց դու ա ս ո՞ւմ ես, թե ոչ։ Ես գիտեմ, որ սոսկալի ձանձրալի է, բայց դու ա ս ո՞ւմ ես այդ ամենը, թե ոչ։

— Ինչպե՞ս ասեմ։ Չէ թե ասում եմ։ Միշտ էլ մի տեսակ ստիպված ես լինում...

— Իսկ ես ասում եմ։ Տեր Աստված, որքա՜ն եմ ատում այդ ամենը։ Եվ ոչ միայն դպրոցը։ Ամեն ինչ ատում եմ։ Ատում եմ Նյու-Յորքում ապրելը։ Ատում եմ տաքսիները, ավտոբուսները, որտեղ տոմսավաճառները գոռում են քեզ վրա, թե հեսի դռնից դուրս արի, ատում եմ ծանոթություն հաստատել կոտրատվողների հետ, որոնք Լանտերին «հրեշտակներ» են համարում, ատում եմ վերելակով բարձրանալը, երբ ուզում ես ուղղակի դուրս գալ փողոց, ատում եմ անվերջ կոպտումներ շափափորձելը Բրուքսի մոտ, երբ քեզ...

— Մի՛ գոռա, խնդրում եմ,— ընդհատեց Սալլին։

Հիմարություն, մտքովս անգամ չէր անցնում գոռալ։

— Օրինակ՝ մեքենաները,— ասացի ես շատ կամացուկ։— Տես, թե մարդիկ ինչպե՞ս են խելքները թոցնում մեքենաների համար։ Նրանց համար ողբերգություն է, եթե մեքենայի վրա թեկուզ մի փոքրիկ քերծվածք է առաջանում, ու նրանց զրույցի մշտական թեման այն է, թե մի գալոն բենզինով քանի մղոն կարող են կտրել, իսկ երբ նոր մեքենա են գնում, անմիջապես սկսում են գլուխ ջարդել, թե ինչպես այն փոխարինեն նորագույն մակնիշի մեքենայով։ Իսկ ես նույնիսկ հին մակնիշի մեքենաները չեմ սիրում։ Ավելի լավ է ես ինձ համար ձի ճարեմ։ Ձիերի մեջ գոնե մարդկային ինչ-որ բան կա։ Ձիու հետ գոնե կարելի է խոսել...

— Ջեմ հասկանում, ինչ ես ուզում ասել... դու այնպես վայրիվերո ես խոսում։

— Գիտե՞ս քեզ ինչ կասեմ,— ասացի ես։— Եթե դու չլինեիր, հիմա ես չէի նստի Նյու-Յորքում։ Եթե դու չլինեիր, ես հիմա, թերևս, գրողի ծոցը գնայի։ Գլուխս առնեի, անտառները կորչեի, կամ ավելի հեռու։ Դու միակ մարդն ես, որի պատճառով ես մնում եմ այստեղ։

— Ի՜նչ լավն ես,— ասում է։ Բայց անմիջապես էլ երևում է, որ ուզում է խոսակցության նյութը փոխել։

— Դու մի արական դպրոցում սովորելիս լինեիր, փորձի համար,— ասում եմ։— Ծայրից ծայր կեղծիք է։ Եվ սովորում են, որպեսզի դառնան մի որևէ խարեբա, փող վաստակեն ինչ-որ երիցս անիծյալ «կադիլակ» գնելու համար և մըշտապես ձևացնեն, թե իրենց համար շատ կարևոր է, թե որ Ֆուտբոլային թիմը կտանի։ Եվ ամբողջ օրը խոսակցության նյութը խմելն է, աղջիկները և թե ինչ բան է սեքսը։ Եվ ամեն մեկն իր շրջապատն ունի՝ մի որևէ զարշելի փոքրիկ շայկա։ Բասկետբոլիստներն իրենց շայկան ունեն, կաթոլիկներն՝ իրենց, այդ երիցս անիծյալ ինտելեկտուալները՝ իրենցը, բրիջ խաղացողներն՝ իրենցը։ Նույնիսկ այդ հիմար Գրքի ակումբի աբոնենտներն՝ իրենցը։ Փորձիր որևէ մեկի հետ օրինավոր խոսակցություն սկսել։

— Ջէ, ճիշտ չէ,— ասաց Սալլին։— Տղաներից շատերին դպրոցը շատ բան է տալիս։

— Համաձայն եմ, համաձայն եմ, որ շատերին դպրոցը շատ բան է տալիս։ Իսկ ինձ՝ ոչինչ։ Հասկանալի՞ է։ Ես հենց դրա մասին եմ խոսում։ Հատկապես դրա՛ մասին, գրողը տանի։ Ինձ առհասարակ ո՛չ մի բան չի տալիս։ Ես վատ վիճակում եմ։ Սոսկալի վիճակում եմ։

— Ճիշտ է, դու սարսափելի վիճակում ես։

Ու հանկարծ իմ գլխում մի միտք ծագեց։

— Լսիր,— ասում եմ։— Ահա թե ինչ մտածեցի։ Կուզե՞ս այստեղից փախչենք մի որևէ տեղ։ Այ թե ինչ եմ մտածել։ Ես մի ծանոթ ունեմ Գրինյ-վիլեջում, կարող եմ նրա մնքեհան վերցնել մի երկու շաբաթով։ Նա մեր դպրոցում է սովորել ու մինչև հիմա էլ տասը դոլլար ինձ պարտք է։ Տես, թե ինչ կարող ենք անել։ Վաղն առավոտյան կարող ենք գնալ

Մասաչուսեթս, Վերմոնտ, ման կգանք այնտեղ։ Շա՜տ գեղեցիկ տեղեր կան այնտեղ, գիտե՞ս, գրողը տանի։ Զարմանալի գեղեցիկ տեղեր։— Որքան շատ էի խոսում, այնքան ավելի էի հուզվում, ես նույնիսկ կոացա ու բռնեցի Սալլիի ձեռքը, անիծյալ ապուշի մեկն եմ։— Չէ, առանց կատակի,— ասում եմ։— Ես մոտ հարյուր ութսուն դոլլար ունեմ գրքույկիս մեջ։ Վաղն առավոտյան հենց որ բանկը բացեն, կհանեմ, իսկ հետո կարող ենք գնալ ու վերցնել այդ տղայի մեքենան։ Առանց կատակի։ Կապրենք տուրիստական ճամբարներում ու նման տեղերում, մինչև որ փողը վերջանա, իսկ երբ վերջանա, ես աշխատանք կճարեմ, կապրենք մի որևէ առվակի ափին, իսկ հետո երբևէ մենք կամուսնանանք, ինչպես հարկն է։ Ես ինքս մեզ համար ամեռը փայտ կկտրատեմ։ Ազնիվ խոսք, այնպես լավ կլինի, այնպես ուրախ։ Հը, ինչպե՞ս է։ Կգա՞ս։ Կգա՞ս ինձ հետ։ Կգաս, հա՞։

— Ախր ինչպես կարելի է,— ասում է Սալլին։ Նրա ձայնի մեջ զայրույթ կար։

— Իսկ ինչո՞ւ չի կարելի։ Ինչո՞ւ, գրողը տանի։

— Մի՛ գոռա ինձ վրա, խնդրում եմ,— ասում է։ Ախր ստո՛ւտ է ասում, ես նրա վրա իսկի չեմ գոռում։

— Ինչո՞ւ չի կարելի։ Հը, ինչո՞ւ։

— Որովհետև չի կարելի, և վերջ։ Նախ՝ իրականում մենք դեռ երեխաներ ենք։ Մտածո՞ւմ ես, ինչ կանենք, եթե հանկարծ փողը վերջանա, դու էլ աշխատանք չճարես։ Քաղցից կմեռնենք։ Եվ ընդհանրապես այդ ամենը այնպիսի երևակայություն է, որ խոսել իսկ չարժի...

— Ճիշտ չէ։ Սա երևակայություն չէ։ Ես աշխատանք կճարեմ։ Մի՛ անհանգստանա։ Դու դրա համար անհանգստանալու կարիք չունես։ Ի՞նչ է։ Չե՞ս ուզում ինձ հետ գալ, այդպես էլ ասա։

— Բանը դա չէ։ Բոլորովին էլ դա չէ,— ասում է Սալլին։ Զգացի, որ սկսում եմ նրան ատել։— Մենք դեռ շատ ժամանակ ունենք ապագայում ,այն ժամանակ ամեն ինչ կարելի է։ Հասկանո՞ւմ ես, երբ դու ավարտես համալսարանը, կամուսնանանք։ Մենք կարող ենք հազարավոր հրաշալի տեղեր գնալ։ Իսկ հիմա դու...

— Չէ, չենք կարող։ Մենք ոչ մի տեղ էլ չենք կարող գնալ,

ոչ մի հազարավոր տեղեր։ Ամեն ինչ այլ կերպ կլինի,— ասում եմ։ Տրամադրությունս շատ ընկավ։

— Ի՞նչ։ Չեմ լսում։ Մեկ րոպե ես վրաս, մեկ քիթդ տակ փնթփնթում...

— Ասում եմ՝ չէ, ոչ մի տեղ էլ չենք գնա, ոչ մի «հրաշալի տեղ», երբ ես ավարտեմ համալսարանը և այլն։ Ականջներդ լավ բաց։ Ամեն ինչ այլ կերպ կլինի։ Մենք ստիպված կլիննենք ճամպրուկներն ու բազմաթիվ իրեր առած ցած իջնել վերելակով։ Ստիպված կլիննենք բոլոր հարազատներին զանգահարել և հեռախոսով հրաժեշտ տալ, իսկ հետո բացիկներ ուղարկել նրանց բոլոր հյուրանոցներից։ Ես կաշխատեմ մի որևէ գրասենյակում, շատ փող կվաստակեմ, և աշխատանքի կգնամ մեքենայով կամ ավտոբուսով, Մեդիսոն-ավենյուի վրա, քիրթեր կկարդամ ու բրիջ կխաղամ բոլոր երեկոները. և կինո կգնամ, հիմար կարճամետրաժներ ու ռեկլամներ և կինոխրոնիկա կնայեմ։ Օ՛, տեր աստված։ Նախ՝ ինչ-որ ձիարշավներ, հետո տիկինը շիշ է ջարդում նավի վրա, հետո տասնյակ հազած շիմպանզեն հիծանիվ է քշում։ Չէ, այդ բոլորն այն չէ։ Է՛հ, միևնույն է, դու ոչինչ էլ չես հասկանա, գրողը տանի։

— Գուցե ես չեմ հասկանում։ Իսկ գուցեև դո՛ւ ոչինչ չես հասկանում,— ասում է Սալլին։ Մենք արդեն սոսկալի աստիճանի էինք միմլանց։ Երևում էր, որ իմաստ չուներ նրա հետ մարդավարի խոսել։ Ես սոսկալի զայրացել էի ինձ վրա, որ նման խոչոնակցություն բացեցի։

— Դե լավ, վեր կաց, կորչենք այստեղից,— ասում եմ։— Ով ընդհանրապես, կորի գնա, գիտե՞ս ուր...

Օ՛հ, այ թե սկսեց ճղճղալ, որ այդպես ասացի։ Գիտեմ, չպիտք է այդպես ասեի, ու չէի հայհոյի, եթե նա համբերությունից չհաներ ինձ։ Սովորաբար ես աղջիկների ներկայությամբ չեմ հայհոյում։ Ո՛ւհ, այ թե ճղճղոց դրեց։ Ես խելագարի պես սկսեցի ներողություն խնդրել, բայց նա լսել անգամ չէր ուզում։ Նույնիսկ լաց եղավ։ Ճիշտն ասած, մի քիչ վախեցա, որ կգնա տուն և կբողոքի հորը, թե ես նրան հայհոյել եմ։ Նրա հայրը մի երկարահասակ ու լռակյաց մարդ էր, և ինձ առհասարակ չէր սիրում սրիկան։ Նա Սալլիին ասել էր, թե ես չափից դուրս աղմկարար եմ։

— Չէ, լրջորեն, ներիր,— ես շատ խնդրեցի նրան։

— Ներե՞լ, քե՞զ ներել, տարօրինակ է,— ասում է։ Նա դեռևս լալիս էր, և ես հանկարծ խղճացի նրան, որ վիրավորել եմ։

— Գնանք, քեզ տուն ուղեկցեմ։ Լրջորեն։

— Ինքս էլ կարող եմ գնալ, շնորհակալ եմ։ Եթե կարծում ես, որ թույլ կտամ ինձ ուղեկցես, ուրեմն հիմար ես։ Ոչ մի տղա ամբողջ կյանքիս ընթացքում դեռևս իմ ներկայությամբ այդպես չի հայհոյել։

Դրա մեջ ինչ-որ ծիծաղելի բան կար, որ խորն ես մտածում, ու հանկարծ ես արեցի այն, ինչ-որ պետք չէր անել։ Հոհոացի։ Իսկ իմ ծիծաղը սոսկալի բարձր ու հիմար ծիծաղ է։ Հասկանո՞ւմ եք, եթե ես նստած լինեի ինքս իմ ետևում, կինոյում կամ մի որևէ այլ տեղ, հավանաբար, առաջ կհակվեի ու կասեի ինքս ինձ, որ այդպես չհոհոաս։ Ու դրանից Սալլին ավելի կատաղեց։

Ես գնում էի նրա ետևից, ներողություն էի խնդրում, բայց նա ոչ մի կերպ չէր կարողանում ինձ ներել։ Միայն կրկնում էր՝ հեռացիր, ինձ հանգիստ թող։ Վերջ ի վերջո ես հեռացա։ Վերցրի կոշիկներս ու հագուստս և գնացի առանց նրան։ Ջղեռք է լքեի նրան, բայց արդեն համբերությունս սպառվել էր։

Ճիշտն ասած, ինքս էլ չգիտեի, թե ինչու նրան այդ բոլորը ասացի։ Մասաչուսետս, Վերմոնտ մեկնելու մասին, ընդհանրապես ամեն ինչ։ Հավանաբար, նրան չտանեի էլ ինձ հետ, եթե նույնիսկ ինքը խնդրեր։ Մի՞թե նրա նման մարդու հետ կարելի է ճանապարհորդել։ Բայց ամենասարսափելին այն է, որ ես անկեղծորեն էի առաջարկում մեկնել ինձ հետ։ Դա՛ է ամենասարսափելին։ Չէ, այնուամենայնիվ, ես աննորմալ եմ, ազնիվ խոսք։

18

Երբ դուրս եկա սահադաշտից, քաղց զգացի, վազեցի բուֆետ, պանրով բուտերբրոդ և սուֆլե կերա, ապա մտա հեռախոսախցիկ։ Մտածեցի գուցե, այնուամենայնիվ, մի անգամ էլ զանգեմ Ջեյնին, իմանամ՝ եկե՞լ է տուն, թե ոչ։ Չէ՞

որ ամբողջ երեկոյան ազատ եմ, և մտածեցի զանգ տամ նրան, ու եթե արդեն տանն է, հրավիրեմ մի որևէ տեղ պարելու։ Ես նրա հետ ոչ մի անգամ չեմ պարել մեր ամբողջ ծանոթության ընթացքում։ Բայց մի անգամ տեսել եմ, թե ինչպես է պարում։ Նա շատ լավ էր պարում։ Դա հուլիսի չորսին էր, ակումբում։ Այն ժամանակ դեռ լավ ծանոթ չէինք իրար, ու ես սիրտ չէի անում նրան խլել կավալերի ձեռքից։ Նա մի գարշելի տիպի հետ էր, էլ Փայքի հետ, որը Ջոուտում էր սովորում։ Ես սրան էլ լավ ծանոթ չէի, բայց սա ամբողջ օրը ավազանի մոտ էր լինում։ Նեյլոնե լողավարտիք էր հագնում և անընդհատ ցատկում էր աշտարակից։ Ամբողջ օրը ցատկում էր ինչ-որ հիմար ձևով։ Ուրիշ բան չէր կարողանում անել, բայց, երևում է, իրեն լավագույն սպորտսմեն էր համարում։ Ամբողջը մկաններ էր, ուղեղի ոչ մի նշույլ, մի խոսքով։ Ջեյնն այդ երեկո նրա հետ էր պարում։ Ինձ համար դա անհասկանալի էր։ Ազնիվ խոսք, բոլորովին անհասկանալի։ Երբ բարեկամացանք, ես հարցրի, թե նա ինչպես էր հանդիպում այնպիսի մեծամիտ տիպի հետ, ինչպիսին այդ էլ Փայքն է։ Բայց Ջեյնն ասաց, թե նա բոլորովին էլ մեծամիտ չէ, թե ընդհակառակը, թերարժեքության կոմպլեքսով է տառապում։ Ընդհանրապես երևում էր, որ Ջեյնը խղճում էր նրան, և չէր կեղծում։ Լրջորեն խղճում էր նրան։ Տարօրինակ մարդիկ են այդ աղջիկները։ Ամեն անգամ, երբ հիշատակում ես մի որևէ զտարյուն սողունի, որ շատ սառն է կամ խիստ ինքնահավան, երբ խոսում ես այդպիսի մեկի մասին, անպայման ասում են՝ նա «թերարժեքության կոմպլեքս ունի»։ Գուցեև ճիշտ է, բայց դա չի խանգարում, որ այդ անձնավորությունը սողուն լինի։ Այդպես են այդ աղջիկները։ Երբեք չես հասկանա, թե նրանց գլխին ինչ քամի կարող է փչել։ Մի անգամ ես Ռոբերտա Ուոլշի ընկերուհուն ծանոթացրի իմ մի բարեկամի հետ։ Տղայի անունը Բոբ Ռոբինսոն էր։ Այ նա իսկապես թերարժեքության կոմպլեքս ուներ։ Անընդհատ երևում էր, որ ամաչում է իր ծնողներից, որովհետև նրանք ասում էին՝ «ուզում ես», «ուզում եք» ու նման բաներ, և բացի այդ էլ, նրանք շատ աղքատ էին, բայց նա ինքը բոլորովին էլ ետ ընկածներից չէր։ Շատ լավ տղա էր, բայց Ռոբերտա Ուոլշի ընկերուհուն նա բոլորովին դուր չեկավ։

Նա Ռոբերտային ասել էր, թե Բոբը մեծամիտ է, որովհետև սա պատահմամբ ասել էր, թե ինքը բանավեճային ակումբի թիմի պետն է։ Այդպիսի մանրուք, և նա որոշել էր, որ տղան մեծամիտի մեկն է։ Ամբողջ դժբախտությունն այն է, երբ տղան դուր է գալիս դրանց, թեկուզ հարյուրապատիկ անգամ էլ սողուն լինի, անպայման կասեն՝ նա թերարժեքության կոմպլեքս ունի, իսկ եթե տղան դուր չի գալիս, թեկուզ աշխարհիս ամենալավ մարդը լինի, միևնույն է, կասեն՝ մեծամիտի մեկն է։ Նույնիսկ խելացի աղջիկներն են այդպիսին։

Մի խոսքով, ես նորից զանգահարեցի Ջեյնին, բայց ոչ ոք չմոռեցավ հեռախոսին, ամիսված կախեցի լսափողը։ Սկսեցի որոնել ծոցատետրիս մեջ, թե ում հետ կարելի է անցկացնել երեկոն։ Դժբախտաբար իմ ծոցատետրում ընդամենը երեք համար էր գրված՝ Ջեյնինը, միստր Անտոլինիինը, որ իմ ուսուցիչն էր եղել Էլթոն-Հիլլում, և Հորս աշխատանքային համարը։ Հեռախոսի համարները միշտ մոռանում եմ։ Վերջապես ամիսված եղա զանգահարել մի տղայի։ Կառլ Լյուսին։ Նա Հուստոնի դպրոցն է ավարտել, երբ ես արդեն այնտեղից հեռացել էի։ Նա ինձնից կրկնակի մեծ էր, և առանձնապես չէի սիրում նրան, բայց շատ խելոք էր, մտավոր զարգացման գծով ամենաբարձր ցուցանիշը նրանն էր ամբողջ դպրոցում։ Մտածեցի գուցե ինձ հետ ճաշի, ու մենք որևէ խելացի բանի մասին զրուցենք։ Երբեմն նա շատ հետաքրքիր բաներ էր պատմում։ Որոշեցի զանգահարել նրան։ Նա արդեն սովորում էր Կոլումբիայի համալսարանում, բայց ապրում էր ոչ Վաշինգտոն Սքուեր փողոցում, ու ես գիտեի, որ տանն է։ Երբ զանգ տվի, նա ասաց, որ ճաշին զբաղված է, բայց երեկոյան տասին կարող է ինձ հետ հանդիպել Վիլլեր-բարում, Հիսունչորսերորդի վրա։ Կարծում եմ, նա շատ զարմացավ, լսելով իմ ձայնը։ Մի անգամ ես նրան հաստատ կոտրատվող էի անվանել։

Մինչև երեկոյան տասը հարկավոր էր մի կերպ սպանել ժամանակը, և ես գնացի Ռադիո-սիթի՝ կինո նայելու։ Ավելի վատ բան հնարավոր չէր մտածել, բայց դե շատ մոտ էի դրան և անելիք էլ չունեի։

Ներս մտա այն ժամանակ, երբ դիվերտիսմենտ էր սկսվում։ Ռոկետի խումբը ասված ազատի թե ինչ օյիններ էր

անում, գիտեք, նրանք ինչպես են պարում՝ բոլորը կողք-կողքի կանգնած, միմյանց գոտկատեղից բռնած։ Հասարակությունը խելագարի պես ծափ էր տալիս, իսկ իմ նոտում նստած մի տիպ ամբողջ ժամանակ կրկնում էր. «Գիտե՞ք, ինչպես է կոչվում սա։ Մաթեմատիկական ճշգրտություն»։ Սպանե՛ց։ Իսկ Ռոկետի խմբից հետո, անվազմուշկներով ֆրաֆավոր մի մարդ դուրս եկավ, սկսեց մտնել փոքրիկ սեղանների տակ և այդ ընթացքում սրամտել։ Նա շատ լավ էր նահում, բայց ձանձրանում էի, որովհետև մտածում էի, որ նա ամբողջ օրը մարզվում է, որպեսզի հետո բեմի վրա վարժ ահի։ Հիմար զբաղմունք է։ Իսկ հետո սկսվեց Մննդյան մրնջախաղը, որ ամեն տարի Մննդյան տոներին ցուցադրում են Ռադիո-սիթիում։ Բազմապիսի հրեշտակներ էին դուրս գալիս արկղերից, հետո ինչ-որ տիպեր բեմով խաչելություն էին տանում շալակած, հետո բոլորը միասին երգում էին. «Եկեք, հավատացյալներ»։ Շատ հին բան է։ Գիտեմ, այդ ամենը խիստ կրոնական և գեղեցիկ է համարվում, բայց ո՞ւր է այստեղ կրոնը և գեղեցկությունը, զրոյը տանի, եթե արտիստների մի խումբ խաչելություն քարշ է տալիս բեմում։ Իսկ երբ ավարտեցին երգն ու ցրվեցին իրենց տեղերը, երեվում էր, թե ինչպես են շտապում, որ գնան ծխեն. հանդեսատանան։ Անցյալ տարի ես այդ ներկայացումը տեսել էի Սալլի Հեյսի հետ, և նա շատ էր հիացած՝ ախ, ի՞նչ կոստյումներ են, ախ, ինչպիսի՜ գեղեցկություն։ Իսկ ես կասեի, որ խեղճ Քրիստոսի սիրտը կխառներ, հավանաբար, եթե նա տեսներ այդ դիմակահանդեսային լաթերը։ Սալլին ասում էր, թե ես աստվածանարգող եմ ու աթեիստ։ Հավանաբար, դա այդպես է։ Բայց, ա՛յ, մի բան, երևի, դուր կգար Քրիստոսին. դա նվագախմբի թմբկահարն էր։ Ես նրան հիշում եմ դեռ ութ տարեկանից, երբ ծնողներս ինձ ու եղբորս՝ Ալլիին բերում էին այստեղ, մենք աշխատում էինք մոտ նստել նվագախմբին ,որպեսզի նայենք այդ թմբկահարին։ Ես նրան հիշում եմ այն ժամանակից ի վեր։ Նրանից լավին դեռ չեմ տեսել։ Ճիշտ է, ամբողջ համարի ընթացքում նրան միայն երկու անգամ է վիճակվում խփել այդ բանին, այնուամենայնիվ, նրա դեմքին ձանձրույթի հետք անգամ չես նկատում, քանի դեռ սպասում է։ Բայց երբ խփում է, փոխարենն զրում ես, թե

դա ինչպես է նրան հաջողվում, որքան մաքուր, լավ է ստացվում, նույնիսկ դեմքից ես զգում, որ նա ջանք է թափում։ Երբ հորս հետ գնացինք Վաշինգտոն, Ալլին այդ թմբկահարին բացիկ ուղարկեց, բայց երևի նա չստացավ։ Մենք հասցեն կարգին չգիտեինք։

Վերջապես Մննդյան մնջախաղն ավարտվեց, ու սկսվեց այդ երիցս անիծյալ ֆիլմը։ Այնքան գարշելի ֆիլմ էր, որ աչքս չէի կարողանում կտրել։ Մի անգլիացու մասին էր՝ Ալեքի։ Նա պատերազմ էր գնացել և հոսպիտալում զբաղվել հիշողությունից։ Հոսպիտալից դուրս է գալիս ձեռնափայտով, կաղալով շրջում է քաղաքում՝ Լոնդոնում, ու չի իմանում, թե որտեղ է գտնվում։ Իրականում նա հերցոգ է, բայց դա չի հիշում։ Հետո հանդիպում է մի տգեղ, հասարակ ու աղնիվ աղջկա, ավտոբուս բարձրանալիս է հանդիպում։ Աղջկա գրկախարկը թռչում է, նա բռնում է, հետո երկուսով բարձրանում են վերև ու սկսում զրուցել Ջարլզ Դիկենսի մասին։ Պարզվում է, որ նա երկուսի էլ սիրած գրողն է։ Տղամարդը նույնիսկ իր հետ ման է ածում «Օլիվեր Թվիստը», աղջիկը՝ նույնպես։ Սիրաս ուղղակի խառնում էր։ Մի խոսքով, նրանք անմիջապես սիրահարվում են, որովհետև երկուսն էլ գժվում են Ջարլզ Դիկենսի համար, և տղամարդը օգնում է աղջկան աշխատանքի անցնել հրատարակչությունում։ Մոռացա ասել, որ աղջիկը հրատարակիչ է։ Բայց աղջկա գործերը լավ չեն գնում, որովհետև եղբայրը հարբեցող է ու ամբողջ փողերը խմում է։ Նա շատ է դաժան դարձել, այդ եղբայրը, որովհետև պատերազմի ժամանակ վիրաբույժ է աշխատել, իսկ հիմա չի կարողանում վիրահատություն կատարել, նյարդերը չեն դիմանում, դրա համար էլ իրեն խմելու է տվել, խմում է գիշեր-ցերեկ, թեև ընդհանրապես խելացի մարդ է։ Մի խոսքով, Ալեքը գիրք է գրում, իսկ աղջիկը հրատարակում է, և նրանք երկուսով շատ փող են կուտակում։ Քիչ է մնում, որ ամուսնանան, մեկ ուրիշ աղջիկ է լույս ընկնում, ոմն Մարսիա։ Այդ Մարսիան Ալեքի հարսնացուն է եղել մինչև նրա հիշողությունը կորցնելը, և ճանաչում է տղային, երբ սա գրախանութում իր գրքերի վրա մակագրություն էր անում սիրողների համար։ Մարսիան խեղճ Ալեքին ասում է, որ նա իրականում հերցոգ է, բայց սա չի հավատում և չի ուզում

աղջկա հետ հյուր գնալ իր մորը։ Իսկ Ալեքի մայրը կույր է խլուրդի պես։ Բայց մյուս աղջիկը՝ տգեղը, ստիպում է գնալ։ Նա շատ հրաժարարար է զգում իրեն և այլն։ Տղան դնում է, բայց միևնույն է, հիշողությունը չի վերականգնվում, նույնիսկ այն ժամանակ, երբ նրա վիթխարի դանիական դոգը գժի պես նետվում է նրա վրա, իսկ մայրը ափերով բռնում է նրա դեմքը ու նրան տալիս քավշյա արջուկը, որով տղան խաղացել է երեխա ժամանակ։ Բայց մի անգամ հրեխաները մարգագետնում կրոկետ խաղալիս գնդակով խփում են այդ Ալեքի գլխին։ Նրա հիշողությունն անմիջապես վերականգնվում է, նա վազում է տուն, համբուրում մոր ճակատը։ Նա կրկին իսկական հերցոգ է դառնում ու բոլորովին մոռանում հասարակ աղջկան, որն իր հրաժարակչությունն ունի։ Ես ձեզ կասեի, թե հետո ինչ է լինում, բայց սիրտս խառնում է։ Բանն այն չէ, որ վախենում եմ ձեր տպավորությունը փչացնել, այստեղ փչացնելու բան էլ չկա։ Մի խոսքով, բանն ավարտվում է նրանով, որ Ալեքը ամուսնանում է այդ հասարակ աղջկա հետ, իսկ նրա եղբայրը՝ վիրաբույժը, որ խմում էր, բուժում է իր նյարդերը և վիրահատում Ալեքի մոր աչքերը, ու այդ ժամանակ նախկին հարբեցողն ու մարսիան սիրահարվում են։ Իսկ վերջին տեսարանում պատկերված է, թե ինչպես բոլորը նստած են մի երկար սեղանի շուրջ ու քրքրում են ուրախ, որովհետև դանիական դոգը հանկարծ մի ամբողջ կույտ քոթոթներ է բերում։ Բոլորը կարծում էին, թե նա արու է, պարզվում է՝ էգ է։ Մի խոսքով, մի բան կարող եմ խորհուրդ տալ. եթե չեք ուզում, որ ձեր սիրտը խառնի ուզակի ձեր հարևանների վրա, մի՛ գնացեք այդ կինոն։

Բայց դե ես չկարողացա հասկանալ կողքիս նստած տիկնոջը, որ ամբողջ կինոյի ընթացքում լաց եղավ ու, որքան շատ կեղծիք էր ցուցադրվում, այնքան դառն էր լալիս նա։ Կարելի էր կարծել, թե նա շատ գթասրտ է, բարի, բայց ես նստած էի կողքին ու տեսնում էի, թե ինչքանով է բարի։ Նրա հետ եկել էր որդին, փոքրիկ մի տղա, որի համար տխուր էր, ձանձրալի, և ամբողջ ժամանակ նվնվում էր, թե դուզաբան է ուզում, իսկ մայրը նրան չտարավ։ Ամբողջ ժամանակ ասում էր. հանգիստ նստիր, քեզ կարգին պահիր։ Գայլը ձևրևա նրանից բարի լիներ։ Ընդհանրապես, եթե վերջնական

կեղծ կինոնկար նայելիս սրտակեղեք ազդացվող տասը մարդ, հաստատ կարելի է ասել, որ նրանցից ինը կլանքում ամենաթշնամի սրիկաներն են։ Լուրջ եմ ասում։

Երբ ֆիլմն ավարտվեց, գնացի Վիկեր-բար, որտեղ պետք է հանդիպեի Կաուլ Լյուսի հետ, ու գնալիս անընդհատ մտածում էի պատերազմի մասին։ Պատերազմական նկարները միշտ այդպիսի մտորումների առիթ են տալիս։ Հավանաբար, ես չէի դիմանա, եթե հարկ լիներ պատերազմ գնալ։ Ընդհանրապես սարսափելի չէ, եթե քեզ ուղարկեն մի որևէ տեղ ու այնտեղ սպանեն, բայց ախր հարկավոր է բանակում մնալ աստված գիտի, թե որքան։ Դա է ցավը։ Իմ եղբայր Դ. Բ-ն չորս տարի մնացել է բանակում։ Նա պատերազմում էլ է եղել, մասնակցել է երկրորդ ճակատի մարտերին, բայց, կարծում եմ, բանակում ծառայելն ավելի էր ատում, քան պատերազմը։ Ես դեռ բավական փոքր էի, երբ նա գալիս էր տուն, ամբողջ ժամանակ մահճակալին պառկած էր լինում։ Նա նույնիսկ հյուրասենյակ հազվադեպ էր մտնում։ Հետո գնաց Եվրոպա, պատերազմ, բայց չի վիրավորվել, նրան չի վիճակվել նույնիսկ կրակել որևէ մեկի վրա։ Նրա տրածն այն է եղել, որ շաբաթ մեքենայով ամբողջ օրը մաս է ածել մի կովբոյական գեներալի։ Նա մի անգամ ինձ ու Ալլիին ասաց, որ եթե ստիպված լիներ կռվել, չէր իմանա, թե ում վրա կրակի։ Նա ասաց, թե մեր բանակում էլ քիչ շան որդիներ չկան, քան ֆաշիստների մոտ։ Հիշում եմ, Ալլին հարցրեց նրան, թե գուցե լա՞վ է, որ նա եղել է պատերազմում, որովհետև գրող է, ու հիմա գրելու նյութ ունի։ Իսկ նա Ալլիին ստիպեց բերել բեյսբոլի այն ձեռնոցը, որի վրա բանաստեղծություններ էր արտագրել, և հարցրեց. ո՞վ է ավելի լավ գրել՝ Ռուպերտ Բրո՞ւկը, թե Էմիլի Դիքինսոնը։ Ալլին ասաց՝ Էմիլի Դիքինսոնը։ Ես ոչինչ չէի կարող ասել, որովհետև առհասարակ բանաստեղծություն չեմ կարդում, բայց մի բան հաստատ կարող եմ ասել՝ ես հավանաբար կխենթանայի, եթե հարկադրված լինեի ծառայել, ապրել էկլիի, Մորեղելեյթների և այն վերելակավարի՝ Մորիսի նման տիպերի հետ։ Մի անգամ մի ամբողջ շաբաթ ես բոյսբաուի էի, և գլուխս արդեն պտտվում էր, երբ նայում էի իմ առջև կանգնած տղայի ծոծրակին։ Իսկ մեզ միշտ հարկադրում էին նայել առջևը

կանդնածի ծոծրակին։ Աղնիվ խոսք, եթե պատերազմ լինի, թող ինձ տանեն և գնդակահարեն։ Ես չեմ էլ դիմադրի։ Բայց մի հարցում ինձ վրդովում է իմ ավագ եղբայրը. ատում է պատերազմը, բայց անցյալ ամառ տվեց ինձ կարդալու «Մենաս բարով, զենք» գիրքը։ Ասաց, թե հրաշալի գիրք է։ Այ թե ինչն է ինձ համար անհասկանալի։ Այնտեղ հերոսը, այդ լեյտենանտ Հենրին, հրաշալի տղա է համարվում։ Ջեմ հասկանում, Դ. Բ-ն ինչպե՞ս է ատում պատերազմը, ատում բանակը և, այնուամենայնիվ, հիանում այդ կոտրտվանով։ Ջեմ կարողանում հասկանալ, թե նրան ինչո՞ւ է դուր գալիս այդպիսի կեղծիքը, և միաժամանակ դուր են գալիս նաև Ռինգ Լարդներն ու «Մեծ Գետսբին»։ Դ. Բ-ն ինձնից նեղացավ և ասաց, թե դեռևս ես շատ փոքր եմ «Մենաս բարով, զենքը» գնահատելու համար, բայց, իմ կարծիքով, դա ճիշտ չէ։ Ես նրան ասացի. չէ՞ որ ինձ դուր է գալիս Ռինգ Լարդներն ու «Մեծ Գետսբին»։ Հատկապես՝ «Մեծ Գետսբին»։ Այո, Գետսբսբին։ Այ դա մա՛րդ է։ Ո՛ւժ է։

Մի խոսքով, ես ուրախ եմ, որ հայտնագործել են ատոմային ռումբը։ Եթե երբևէ պատերազմ սկսվի, ես կնստեմ ուղղակի այդ ռումբի վրա։ Կամավոր կնստեմ, աղնիվ, անկեղծ խոսք։

19

Գուցե դուք Նյու-Յորքում չեք ապրել և չգիտեք, որ «Վիկեր-բարը» գտնվում է շատ շքեղ հյուրանոցում՝ «Սեթոն-օթելում»։ Առաջ ես հաճախ էի այնտեղ լինում, բայց հետո դադարեցի։ Բոլորովին չեմ գնում այնտեղ։ Խիստ նրբաճաշակ բար է համարվում դա, և բոլոր պիժոնները այնտեղ են խցկվում։ Մի երեկոյի ընթացքում երեք անգամ հլուխ են ունենում այդ ֆրանսուհիները՝ Քինան և Ժանինը, դաշնամուր են նվագում և երգում։ Մեկը սոսկալի վատ էր նվագում, իսկ մյուսը կամ անվայելուչ երգեր էր երգում, կամ ֆրանսիական։ Նա, որը երգում է՝ Ժանինը, նախ մոտենում է միկրոֆոնին ու փչում նախքան երգելը։ Ասում է. «Իսկ հիմա մենք ձեզ համար կերգենք «Վուլե վու ֆրանսե» պոկրիկ երգ։ Տա պոկրիկ ֆրանսածի աղջկա մասին, որ եկավ շատ մեծ քա-

ղաք Նուուլորկ և սիրահարվեց մի պոկրիկ տղա Բրուկլինից։ Մենք համոզված, որ երգ ձեզ շատ դուր գա»։ Կշշնջա, կիրսափրսա, իսկ հետո կերգի այդ հիմար երգը՝ կեսը ֆրանսերեն, կեսը անգլերեն, ու բոլոր պիժոնները կսկսեն հիացմունքից խենթանալ։ Եթե այնտեղ մի կողմ նստած լսեիք, թե ինչպես են ծափահարում, ամբողջ աշխարհը կատեիք, պատվովս եմ երդվում։ Բարի տնօրենն էլ է անասուն։ Սոսկալի սքնամոլի մեկն է։ Նա ձեզ հետ մի բառ անգամ չի փոխանակի, եթե որևէ նշանավոր անձ չեք կամ երևելի մեկը։ Իսկ եթե նշանավոր անձ եք, ապա կաշվից դուրս կգա, հազար կտոր կլինի, զզվում ես նայելուց։ Կմոտենա, այնպես լայն կժպտա, սովորական, իբր, տեսեք, թե ինչպիսի՞ հրաշալի մարդ եմ, կհարցնի. «Հը՞, ինչպե՞ս է ձեզ մոտ, Կոննետիկատում», կամ՝ «Հը՞, ինչպե՞ս է ձեզ մոտ, Ֆլորիդայում»։

Գարշելի բար է, լրջորեն։ Ես գրեթե դադարել եմ այնտեղ գնալուց։ Դեռ բավական վաղ էր, երբ գնացի այնտեղ։ Նստեցի վաճառասեղանի մոտ,— մարդիկ քիչ կային,— և սոդայով վիսկի խմեցի, չսպասելով Լյուսին։ Երբ պատվիրում էի, վեր էի կենում աթոռակից, թող տեսնեն, որքան բարձրահասակ եմ ու ինձ անչափահասի տեղ չդնեն։ Հետո սկսեցի զննել բոլոր պիժոններին։ Կողքիս նստածն ամեն կերպ հոգ էր տանում իր աղջկան։ Անվերջ հավատացնում էր, թե նա ազնվական ձեռքեր ունի։ Միծաղս գալիս էր։ Իսկ դահլիճի մյուս ծայրում հավաքվել էին աննորմալները։ Նրանց արտաքին տեսքը, ճիշտ է, այնքան էլ աննորմալ չէր՝ ոչ երկար մազեր, ոչ որևէ այլ բան, բայց անմիջապես կասեիր, թե ինչ մարդիկ են դրանք։ Եվ վերջապես, ներկայացավ Լյուսն ինքը։

Լյուսը տիպ է։ Այդպիսիները հազվադեպ են, երբ մենք սովորում էինք Հուտտոնի դպրոցում, նա իմ դասուսուցչ-բարձրդասարանցին էր։ Բայց նրա արածն այն էր, որ սեքսի մասին հազար ու մի զրույցներ էր անցկացնում, երբ իր սենյակում հավաքվում էին տղաները։ Նա այդպիսի բաների մասին շատ քաջատեղյակ էր, հատկապես բազմապիսի անորմալների մասին։ Միշտ ինչ-որ այլասերվածների մասին էք պատմում, որ ընկնում են ոչխարների հետից կամ իրենց շլյապաների աստառին կանացի վարտիքներ են կարում։ Այդ Լյուսը անգիր գիտեր, թե ով է արվամոլ, ով՝ լեսբուհի,

գրեթե ամբողջ Ամերիկայում։ Մի որևէ ազգանուն տաս, ումն ուզում է լինի, և Լյուսը անմիջապես կասի արվամոլ է նա, թե ոչ։ Ուղղակի դժվար էր հավատալ, որ բոլոր այդ մարդիկ՝ կինոդերասանները և այլն, կամ արվամոլներ են, կամ լեսբուհիներ։ Ախր նրանցից շատերն ամուսնացած էին։ Սատանան գիտի, թե նա որտեղից էր դա հորինում։ Հարյուր անգամ կարող ես նրան հարցնել. «Մի՞թե Ջո Բլոուն էլ է դրանցից։ Ջո Բլոո՛ւն, այդ հսկան, այդպիսի ուժի տեր մարդը, նա՛, որ միշտ գանգստերի ու կովբոյի դերեր է կատարում, մի՞թե նա էլ»։ Եվ Լյուսը պատասխանում էր՝ անկասկած։ Նա միշտ ասում էր՝ անկասկած։ Նա ասում էր, որ մի նշանակություն չունի՝ մարդը ամուսնացա՞ծ է, թե ոչ։ Ասում էր, թե ամուսնացածների կեսը այլասերվածներ են ու իրենք էլ դա չեն գիտակցում։ Ասում էր՝ ամեն մարդ էլ կարող է հանկարծ այդպիսին դառնալ, եթե նախադրյալներ ունի։ Վախեցնում էր մեզ սոսկալի։ Երբեմն ես կիշերը չէի քնում, անվերջ վախենում էի՝ հանկարծ ես էլ աննորմալ դառնամ։ Բայց ամենածիծաղելին այն է, որ Լյուսն ինքն այնքան էլ նորմալ չէր։ Միշտ ափեղցփեղ դուրս էր տալիս, ամեն ինչի մասին, բայց միշտնջում ուղղակի հոգիդ հանում էր։ Եվ միշտ զուգարանից լվացարան տանող դուռը բաց էր թողնում. դու ատամներդ ես լվանում կամ լվացվում ես, իսկ նա այնտեղից քեզ հետ զրուցում է։ Իմ կարծիքով դա էլ է ինչ-որ չափով այլասերվածություն, աստված վկա։ Դպրոցներում ես հաճախ եմ տեսել իսկական աննորմալների, և նրանք միշտ այդպիսի օլիններ էին անում։ Դրա համար էլ կասկածում էի, որ Լյուսն ինքն այդպիսին է։ Բայց նա շատ էր խելոք, կատակը մի կողմ։

Նա երբեք չի բարկում, չի ասում «ողջույն»։ Հիմա էլ հայտնեց ,որ մի րոպեով է եկել։ Ասաց, որ տեսակցություն ունի։ Հետո պատվիրեց ,որ չոր մարտինի մատուցեն իրեն։ Ասաց, որ բարմենը քիչ թուլացնի և ձիթապտուղ չդցի։

— Լսիր, ես քեզ համար մի լավ աննորմալ եմ գտել,— ասում եմ,— ա՛յ, վաճառասեղանի ծայրին։ Հիմա դեռ մի՛ նայիր։ Քեզ համար եմ նշան արել։

— Ինչպիսի՞ սրամտություն,— ասում է։— Էլի նույն Քոլֆիլդն ես։ Ե՞րբ ես մեծանալու։

Երևում է, ես նրան զայրացնում էի։ Իսկ ինձ համար ծիծաղելի էր։ Այդպիսի տիպերը միշտ ինձ ծիծաղ են պատճառում։

— Հը՞, ինչպե՞ս են անձնական գործերդ,— հարցնում եմ։ Նա տանել չէր կարող, երբ այդ մասին հարցնում էին։

— Վերջ տուր,— ասում է,— ի սեր աստծո, հանգիստ նստիր և վերջ տուր հիմարություններ դուրս տալուն։

— Իսկ ես հանգիստ եմ նստած,— ասում եմ։— Ինչպե՞ս է Կոլումբիան։ Քեզ դո՞ւր է գալիս այնտեղ։

— Անպայման։ Շատ է դուր գալիս։ Եթե դուր չգար, չէի գնա,— ասում է։ Երբեմն նա էլ ինձ էր զայրացնում։

— Իսկ ի՞նչ մասնագիտություն ես ընտրել,— հարցնում եմ։— Ամեն տիպի այլասերվածություննե՞րն ես ուսումնասիրում։— Ես ուզում էի ձեռ առնել նրան։

— Դու, կարծեմ, փորձում ես սրամտե՞լ։

— Չէ, հենց այնպես,— ասում եմ։— Լսիր, Լյուս, դու շատ խելոք տղա ես, զարգացած։ Ինձ անհրաժեշտ է քո խորհուրդը։ Սոսկալի վիճակի մեջ եմ...

Նա բարձր տնքաց.

— Օ՜հ, Քոլֆիլդ, վերջ տուր։ Մի՞թե չես կարող հանգիստ նստել, խոսել...

— Լավ, լավ,— ասում եմ,— մի՛ հուզվիր...

Երևում է, չէր ուզում ինձ հետ լուրջ բաների մասին խոսել։ Դժվար է այդ խելոքների գործը։ Երբեք չեն կարող լրջորեն խոսել մարդու հետ, եթե անտրամադիր են։ Ստիպված նրա հետ սկսեցի խոսել ընդհանուր բաների մասին։

— Չէ, լուրջ եմ ասում, ինչպե՞ս են անձնական գործերդ։ Էլի էն տիկնիկի հե՞տ ես ման գալիս, հիշո՞ւմ ես, Հուտոնի դպրոցում։ Նա էլի այնպիսի խոշոր...

— Օ՜, սեր աստված, իհարկե, չէ։

— Ինչպես թե, իսկ որտե՞ղ է հիմա նա։

— Ոչ մի տեղեկություն չունեմ։ Եթե կուզես իմանալ, նա, իմ կարծիքով, դարձել է նյու-հեմպշիրյան պոռնկուհու նման մի բան։

— Դա խոզություն է։ Եթե նա քեզ այդքան բան է թույլ տվել, դու, համենայն դեպս, նրա մասին այդպես գարշելի ձևով չպետք է արտահայտվես։

— Օ՛, սատանա,— ասաց Լյուսը։— Մի՞թե տիպիկ քոլեջական խոսակցություն է սկսվում։ Գոնե նախազգուշացնեիր։

— Ոչինչ էլ չի սկսվում,— ասացի ես։— Եվ, այնուամենայնիվ, դա խոզություն է։ Եթե նա այդպես լավ է վերաբերվել քեզ, որ թույլ է տվել...

— Մի՞թե կարիք կա շարունակելու այդ տհաճ տիրադները...

Ես ոչինչ չասացի։ Վախենում էի, որ եթե չլռեմ, նա վեր կկենա ու կգնա։ Հարկ եղավ մի բաժին էլ վիսկի պատվիրել։ Հանկարծ թունդ խմելու ցանկություն առաջացավ։

— Ո՞ւմ հետ ես հիմա մանգալիս,— հարցնում եմ։— Կարո՞ղ ես ինձ պատմել։ Եթե ուզում ես, իհարկե։

— Դու նրան չես ճանաչում։

— Գուցե ճանաչում եմ։ Ո՞վ է։

— Գրինիչ-վիլեջից է։ Քանդակագործուհի, եթե շատ ես ուզում իմանալ։

— Իսկապե՞ս։ Իսկ քանի՞ տարեկան է։

— Տեր աստվա՜ծ, մի՞թե ես նրան հարցրել եմ։

— Դե, մոտավորապես, որքա՞ն է։

— Դե, երեսունն անց,— ասում է Լյուսը։

— Երեսունն ա՞նց։ Եվ դա քեզ դո՞ւր է գալիս,— հարցնում եմ։— Քեզ այդպիսի պատավնե՞րն են դուր գալիս։— Ես նրան հարցնում էի գլխավորապես այն պատճառով, որ նա գլուխ էր հանում այդ գործերից։ Ամեն մարդ չի կարող այդպես գլուխ հանել, ինչպես նա։ Նա անմեղությունը կորցրել էր տասնչորս տարեկանում, Նանտուկետում, ազնիվ խոսք։

— Ուզում ես իմանալ, թե ինձ հասո՞ւն կանայք են, դուր գալիս։ Անպայման։

— Ահա թե ի՛նչ։ Ինչո՞ւ։ Չէ, իսկապես, նրանց հետ ավելի՞ լավ է։

— Լսիր, մեկ էլ եմ ասում, վերջ տուր քո էդ քոլֆիլդյան հարցուփորձին, գոնե այս երեկո։ Ես հրաժարվում եմ պատասխանել։ Ե՛րբ, վերջապես, կմեծանաս դու, գրողը տանի։

Ես ոչինչ չպատասխանեցի, որոշեցի մի փոքր լռել։ Հետո Լյուսն էլի մարտինի պատվիրեց և խնդրեց բոլորովին չուր չավելացնել։

— Լսիր, այնուամենայնիվ, ասա, վաղո՞ւց ես նրա հետ ապրում, այդ քանդակագործուհու— Ինձ իսկապես հետաքրքիր էր դա։ —Դու նրա հետ Հուստոնի դպրոցի՞ց ես ծանոթ։

— Չէ, նա վերջերս է եկել Նահանգներ, մի քանի ամի՛ց առաջ։

— Հա՞, Որտեղացի՞ է նա։

— Պատկերացրու որ Շանհայից։

— Մի՛ ասի։ Չինուհի՞ է, ինչ է։

— Անկասկած։

— Սուտ ես ասում։ Եվ քեզ դո՞ւր է գալիս, որ նա չինուհի է։

— Անշուշտ, դուր է գալիս։

— Բայց ինչո՞ւ։ Ազնիվ խոսք, ինձ հետաքրքիր է իմանալ, ինչո՞ւ։

— Պարզապես ինձ արևելյան փիլիսոփայությունն ավելի է գոհացնում, քան եվրոպականը, եթե շատ ես ուզում իմանալ։

— Ի՞նչ փիլիսոփայություն։ Սեքսուա՞լ։ Ինչ է, նրանց մոտ, Չինաստանում, դա ավելի՞ լավ է։ Դա՞ ես ուզում ասել։

— Ես Չինաստանի մասին չեմ ասում։ Ընդհանրապես՝ Արևելքի։ Տեր աստվածս։ Մի՞թե հարկավոր է շարունակել այս անմիտ զրույցը։

— Լսիր, ես լրջորեն եմ հարցնում քեզ,— ասում եմ,— կատակ չեմ անում։ Արևելքում ինչո՞ւ է այդ ամենն ավելի լավ։

— Ձափից դուրս բարդ բան է դա, հասկանո՞ւմ ես,— ասում է Լյուսը։— Պարզապես նրանք գտնում են, որ սերը ոչ միայն ֆիզիկական կապ է, այլև հոգեկան։ Դե ինչո՞ւ պիտի ես քեզ սկսեմ...

— Բայց ես էլ եմ այդպես գտնում։ Ես էլ եմ գտնում, որ դա, ինչպես ասացի՞ր, և՛ հոգեկան է, և՛ ֆիզիկական։ Ազնիվ խոսք, ես էլ եմ այդպես գտնում։ Բայց ամեն ինչ կախված է նրանից, թե ում հետ ես կապված։ Եթե դա ինչ-որ մեկն է, որին դու բոլորովին էլ...

— Մի՛ գոռա այդպես, ի սեր աստծո, եթե չես կարող ցածր խոսել, արի վերջ տանք այս...

— Լա՛վ, լա՛վ, միայն թե լսիր,— ասում եմ։ Ես մի քիչ հուզվում էի և իսկապես բարձր էի խոսում։ Պատահում է, որ չափից դուրս բարձր եմ խոսում, երբ հուզվում եմ։— Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ուզում ասել, ես ուզում եմ ասել, որ կապը պետք է լինի և՛ ֆիզիկական, և՛ հոգեկան, և՛ զեղեցիկ, մի խոսքով, ամեն տեսակի։ Բայց հասկացիր, չի կարող պատահել, որ բոլորի հետ էլ այդպես լինի,— այն բոլոր աղջիկների, ում հետ որ համբուրվում ես,— չի՛ կարող։ Իսկ դու կարո՞ղ ես։

— Արի վերջացնենք այս խոսակցությունը,— ասում է Լյուսը։— Չե՞ս առարկում։

— Լավ, բայց, այնուամենայնիվ, լսիր։ Վերցնենք թեկուզ քեզ և այդ չինուհուն։ Ի՞նչ մի լավ բան կա ձեր մեջ։

— Ասացի՝ վերջացնենք։

Իհարկե, հարկ չկար այդպես քիթը խոթելու նրա անձնական կյանքի մեջ։ Ես դա հասկանում եմ։ Բայց Լյուսը մի սոսկալի տհաճ հատկություն ուներ։ Երբ մենք սովորում էինք Հուտտոնի դպրոցում, նա սիրում էր ինձ պատմել իմ ամենագաղտնի ապրումները, իսկ հենց որ հերթն իրեն էր հասնում, զայրանում էր։

Այդ խելոքները չեն սիրում խելոք խոսակցություն վարել, նրանք սիրում են, որ միայն իրենք ճամարտակեն։ Գտնում են, որ եթե իրենք լռել են, դու էլ պիտի լռես, եթե իրենք գնացին իրենց սենյակը, ապա դու էլ քո սենյակը պիտի գնաս։ Երբ սովորում էինք Հուտտոնի դպրոցում, Լյուսն ուղղակի տանել չէր կարողանում, որ մենք էինք սկսում խոսել իր պատմել վերջացնելուց հետո։ Նույնիսկ եթե հավաքվում էինք մեկ ուրիշ սենյակում, Լյուսը տանել չէր կարողանում։ Նա միշտ պահանջում էր, որ բոլորը ցրվեն իրենց սենյակները և նստեն այնտեղ, քանի որ ինքը վերջացրել էր իր ասելիքը։ Ամբողջ գաղտնիքը այն էր, որ նա վախենում էր հանկարծ որևէ մեկը մի ավելի խելոք բան ասեր, քան ինքը։ Այնուամենայնիվ, նա շատ ծիծաղելի տիպ էր։

— Հավանաբար, հարկ կլինի մեկնել Չինաստան,— ասում եմ։— Իմ անձնական կյանքը ոչ մի բանի պետք չէ։

— Դա բնական է, քո գիտակցությունը դեռ չի հասունացել։

— Ճիշտ է։ Դա շատ ճիշտ է, ինքս էլ գիտեմ,— ասում եմ։— Բայց գիտե՞ս, ցավն ինչ է։ Ես չեմ կարողանում իսկական հույզ ապրել, հասկանո՞ւմ ես, իսկական, եթե աղջիկն ինձ իսկապես դուր չի գալիս։ Հասկանո՞ւմ ես, նա պետք է ինձ դուր գա։ Իսկ եթե դուր չի գալիս, ապա ես չեմ էլ ուզում աղջկան, հասկանո՞ւմ ես։ Տեր աստվա՛ծ, իմ ամբողջ կյանքը դրա պատճառով գրողի ծոցն է գնում։ Գարշանք է ամբողջությամբ։ Սա հո կյանք չի։

— Դե, իհարկե, գրողը տանի։ Ես քեզ դեռ անցյալ անգամ եմ ասել, թե ինչ պետք է անել։

— Գնամ հոգեվերլուծողի մոտ, այո՞,— ասացի ես։ Անցյալ անգամ նա էր խորհուրդ տվել ինձ։ Նրա հայրը հոգեվերլուծող է։

— Դե դա քո գործն է, ասվածն իմ։ Իմ ի՞նչ գործն է, թե դու ինչպես կվարվես։

Ես ոչինչ չասացի։ Մտածում էի։

— Լավ, ասենք, գնացի քո հոր մոտ ու խնդրեցի հոգեվերլուծության ենթարկել ինձ,— ասացի ես,— իսկ ի՞նչ է անելու նա ինձ։ Ասա տեսնեմ, ի՞նչ է անելու։

— Ոչ մի բան էլ չի անելու։ Պարզապես կխոսի, դու էլ նրա հետ կխոսես։ Ինչ է, չե՞ս հասկանում։ Կարևորն այն է, որ նա կօգնի քեզ հասկանալու մտքերիդ ընթացքը։

— Ի՞նչը, ի՞նչը։

— Մտքերիդ ընթացքը։ Դու խճճվել ես բարդույթների մեջ... Օ՛հ, գրողը տանի, ինչ է, հոգեվերլուծության դասընթա՞ց պիտի կարդամ քեզ համար։ Ուզում ես, հորս մոտ ընդունելության հերթի գրվիր, չես ուզում, մի՛ գրվիր։ Անկեղծ ասած, դա ինձ համար միանգամայն միևնույնն է։

Ես ձեռքս դրի նրա ուսին։ Ինձ համար շատ ծիծաղելի էր։

— Իսկ դու իսկական ընկեր ես, հա՛, շան որդի,— ասում եմ,— դա քեզ հայտնի՞ է։

Նա նայեց ժամացույցին։

— Հարկավոր է շտապել,— ասաց ու վեր կացավ։— Ուրախ եմ քեզ տեսնելուս համար։— Նա կանչեց բարմենին և խնդրեց ներկայացնել հաշիվը։

— Լսիր,— ասում եմ,— իսկ քո հայրը քեզ հոգիվերլուծության ենթարկե՞լ է։

— Ո՞նց։ Ինչո՞ւ ես հարցնում։

— Հենց այնպես, ենթարկե՞լ է, թե ոչ։

— Ինչպես ասեմ։ Ոչ լրիվ։ Պարզապես նա օգնել է ինձ հարմարվել կյանքին, բայց խոր վերլուծության անհրաժեշտություն չի եղել։ Իսկ ինչո՞ւ ես հարցնում։

— Հենց այնպես։ Հետաքրքիր է։

— Դե մնաս բարով, հաջողություն,— ասաց նա։ Թեյա-վճար թողեց ու պատրաստվեց գնալու։

— Ինձ հետ մի բաժակ էլ խմիր,— ասում եմ։— Խնդրում եմ։ Թախիծը սիրտս ուտում է։ Լրջորեն, մնա՛։

Նա ասաց, որ չի կարող։ Ասաց, որ առանց այդ էլ ուշացել է և գնաց։

Այո, կյուսը տիպ է։ Իհարկե, նա մղմղոզ է, բայց վիթխարի բառապաշար ունի։ Մեր դպրոցի բոլոր աշակերտներից ամենամեծ բառապաշարը նա ուներ։ Մեզ համար հատուկ առաջումներ էին կազմակերպում։

20

Նստել, խմում էի և սպասում, թե վերջապես երբ են դուրս գալու Թինան ու Ժանինը, իրենց օյիններով, բայց, պարզվեց, նրանք այլևս չկան։ Դուրս եկավ կանացի կերպարանքով, գանգրացրած մազերով մի տիպ ու սկսեց դաշնամուր նվագել, իսկ հետո մի նոր գեղեցկուհի՝ Վալենսիան, երգեց։ Սրա մեջ ոչ մի լավ բան չկար, բայց, համենայն դեպս, Թինայից ու Ժանինից լավն էր, գոնե լավ երգեր էր երգում։ Դաշնամուրը դրված էր անմիջապես վաճառասեղանի մոտ, որտեղ նստած էի ես, և այդ Վալենսիան գրեթե իմ կողքին էր կանգնած։ Ես թեթևակի աչքով արեցի նրան, բայց նա ձևացրեց, թե չի նկատում ինձ։ Երևի աչքով չանելի, բայց սոսկալի հարբած էր։ Նա ավարտեց երգն ու այնպես արագ չքվեց, որ չհասցրի հրավիրել ինձ հետ մի որևէ բան խմելու։ Ես կանչեցի ավագ մատուցողին և պատվիրեցի հարցնել պառավ Վալենսիային, թե չի՞ ցանկանա արդյոք ինձ հետ մի բան խմել։ Նա ասաց, որ անպայման կհարցնի, բայց, հա-

վանաբար, նույնիսկ չհաղորդեց իմ խնդրանքը։ Երբեք ոչ ոք չի հաղորդում ասածդ, երբ մի բան ես խնդրում։

Ես նստեցի այդ անիծյալ բարում գրեթե մինչև գիշերվա մեկը ու խմեցի ինչպես մի շուն շան որդի։ Թունդ հարբեցի։ Բայց մի բան լավ էի հիշում՝ չի կարելի աղմկել, չի կարելի խանգարել։ Չէի ուզում, որ ինձ վրա ուշադրություն դարձնեին, մեկ էլ տեսար հարցրին նաև, թե քանի տարեկան եմ։ Բայց ինչպե՞ս էի հարբել, ուղղակի սոսկալի էր։ Իսկ երբ վերջնականապես հալից ընկա, էլի սկսեցի երևակայել այն հիմար պատմությունը, իբր իմ աղիքներում գնդակ կա։ Մենակ նստած եմ բարում, գնդակը փորիս մեջ։ Ձեռքս ամբողջ ժամանակ պահում էի բաճկոնիս տակ, որպեսզի արյունը չկաթեր հատակին։ Չէի ուզում ցույց տալ, որ վիրավոր եմ։ Թաքցնում էի, որ ինձ՝ հիմարիս, վիրավորել են։ Եվ էլի սոսկալի ցանկություն ունեցա զանգահարել Ջեյնին, իմանալ՝ վերադարձե՞լ է նա, տա՞նն է, թե չէ։ Հաշիվը փակեցի և գնացի ավտոմատի խցիկը։ Գնում եմ, ձեռքս վերքիս սեղմած, որպեսզի արյունը չկաթի։ Այ թե ինչ օրի էի։

Բայց երբ հայտնվեցի հեռախոսախցիկում, փոշմանեցի և, Ջեյնին զանգահարելու փոխարեն, երևի չափից դուրս հարբած էի, զանգահարեցի Սալլիին։

Հավանաբար, մի քանի համար փորձեցի, մինչև որ ճիշտը հավաքեցի։ Ո՛ւհ, ի՞նչ աստիճան էի խմած։

— Ալլո,— գոչեցի ես, երբ ինչ-որ մեկը մոտեցավ այդ երիցս անիծյալ հեռախոսին։ Նույնիսկ ոչ թե գոչեցի, այլ բղավեցի, այնքան որ խմած էի։

— Ո՞վ է խոսում,— հարցնում է կանացի մի սառցե ձայն։

— Ես եմ, Հոլդեն Քոլֆիլդը։ Կանչեցեք խնդրեմ, Սալլիին...

— Սալլին արդեն քնած է։ Տատիկն է խոսում։ Ինչո՞ւ եք այսպես ուշ ժամի զանգահարում, Հոլդեն։ Գիտե՞ք ժամը քանիսն է։

— Գիտեմ։ Ես պետք է խոսեմ Սալլիի հետ։ Շատ կարևոր է։ Այստեղ տվեք նրան։

— Սալլին քնած է, երիտասարդ, զանգահարեցեք վաղը։ Բարի գիշեր։

— Արթնացրեք նրան, է՛յ, արթնացրեք նրան։ Լսո՞ւմ եք։

Ու հանկարծ մեկ ուրիշ ձայն խոսեց.

— Հոլդեն, ես եմ։

Սալլին էր։

— Այդ ի՞նչ օյիններ ես հանում։

— Սալլի, դո՞ւ ես։

— Այո, այո, մի՛ գոռա, խնդրեմ։ Հարբա՞ծ ես։

— Ըհը՛։ Լսիր։ Լսիր, է՛յ, ես հրապալույցին կգամ, լա՞վ։ Քեզ հետ կզարդարեմ այդ գրողի տարած տոնածառը, լա՞վ։ Լսո՞ւմ ես։ Լա՞վ։ Հա՞։

— Հա՛, հա՛, իսկ հիմա գնա քնիր։ Որտե՞ղ ես, ո՞վ կա հետդ։

— Ոչ ոք։ Ես եմ, մեն-մենակ, ես ինքս։— Օ՛հ, ինչպես էի հարբել։ Կանգնել եմ ու փորս բռնել։— Ինձ գնդակահարել են։ Ռոկկի ավազակախումբը ինձ սպանել է։ Լսո՞ւմ ես, Սալլի, Սալլի, դու ինձ լսո՞ւմ ես։

— Ես ոչինչ չեմ հասկանում։ Գնա քնիր։ Ես էլ պետք է քնեմ։ Վաղը զանգահարիր։

— Լսիր, Սալլի, ուզո՞ւմ ես գամ տոնածառը զարդարեմ։ Ուզո՞ւմ ես, հը՞։

— Այո, այո, բարի գիշեր։

Եվ լսափողը կախեց։

— Բարի գիշեր։ Բարի գիշեր, Սալլի, սիրելիս։ Սրես, իմ սիրելի աղջիկ,— ասում եմ։ Պատկերացնո՞ւմ եք, որքան եմ խմած։

Հետո ես էլ կախեցի լսափողը։ Ու մտածեցի, որ նա, հավանաբար, հենց նոր է վերադարձել հյուրընկալությունից։ Հանկարծ պատկերացրի, որ նա ինչ-որ տեղ ուրախանում է այդ լանատների ու մեկ էլ էնզովերցի այն թիթիզի հետ։ Իբր նրանք բոլորը լողում են մի վիթխարի թեյնիկի մեջ ու գրուցում այնպիսի խիստ ներքաճաշակ բառերով, կոկետությունները անում ցուցադրաբար, կոտրատվում։ Ես արդեն անիծում էի ինձ, որ զանգահարել եմ նրան։ Բայց հրր հարբում եմ, ասես անհորմալ լինեմ։

Երկար կանգնեցի այդ երիցս անիծյալ խցիկում։ Կախվեցի լսափողից, որպեսզի գիտակցությունս չկորցնեմ։ Ճիշտն ասած, սոսկալի վատ էի զգում։ Վերջապես, մի կերպ դուրս

Ձեղ խցիկից, գնացի զուգարան ,ապուշի նման օրորվելով, այնտեղ սառը ջուր լցրի լվացարանը ու գլուխս մինչև ականջները մտցրի ջրի մեջ։ Իսկ հետո, նույնիսկ չսրբեցի։ Թող կաթի ինչքան ուզում է։ Հետո մոտեցա պատուհանի մոտ ջեռուցիչին ու նստեցի վրան։ Այնպե՞ս տաք էր, հաճելի։ Հաճելի էր, որովհետև զոդացնում էի շան լակոտի նման։ Միծաղելի է, հենց որ խոսում եմ, սկսում եմ զոդացնել։

Անելիք չունեի, նստել էի ջեռուցիչի վրա ու հատակի ճերմակ սալիկներն էի հաշվում։ Սոսկալի թրջվել էի։ Ջուրը գլխիցս վզիս վրայով հոսում էր ծոցս։ Փողկապս ամբողջովին թրջվել էր, օձիքս, բայց ես թքած ունեի։ Այդ ժամանակ ներս մտավ այն տղան, որ նվագակցում էր Վալենսիային, կանաչի կերպարանքով այն գանգրահեր ֆրանսար, ու սկսեց սանրել իր ոսկեդուզն խոպոպիկները։ Ու մինչ կսանրվեր, ես նրա հետ զրույցի բռնվեցի, թեև նա ինձ հետ այնքան էլ հարգալիր չէր խոսում։

— Լսեք, դուք կտեսնե՞ք այդ Վալենսիային, երբ մտնեք դահլիճ,— հարցնում եմ։

— Դա դուրկ չէ հավանականություններ,— պատասխանում է։ Սրամտում է տխմարը։ Սրամիտ տխմարներն իմ գլխին եկովի են։

— Լսեցեք, իմ կողմից ողջույն հաղորդեք նրան։ Հարցրեք, այդ սառը ավազ մատուցողը նրան հայտնե՞լ է իմ ողջույնը, թե չէ։

— Ինչո՞ւ տուն չես գնում, Մաք։ Քանի՞ տարեկան կլինես։

— Ուշադրություն լսեցեք, ողջույնս հաղորդեք նրան։ Կհաղորդե՞ք։

— Ինչո՞ւ տուն չես գնում, Մաք։

— Ջեմ գնալու։ Օ՛հ, շատ լավ եք նվագում դուք, գրողը տանի։

Ես դիտմամբ էի շողոքորթում նրան։ Ճիշտն ասած նա զղվելի էր նվագում։

— Դուք կարող եք ռադիոյով ելույթ ունենալ,— ասում եմ,— Չէ՞ որ գիտեցիկ եք։ Ոսկեգույն գանգուրներ և այլն։ Ձեզ իմպրեսարիո է հարկավոր երևի, այո՞։

— Գնա տուն, Մաք, խելոք եղիր և գնա տուն, քնիր։

— Ես տուն չունեմ։ Առանց կատակի՝ ձեզ իմպռեսարիո հարկավո՞ր է։

Նա նույնիսկ չպատասխանեց։ Դուրս եկավ, և վերջ։ Սանրեց գանգուրները, սղալեց ու գնաց։ Ճիշտ և ճիշտ Ստրեպետիլներն է որ կա։ Այդ սիրունատես տականքները բոլորն իրար նման են։ Սանրվում են, սղալվում և քեզ միանակ թողնում։

Երբ վերջապես վեր կացա չհուսիչի վրայից ու գնացի հանդերձարան, սկսեցի դուռը։ Առանց մի պատճառի, քայլում էի ու լաց լինում։ Դուցե այն պատճառով, որ շատ էի միայնակ ու տխուր։ Իսկ երբ մոտեցա հանդերձարանին, չկարողացա գտնել համարը։ Բայց հանդերձապահուհին շատ լավ կին դուրս եկավ։ Վերարկուս տվեց առանց համարի, եվ «Պասիկ Շերլի Բինդի» ձայնապնակը։ Ես այն ուղղակի հետս ման էի ածում։ Ուզեցի մեկ դոլար տալ հանդերձապահուհուն, որ այդքան լավն է, բայց նա չվերցրեց։ Համոզում էր, որ գնամ տուն և քնեմ։ Ես փորձեցի ժամադրվել նրա հետ, բայց նա չցանկացավ։ Ասաց, որ ինձ մայր կապի։ Իսկ ես իմ ճերմակ մազերը ցույց եմ տալիս ու ասում, որ արդեն քառասունչորս տարեկան եմ, կատակով, իհարկե։ Նա շատ լավիկն էր։ Նրան դուր եկավ նույնիսկ իմ հիմար որսորդական գլխարկը։ Պատվիրեց դնել գլխիս, որովհետև մազերս ամբողջապես թաց էին։ Հիանալի կին էր։

Թարմ օդում հարբածությունս անցավ։ Սոսկալի ցուրտ էր և ատամներս իրար էին զարկվում։ Այնպես էի դողում, ոչ մի կերպ չէի կարողանում ինձ զսպել։ Գնացի Մեդիսոն-ավենյու և սպասեցի ավտոբուսի։ Գրեթե փող չէր մնացել գրպանումս, չէի կարող տաքսի նստել։ Բայց բոլորովին չէի ուզում նաև ավտոբուս նստել։ Բացի այդ, ինքս էլ չգիտեի ուր գնամ։ Վերցրի ու գնացի զբոսայգի։ Մտքովս անցավ, անցնել լճակի մոտով ու տեսնել որտե՞ղ են այն գրողի տարած բադերը, այնտե՞ղ են, թե չէ։ Ես այդպես էլ չիմացա՝ այնտե՞ղ են, թե ոչ։ Զբոսայգին հեռու չէր։ Իսկ ես, միևնույն է, գնալու տեղ չունեի։ Չգիտեի նույնիսկ որտեղ պետք է գիշերեմ, դրա համար էլ գնացի այնտեղ։ Հոգնածություն չէի զգում, առհասարակ ոչինչ չէի զգում, բացի սոսկալի տրամությունից։

Եվ հանկարծ, հենց որ ոտք դրեցի զբոսայգի, սարսափելի բան կատարվեց։ Ջեռքիցս գցեցի քրոջս ձայնապնակը։ Հազար կտոր եղավ։ Հենց ծրարի մեջ էլ փշրվեց։ Քիչ էր մնում հեկեկայի, այնպես էի ափսոսում, բայց միայն կտորները հանեցի ծրարի միջից ու լցրի գրպանս։ Դրանք այլևս ոչնչի պետք չէին, սակայն չէի կարողանում դեն նետել։ Ես քայլեցի զբոսայգու երկարությամբ։ Սոսկալի խավար էր։

Ամբողջ կյանքս Նյու-Յորքում է անցել, և կենտրոնական զբոսայգին գիտեմ հինգ մատիս պես, մանկուց ի վեր այնտեղ և՛ հեծանիվ եմ քշել, և՛ անվաչմուշկներ, և, այնուամենայնիվ, ոչ մի կերպ չէի կարողանում գտնել այդ լճակը։ Հրաշալի գիտեի, որ Հարավային ելքի կողմում է, բայց չէի կարողանում գտնել։ Հավանաբար, ավելի շատ էի հարբած, քան թվում էր։ Քայլում էի ու քայլում, առանց կանգ առնելու։ Գնալով ավելի ու ավելի շատ էր մթնում և ավելի ու ավելի սարսափելի դառնում։ Ոչ մի մարդ չհանդիպեց, և, փառք աստծո, թե չէ վախից վեր կթռչեի, երևի, եթե հանդիպեր։ Վերջապես լճակը գտա։ Կիսով չափ սառել էր, կիսով չափ՝ ոչ։ Բայց բադերը չկային։ Ես պատվեցի լճի ջուրը, քիչ մնաց նույնիսկ մեջն ընկնեի, բայց ոչ մի բադ չտեսա։ Մոտածեցի, գուցե ափին են քնած, թփերի մեջ, եթե առհասարակ այստեղ են։ Ահա հենց այդ ժամանակ էլ քիչ մնաց ջուրն ընկնեի, բայց բադեր չգտա։

Վերջապես նստեցի մի նստարանի, որտեղ այնքան էլ մութ չէր։ Սիրտս սոսկալի խառնում էր, իսկ մազերս, ծոծրակիս կողմում, սառցալուլաներ էին դարձել, թեև որսորդական գլխարկս գլխիս էր։ Վախեցա։ Հանկարծ թոքերի բորբոքում ստանամ ու մեռնե՞մ։ Պատկերացրի, թե ինչպես միլիոնավոր երկներեսանիներ կգան իմ թաղմանը։ Պապիկս էլ կգա Դետրոյթից,— նա միշտ բարձրաձայն տալիս է փողոցների անունները, երբ նրա հետ գնում ես ավտոբուսով,— մորաքույրերս էլ կգան,— ես հենց միայն հիսուն մորաքույր ունեմ,— կգան նաև իմ այդ տականք քեռորդիներն ու հորեղբոր որդիները։ Հսկայական ամբոխ կհավաքվի, խոսք չկա։ Դրանք բոլորը, եկել էին, երբ Ալլին մահացել էր, դրանց ամբողջ ոհմակը։ Դ. Բ-ն ինձ պատմում էր, որ մի հիմար-մորաքույր (նրա բերանից միշտ հոտ է գալիս) անվերջ հիանում էր, թե

որքան անվրդով է պառկած Ալլին։ Ես ներկա չեմ եղել, պառկած էի հիվանդանոցում։ Ստիպված էի բուժվել, խորն էի կտրել ձեռքս։

Ու հիմա հանկարծ սկսեցի մտածել, թե ինչպես եմ հիվանդանում թոքերի բորբոքումով (մազերս բոլորովին սառել էին) և ինչպես եմ մեռնում։ Ծնողներիս խղճացի, Հատկապես մայրիկիս, նա դեռ խելքի չէր եկել Ալլիի մահից հետո։ Պատկերացրի, թե ինչպես է կանգնել ու չի իմանում ինչ անի իմ կոստյումներն ու սպորտային իրերը։ Մի բան է ինձ մխիթարում։ Քուլրիկիս չեն թողնի մասնակցի իմ հիմար թաղմանը, որովհետև նա դեռ փոքր է։ Միակ սփոփանքս դա է։ Բայց մեկ էլ պատկերացրի, թե ամբողջ այդ անհեթեթ խումբը ինչպես է թաղում ինձ գերեզմանոցում, քար է գցում չիրիմիս, ազգանունս վրան գրված և նման բաներ։ Իսկ չուրջս՝ միայն մեռյալներ են։ Հա՛, բավական է մեռնես, անմիջապես կթաղեն։ Միակ հույսս այն է, որ երբ մեռնեմ, մի խելոք մարդ գտնվի ու մարմինս նետի գետը։ Ուր ուզում են գցեն, միայն թե ոչ այդ երիցս անիծյալ գերեզմանոցը։ Դեռ կիրակի օրերին էլ պիտի գան, ծաղիկներ դնեն փորիդ։ Դա էլ գարշելի սովորություն է։ Մեռածի ինչի՞ն են պետք ծաղիկները, ո՞ւմ են պետք։

Լավ եղանակին ծնողներս հաճախ են գնում գերեզմանոց, ծաղիկներ են դնում Ալլիի շիրիմին։ Ես երկու անգամ գնացի նրանց հետ, հետո դադարեցի գնալ։ Նախ այնքան էլ մի հաճելի բան չէ տեսնել նրան այդ գարշելի գերեզմանատանը։ Պատկած է, շուրջը միմիայն մեռելներ են ու շիրմաքարեր։ Երբ արև է, դեռ ոչինչ, բայց երկու անգամ, այո, երկու անգամ, երբ մենք այնտեղ էինք, անձրև սկսվեց։ Դա անտանելի էր։ Անձրևը թափվում էր ուղղակի այդ գրողի տարած սապանաքարի վրա, ուղղակի նրա փորին բուսած խոտի վրա։ Ասես դույլերով էր թափվում։ Եվ գերեզմանոցի այցելուները հանկարծ գժերի պես նետվեցին դեպի իրենց մեքենաները։ Այ թե ինչից տրաքվեցի։ Նրանք կարող են նստել մեքենա, միացնել ռադիոն ու գնալ մի որևէ լավ ռեստորան ճաշելու, բոլո՛րը, բոլո՛րը կարող են, բացի Ալլիից։ Անտանելի խաղություն էր։ Գիտեմ, որ այնտեղ գերեզմանատանը

միայն նրա մարմինն է, իսկ հոգին երկնքում է և նման գիմարություններ, բայց միևնույն է, ինձ համար անտանելի էր։ Այնպես կցանկանայի, որ նա այնտեղ չլիներ։ Այ, դուք նրան չեք ճանաչում, իսկ եթե ճանաչեիք, կհասկանայիք ինձ։ Երբ արև է, դեռ ոչինչ, բայց արևն էլ դուրս է գալիս, երբ քեֆը տալիս է, այնպես որ ոչինչ չես կարող անել։

Ու մեկ էլ, որպեսզի չմտածեմ թոքերի բորբոքման մասին, հանեցի փողերս ու սկսեցի հաշվել, թեև փողոցի լապտերի լույսի տակ գրեթե ոչինչ չէր երևում։ Ընդամենը երեք դոլար էր մնացել, քսան ցենտանոց հինգ թղթադրամ, և երկու՝ տասը ցենտանոց, մի ամբողջ կարողություն էի մսխել Փենսիից դուրս գալուց հետո։ Այդ ժամանակ մոտեցա լճակին ու սկսեցի դրամներն այնտեղ նետել՝ որտեղ որ դեռ չէր սառել։ Չգիտեմ ինչու էի այդպես անում, հավանաբար, որպեսզի ցրեմ թոքերի բորբոքման ու մահվան մասին մրոտքերս։ Բայց չհարողացա ցրել։

Էլի սկսեցի մտածել, թե ինչ կլինի Ֆիբիին, եթե ես հիվանդանամ թոքերի բորբոքումով ու մեռնեմ։ Իհարկե, երեխայություն է այդ մասին մտածելը, բայց այլևս չէի կարողանում կանգ առնել։ Երևի շատ կտխրի, որ ես մեռնեմ։ Նա լավ է վերաբերվում ինձ։ Ճիշտն ասած, իսկականից սիրում է ինձ։ Ոչ մի կերպ չէի կարողանում գլխիցս հանել այդ հիմար մտքերը, և, վերջապես, որոշեցի ահա թե ինչ անել, գնալ տուն և տեսնել նրան, գուցեև իսկապես հիվանդանում եմ ու մեռնում։ Մեր բնակարանի բանալին ունեի և որոշեցի, կամացուկ կմտնեմ ներս ու գոնե մի երկու խոսք կփոխանակեմ Ֆիբիի հետ։ Մի բան էր ինձ անհանգստացնում՝ մեր զբոսմուտքի դուռը սոսկալի ճռռում է։ Բավականին հին է մեր տունը, տնտեսվարն էլ անտանելի ալարկոտ է, բոլոր բնակարանների դռները ճռռում են ու ճռնչում։ Ես վախենում էի՝ ծնողներս հանկարծ լսեն, որ եկել եմ։ Այնուամենայնիվ, որոշեցի փորձել։

Անմիջապես դուրս վազեցի զբոսայգուց ու գնացի տուն։ Ամբողջ ճանապարհը ոտքով անցա։ Մենք շատ հեռու էինք ապրում, ու ես բոլորովին չէի հոգնել, հարբածությունս էլ անցել էր։ Միայն սոսկալի ցուրտ էր, և շուրջս ոչ ոք չկար։

Վաղուց բախտս այդպես չէր բերել. երբ եկա տուն, մեր մշտական վերելակավարը՝ Փիթը, չէր հերթապահում։ Վերելակի մոտ կանգնած էր մի ինչ-որ նոր, բոլորովին անծանոթ վերելակավար ,ու ես հասկացա, որ եթե անմիջապես դեմ-հանդիման չհինեմ ծնողներիցս որևէ մեկին, կկարողանամ տեսնել քույրիկիս, իսկ հետո կփախչեմ, և ոչ ոք չի իմանա, որ ես եկել եմ։ Ինչ խոսք, բախտս բերեց, բացի դրանից այդ նոր վերելակավարը մի տեսակ հիմարավուն էր. ես անփութորեն նետեցի, որ գնում եմ Դիկսթայնների մոտ։ Իսկ Դիկսթայնները ապրում էին մեր հարկում։ Որսորդական զբոսարկս արդեն հանել էի, որպեսզի տեսքս շատ կասկածելի չլինի, և արագ մտա վերելակ, իբրև թե շատ եմ շտապում։

Նա արդեն փակել էր դուռը և ուզում էր սեղմել կոճակը, բայց հանկարծ շուռ եկավ ու ասաց.

— Ներանք տանը չեն։ Հյուր են գնացել տասնչորսերորդ հարկը։

— Ոչինչ,— ասում եմ,— ինձ հանձնարարված է սպասել ես նրանց վարմիկն եմ։

Նա բութ ու կասկածամիտ հայացքով նայից ինձ։

— Այդ դեպքում ավելի լավ է ցածում սպասեք, երիտասարդ։

— Ես, հաճույքով, իհարկե, դա ավելի հարմար կլիներ,— ասում եմ,— բայց ոտքս ցավում է, պետք է որոշակի դիրքով մեկնեմ։ Ավելի լավ կլինի նստեմ նրանց դռան առաջ դրված բազկաթոռին։

Նա նույնիսկ չհասկացավ ինչ եմ ասում. միայն ասաց. «Ոն, տեսեք», ու բարձրացրեց վերև։ Վատ չտացվեց։ Հետաքրքիր է, բավական է ինչ-որ անհասկանալի բան ասես մարդուն, և նա կանի այնպես, ինչպես դու ես ուզում։

Ես դուրս եկա մեր հարկում և, կաղ շան պես ոտքս քարշ տալով, գնացի դեպի Դիկսթայնների բնակարանը։ Իսկ երբ շրխկաց վերելակի դուռը, ես դարձա դեպի մեր բնակարանը։ Ամեն ինչ հրաշալի էր գնում։ Հարբածությունս լրիվ անցել էր։ Ես հանեցի բանալին ու բացեցի շքամուտքի դուռը, մկանի պես կամացուկ։ Հետո շատ զգուշորեն կիսաբաց արի դուռը

և մտա նախասենյակ։ Այ քե ինչպիսի զանգատեր է մեռնում իմ մեջ։

Նախասենյակը մութ էր, ինչպես դժոխքում, իսկ լույսը, ինքներդ էլ հասկանում եք, չէի կարող միացնել։ Հարկավոր էր շատ զգուշորեն շարժվել, որպեսզի ոչ մի բանի չկպչեմ, աղմուկ չհանեմ։ Բայց ես զգացի, որ գոնվում եմ տանը։ Մեր նախասենյակում մի առանձնահատուկ բույր կա, հարազատ, ոչ մի տեղ այդպիսի բուրմունք չի զգացվում։ Ինքս էլ չգիտեմ ինչ բուրմունք է դա՝ ուտելիքի՞, օծանելիքի, չեմ կարող ասել, բայց անմիջապես զգում եմ, որ տանն եմ։ Սկզբում ցանկացա վերարկուս հանել և կախել նախասենյակի պահարանում, բայց այնտեղ լիքն են կախիչները և խելագար աղմուկ են հանում, երբ բացում ես դուռը, որա համար էլ մնացի վերարկուով։ Հետո կամացուկ, ոտքերիս մատների վրա, գնացի Ֆիբիի սենյակի կողմը։ Գիտեի, որ տնտեսուհին ինձ չի լսի, որովհետև նա մի թմբկաթաղանթ ուներ մրսած. երեխա ժամանակ եղբայրը ծղոտը մտցրել էր նրա ականջը, ինքն է ինձ պատմել։ Նա գրիպն էր լսում։ Բայց փոխարենը ծնողներս, մանավանդ մայրիկս, լավագույն խուզարկուի լսողություն ունեն։ Ես նրանց ննջարանի մոտից անցա հնարավորին չափ զգուշորեն։ Ջանացի նույնիսկ չշնչել։ Հայրս գեթ ոչինչ, բազկաթոռն էլ խփես գլխին, չի արթնանա, իսկ, այ, մայրիկս, Սիբիրում էլ որ հաղաս, կլսի։ Նա այնպես նյարդային է, ինչպես չգիտեմ թե ով ասեմ։ Գիշերները չի քնում, ծխում է անվերջ։

Թվում է, թե մի ամբողջ ժամ տևեց, մինչև հասա Ֆիբիի սենյակը։ Բայց նա այնտեղ չէր։ Միանգամայն մոռացել էի, ուղղակի գլխից դուրս էր թռել, որ նա քնում է Դ. Բ-ի աշխատասենյակում, երբ եղբայրս մեկնում է Հոլիվուդ կամ մի որևէ այլ տեղ։ Ֆիբին սիրում է քնել նրա աշխատասենյակում, որովհետև դա մեր բնակարանի ամենամեծ սենյակն է։ Ինչպես նաև այն բանի համար, որ այնտեղ կար մի մեծ սեղան, չափից դուրս մեծ, Դ. Բ-ն այն գնել է մի հարբեցող կնոջից Ֆիլադելֆիայում։ Մահճակալն էլ այնտեղ մեծ է, մի տասը մղոն երկարություն ունի, տասը մղոն լայնություն, չգիտեմ, թե որտեղից է ճարել այդ մահճակալը։ Մի խոսքով, Ֆիբին սիրում է քնել Դ. Բ-ի սենյակում, երբ նա այնտեղ չէ, Դ. Բ-ն

էլ չի առարկում։ Դուք մի տեսնե՞ք, թե նա դասերն ինչպես է պատրաստում այդ անհեթեթ սեղանի մոտ։ Սեղանն էլ մահճակալի չափ մեծ է։ Ֆիբին գրեթե չի երևում, երբ նստում է այդ սեղանի մոտ։ Իսկ դա նրան դուր է գալիս։ Նա ասում է, թե իր սենյակը չի սիրում այն բանի համար, որովհետև նեղվածք է։ Ասում է, թե սիրում է տարածվել։ Միծաղելի է ուղղակի, որտեղ պիտի տարածվի, հիմարիկը։

Ես կամացուկ մտա Դ. Բ-ի սենյակը ու վառեցի գրասեղանի վրայի լամպը։ Իմ Ֆիբին նույնիսկ շարժնացավ։ Ես երկար նայեցի նրան լույսի տակ։ Նա ամուր քնել էր, բարձի մի անկյունը ծալած։ Բերանը կիսաբաց էր։ Տարօրինակ բան է. բոլոր մեծերը քնում են բերանները բացած ու տհաճ տպավորություն են թողնում, իսկ երեխաները՝ ամենևին։ Երեխաները բոլորովին այլ ձևով են քնում։ Թեև նույնիսկ քնած ժամանակ բերանից չուր է հոսում, դարձյալ տհաճ չէ նայելը։

Ես կամացուկ շրջեցի սենյակում, տեսնեմ ինչն ինչպես է։ Ծրամադրություններս հանկարծ միանգամից բարձրացավ։ Էլ չէի մտածում, որ կհիվանդանամ թոքերի բորբոքումով։ Պարզապես տրամադրությունս բարձրացել էր։ Մահճակալի ոտքի աթոռին դրված էր Ֆիբիի ոգեստը։ Նա իր տարիքի համար շատ մաքրասեր էր։ Հասկանո՞ւմ եք, երբեք իրերը չէր նետում որ պատահեր, ինչպես ուրիշ երեխաներ։ Բոլորովին թափթփված չէր։ Աթոռի թիկնակին գցած էր կոստյումի բաց գարշնագույն ժակետը, որը մայրիկը նրա համար կանադայից էր բերել։ Բլուզն ու մնացած բաները դրված էին աթոռին, իսկ գուլպաները և կոշիկները՝ աթոռի տակ էին դրված։ Ես այդ կոշիկները դեռ չէի տեսել, նոր էին։ Մուգ դարչնագույն, փափուկ, ես էլ ունեմ այդպիսի կոշիկներ։ Դրանք շատ էին տաղում կոստյումին, որ մայրիկը բերել էր Կանադայից։ Մայրիկը նրան լավ էր հագցնում, շատ լավ։ Մայրիկս շատ բարձր ճաշակ ունի, բայց ոչ ամեն ինչում, իհարկե։ Ջմուշկներ, օրինակ, նա գնել չգիտի, բայց փոխարենը մնացած հարցերում անբասիր ճաշակի տեր է։ Ֆիբին միշտ այնպիսի պղեստաներ է հագնում, որ խելքդ կգնա։ Իսկ ուրիշ փոքրիկների հագին միշտ սոսկալի հագուստներ կտեսնես, նույնիսկ, եթե նրանց ծնողները հարուստ մարդիկ են։ Դուք մեր Ֆիբիին տեսնե՞ք այդ կոստյումով, որ մայրիկը Կանադայից է բերել։ Հաճելի է նայելը, աստված վկա։

Ես նստեցի եղբորս գրասեղանի մոտ ու նայեցի՝ տեսնեմ ինչ կա այնտեղ։ Ֆիբին այնտեղ դարսել էր իր գրքերն ու տետրերը։ Երեսին դրված էր «Հետաքրքրաշարժ թվաբանություն» վերնագրով մի գիրք։ Ես բացեցի այն ու առաջին էջի վրա տեսա մակագրությունը՝

ՖԻԲԻ ՈՒԵՋԵՐՖԻԼԴ ՔՈԼՖԻԼԴ
4Բ—1

Հազիվ զսպեցի ծիծաղս։ Նրա երկրորդ անունը Ջոզեֆինա է և ոչ թե Ուեզերֆիլդ։ Բայց նրան այդ անունը դուր չի գալիս։ Ու նա ամեն անգամ նոր երկրորդ անուն է ընտրում իր համար։

Թվաբանության տակ դրված էր աշխարհագրությունը, իսկ աշխարհագրության տակ՝ ուղղագրության դասագիրքը։ Նա հրաշալի է գրում։ Ընդհանրապես շատ լավ է սովորում, բայց ամենից լավ գրում է։ Ուղղագրության տակ բլոկնոտներ էին դարսված. նա հինգ հազար հատ բլոկնոտ կունենա, եթե ոչ ավելի։ Երբեք չեմ տեսել, որ այդ տարիքի փոքրիկն այդքան բլոկնոտներ ունենա։ Բացեցի առաջին բլոկնոտը և կարդացի գրառումը.

«Բեռնիս, սպասիր ինձ, դասամիջոցին շատ կարևոր բան պետք է ասեմ»։

Այդ ներսին էլ ուրիշ բան չկար։ Շրջեցի էջը, այստեղ էլ գրված էր.

«Ինչո՞ւ հարավարևելյան ալյասկայում պահածոյի այդքան գործարաններ կան։

Որովհետև այնտեղ շատ է սաղմոնը։

Ինչո՞ւ այնտեղ արժեքավոր փայտեղեն կա։

Որովհետև կլիման նպաստավոր է։

Ի՞նչ է արել մեր կառավարությունը, որպեսզի բեբևացնի ալյասկայի էսկիմոսների կյանքը։

Վաղվա համար սովորել։

Ֆիբի Ուեզերֆիլդ Քոլֆիլդ։

Ֆիբի Ու. Քոլֆիլդ։
տիրուհի Ֆիբի Ուեզերֆիլդ Քոլֆիլդ
ճանճներ Շերլիքն....

Շերլի դու ասում ես fո մոլորակը սատուռնն է, բայց դա ընդամենը մասն է չմուշկների բեր, երբ կգաս իմ եռնից։

Դ. Բ-ի գրասեղանի մոտ նստած՝ կարդացի ամբողջ գրառումները։ Ես արագ կարդացի, բայց կարող էի առավոտից երեկո կարդալ մանկական այդ ծուռտիկ-մուռտիկ ձեռագիրը, առավոտից երեկո, ումն ուզում է լինի։ Սիծաղելի են այդ երեխաների գրածները։ Հետո սիգարետ ծխեցի, հավանաբար, տուփիս մեջ մնացած վերջին սիգարետը։ Այդ օրը երևի հարյուր տուփ ծխած կլինեի։ Վերջապես որոշեցի արթնացնել Ֆիբիին։ Հո չէի կարող ամբողջ կյանքս նստել գրասեղանի մոտ, բացի այդ էլ, հանկարծ կարող էին հայտնվել ծնողներս, իսկ ես ուզում էի Ֆիբիի հետ առանձին տեսնվել։ Դրա համար էլ արթնացրի նրան։

Նա շատ հեշտ է արթնանում։ Հարկ չկա ոչ գոռալու, ոչ էլ նրան թափահարելու։ Պարզապես պետք է նստել մահճակալին ու ասել. «Ֆիբ, արթնացիր», և հոպ, կարթնանա։

— Հոլդե՛ն,— անմիջապես ճանաչեց ինձ։ Ով կախվեց վզիցս։ Նա շատ քնքշալիր է։ Այդքան փոքրիկ ու այդքա՜ն քնքշալիր։ Երբեմն նույնիսկ չափից դուրս։ Ես նրան համբուրեցի, ու նա ասաց. «Այս ե՞րբ ես եկել»— Շատ էր ուրախացել։ Անմիջապես երևաց։

— Կամա՜ց։ Նոր եկա։ Ինչպե՞ս ես։

— Հրաշալի։ Ստացե՞լ ես նամակս։ Ես ամբողջ հինգ էջ նամակ եմ գրել քեզ։

— Այո՛, այո՛, մի՛ աղմկիր, ստացել եմ, չնորհակալություն։

Նամակն ստացել էի, բայց չհասցրի պատասխանել։ Այնտեղ ամբողջը դպրոցական ներկայացման մասին էր գրված, որին նա մասնակցում էր։ Գրել էր, որ ես ուրբաթ երեկոն ազատ մնամ և անպայման գնամ նրա ներկայացումը դիտելու։

— Իսկ ինչպե՞ս է ձեր պիեսը,— հարցնում եմ։— Մոռացել եմ անունը։

— «Ննջյան մնչախաղ ամերիկացիների համար»,— ասում է։— Պիեսը հիմար բան է, բայց ես խաղում եմ Բենեդիկտ Առնոլդի դերը։ Ամենամեծ դերն իմն է։— Ո՞ւր փախավ քունը։ Նա այնպես էր ոգևորվել, երևում է, ամբողջ պիեսն ուզում էր պատմել։— Հասկանո՞ւմ ես, սկսվում է այնտեղից, որ ես մահամերձ եմ։ Ճրագալույց է, գալիս է ոգին և ասում՝ ամոթ չէ՞ ինձ և այլն։ Դե դու գիտես, ամոթ չէ՞, որ դավաճաններիր հայրենիքիդ և նման բաներ։ Կգա՞ս նայելու,— նա նույնիսկ թռչկոտեց մահճակալին։— Ես ամեն ինչ գրել եմ քեզ, ճի՞շտ է։ Կգա՞ս։

— Իհարկե, կգամ։ Հապա ինչպե՞ս։

— Հայրիկը չի կարող գալ։ Նա պետք է թռչի Կալիֆոռնիա։— Մի րոպե չէր անցել դեռ և քնատուության հետքն անգամ չէր երևում։ Ջոքել է անկողնում, բռնել է ձեռքս։— Լսիր,— ասում է,— մայրիկն ասաց, որ դու կգաս չորեքշաբթի օրը։ Այո՛, այո՛, չորեքշաբթի։

— Շուտ են բաց թողել։ Մի՛ աղմկիր։ Դու բոլորին կարթնացնես։

— Իսկ ժամը քանի՞սն է։ Մայրիկն ասաց, որ ուշ կվերադառնան։ Նրանք հյուր են գնացել Նորուոլք, Կոնետիկատ։ Գուշակիր, ես ինչ եմ արել այսօր ցերեկը։ Գիտե՞ս ինչ ֆիլմ եմ տեսել։ Գուշակիր։

— Չգիտեմ, լսիր հապա, իսկ նրանք չասացի՞ն որ ժամին...

— «Բժիշկը», բա՛։ Դա յուրահատուկ ֆիլմ է, ցուցադրում էին Լիստերովյան ընկերությունում։ Միայն մեկ օր, միմիայն մեկ օր, հասկանո՞ւմ ես։ Դա քենատուկցի մի բժշկի մասին է, նա վերմակը գցում է մի աղջիկ երեսին, աղջիկը հաշմանդամ է, չի կարող քայլել։ Բժշկին բանտ են նետեցնում և այլն։ Հրաշալի նկար է։

— Դե լավ, սպասիր։ Նրանք չասացի՞ն որ ժամին...

— Իսկ բժիշկը շատ է խղճում աղջկան։ Դրա համար էլ վերմակը գցում է նրա գլխին, որպեսզի աղջիկը խեղդվի։ Բժշկին ցմահ բանտարկության են դատապարտում, բայց աղջիկը, որին նա խեղդեց վերմակով, միշտ երազում այցելության է գալիս նրան ու ասում. «Շնորհակալություն», որ իրեն խեղդել է։ Պարզվում է, որ դա գթասրտություն է և ոչ

քե սպանություն։ Բայց միևնույն է, բժիշկը գիտի, որ արժանի է բանտ նստելու, որովհետև մարդը իր վրա չպետք է վերցնի այն, ինչ վերաբերում է աստծուն։ Մեզ մեր դասարանի աղջկա մայրը տարավ այնտեղ, Ալիսա Հոլեմբերգի մայրիկը։ Նա իմ ամենամոտ ընկերուհին է։ Ամբողջ դասարանից միայն նա կարող է...

— Դե սպասիր մի րոպե, լսո՞ւմ հա։ Ես քեզ հարցնում եմ, նրանք չասացի՞ն որ ժամին կվերադառնան տուն։

— Չէ, չասացին։ Մայրիկն ասաց՝ շատ ուշ։ Հայրիկը վերցրեց մեքենան, որպեսզի գնացքի համար չշտապին։ Իսկ մեր մեքենայի մեջ ռադիո կա։ Միայն քե մայրիկն ասում է չի կարելի միացնել, երբ ազմուկը շատ է։

Ես մի քիչ հանգստացա։ Դադարեցի հուզվելուց, քե ինձ կբռնացնեն տանը։ Համ էլ մտածեցի՝ կբռնացնեն, գրողի ծոցը, թող բռնացնեն։

Դուք մի մեր Ֆիբիին տեսնեի՛ք։ Նրա հագին կապույտ պիժամա կար, օձիքի վրա կարմիր փղիկներ։ Նա պաշտում է փղերին։

— Ուրեմն լավ նկար էր, հա՞,— հարցնում եմ։

— Հրաշալի, միայն քե Ալիսան հարբուխ ուներ, ու նրա մայրիկը անընդհատ հարցնում էր, քե հո չի՞ փողացնում։ Այնտեղ ֆիլմ են ցուցադրում, իսկ նա անընդհատ հարցեր է տալիս։ Հենց որ հասնում է ամենահետաքրքիր տեղը, մայրը կռանում է իմ վրայով ու հարցնում. «Չե՞ս փողացնում»։ Նյարդերիս վրա ազդում էր։

Այդ ժամանակ ես հիշեցի ձայնապնակը։

— Գիտե՞ս, ես քեզ համար մի ձայնապնակ էի գնել, բայց ճանապարհին ջարդել եմ։— Գրպանիցս հանեցի կտորներն ու ցույց տվի նրան։— Հարբած էի։

— Կտորները տուր ինձ,— ասում է։— Ես դրանք հավաքում եմ։— Ձեռքիցս վերցրեց կտորներն ու անմիջապես էլ բաքցրեց իր գիշերային պահարանում։ Միծաղելի է։

— Դ. Բ-ն Սննդյան տոներին տո՞ւն է գալու,— հարցնում եմ։

— Մայրիկն ասաց, կարող է գա, կարող է՝ ոչ, աշխատանքից է կախված։ Գուցե, հարկ լինի մնա Հոլիվուդում և սցենար գրի Աննապոլիսի մասին։

— Ֆեր աստված, ինչո՞ւ Աննապոլիսի։

— Այնտեղ սիրո մասին էլ կա, ուրիշ բաների մասին էլ։ Գուշակիր, քե ո՞վ է նկարահանվելու այնտեղ։ Ո՞ր կինոաստղը։ Ա՛յ, չես կարող գուշակել։

— Ինձ չի հետաքրքրում։ Մե՛ծ բան է, էլի։ Աննապոլիսի՞ մասին։ Ախր նա ի՞նչ գիտի Աննապոլիսի մասին, աստված իմ։ Դա ի՞նչ կապ ունի նրա պատմվածքների հետ։— Ո՛ւհ, ուղղակի խենթանալ կարելի է այդ ամենից։ Անիծյալ Հոլիվուդ։ Իսկ այդ ի՞նչ է եղել ձեռքդ,— հարցնում եմ։ Տեսա, որ արմունկին սպեղանի է կպցրած։ Նրա պիժաման անքե էր, դրա համար էլ նկատեցի։

— Մեր դասարանցի մի տղա՝ Կերտիս Վայնտրաուբը, գրոսայգու աստիճաններից իջնելիս ինձ հրեց։ Ուզո՞ւմ ես ցույց տամ։— Ու սկսեց քնից պոկել սպեղանին։

— Ձեռք մի՛ տուր, իսկ ինչո՞ւ հրեց։

— Չգիտեմ, կարծում եմ, նա ատում է ինձ,— ասում է Ֆիբին։— Ես ու մի աղջիկ՝ Սելմա էթերբերին, նրա սվիտերը քանաքոտել ենք։

— Լավ չեք արել, փոքրի՛կ ես, ինչ է։

— Չէ, բայց նա միշտ իմ ետևից է ման գալիս։ Հենց որ գնում եմ գրոսայգի, գալիս է ետևիցս։ Նյարդերիս վրա ազդում է։

— Իսկ գուցե դու նրան դո՞ւր ես գալիս։ Դրա համար չի կարելի մարդու սվիտերը քանաքոտել։

— Ջեմ ուզում նրան դուր գալ,— ասում է նա։ Ու հանկարծ խիստ կասկածանքով նայում է ինձ։— Հոլդեն, լսիր, այդ ինչո՞ւ ես չորեքշաբթիից շուտ եկել։

— Ի՞նչ։

Նրա հետ զգույշ պիտի լինեք։ Քե կարծում եք, որ հիմարիկ է, շատ եք սխալվում։

— Այդ ինչպե՞ս է, որ չորեքշաբթիից շուտ ես եկել,— կրկնում է նա։— Քեզ էլի՞ վռնդել են։

— Ես քեզ բացատրեցի։ Մեզ շուտ են արձակել։ Ամբողջ դասարանը...

— Չէ, քեզ վտարել են, վտարել են,— կրկնեց նա։ Ու բռունցքով այնպես հասցրեց ծնկիս։ Նա շատ ուժեղ է խփում,

երբ կովում էր— Վտարել են, Օ՛յ, Հոլդեն, —Նա ձեռքով փակեց բերանը, Ազնիվ խոսք, շատ տխրեց։

— Ո՞վ ասաց, որ վտարել են, Ոչ ոք քեզ այդպիսի...

— Չէ՛, վտարե՛լ են, վտարե՛լ են— Ու էլի հասցրեց ծնկիս, ես կարծում եք, որ չցավեց, սխալվում եք— Հայրիկը կսպանի քեզ,— ասում էր Ու հանկարծ երեսի վրա շրմփալով փովեց մահճակալին ու բարձը դրեց գլխին։ Նա հաճախ է այդպես անում։ Ուղղակի գժվում էր, ազնիվ խոսք։

— Դե ես՞ղ,— ասում եմ։— Ոչ ոք էլ ինձ չի սպանի։ Ոչ ոք ինձ մատով էլ չի կպչի... Դե, վե՛րջ տուր, Ֆիբ, մի կողմ դիր այդ հիմար բարձը։ Ոչ ոք էլ մտադիր չէ ինձ սպանել— Բայց նա բարձը ետ չքաշեց։ Նրա վրա չես կարող ազդել ոչ մի կերպ։ Պառկել է ու իր ասածն է պնդում։

— Հայրիկը քեզ կսպանի՛, կսպանի՛,— հազիվ էր լսվում բարձի տակից։

— Ոչ ոք էլ ինձ չի սպանի, բաներ մի հորինիր։ Նախ ես մեկնում եմ։ Գիտե՞ս, ինչ եմ անելու։ Աշխատանք կճարեմ մի որևէ ռանչոյում, գոնե ժամանակավորապես։ Ես մի տղա եմ ճանաչում, նրա պապիկը Կոլորադոյում ռանչո ունի։ Գուցե այնտեղ նրանք աշխատանք կտան։ Ես նամակ կգրեմ քեզ այնտեղից, որ գնամ։ Դե, վե՛րջ տուր։ Վերցրու այդ գրողի տարած բարձը։ Լսո՞ւմ ես, Ֆիբ, վերցրո՛ւ։ Դե, խնդրում եմ քեզ, վերցրո՛ւ։

Բայց նա պինդ բռնել է բարձը, և վերջ։ Ես փորձեցի քաշել վրայից, բայց շատ ուժեղ է այդ սատանան։ Ծե՛ծ բարձը քաշել է գլխին, էլ չես կարող պոկել։

— Ֆիբի, խնդրում եմ, դուրս արի բարձի տակից, լսո՞ւմ ես,— խնդրում եմ ես նրան։— Դե ես՞ղ... է՛յ, Ուեզերֆի՛լդ, դուրս արի, դե՛։

Չէ, չի ուզում։ Նրան երբեք չես կարող համոզել։ Վերջապես ես վեր կացա, գնացի հյուրասենյակ, սեղանի վրայի տուփից սիգարետ վերցրի ու դրեցի գրպանս։ Շատ էի հոգնել։

22

Երբ վերադարձա, նա դուրս էր եկել բարձի տակից. այդպես էլ գիտեի, պառկել էր մոխրի վրա, բայց ինձ չէր նայում։

Մոտեցա, նստեցի մահճակալին, նա անմիջապես շուռ եկավ, ինձ չի նայում։ Դրսի ծոցն է ուղարկում ինձ, բոլորտ է անում, Փենսիի սուսերամարտի թիմի տղաների նման, երբ ամբողջ սպորտային իրերը մոռացել էի մետրոյում։

— Իսկ ինչպե՞ս է ապրում քո Կիսելա Ուեզերֆիլդը,— հարցնում եմ։— Նրա մասին էլի՞ ես պատմվածք գրել։ Այն, որ ուղարկել էիր, ճամպրուկիս մեջ է։ Լավ պատմվածք է, ազնիվ խոսք։

— Հայրիկը քեզ կսպանի։

Որ մի բան է գցում գլուխը, արդեն էլ վերջ։

— Չէ, չի սպանի։ Ծայրահեղ դեպքում էլի կգոռգոռա, հետո կուղարկի զինվորական դպրոց։ Դրանից ավելի բան չի անի։ Իսկ երկրորդն էլ, ես այստեղ չեմ մնում։ Ես հեռու կլինեմ։ Շա՜տ հեռու, հավանաբար Կոլորադոյում, այդ ռանչոյում, որ ասացի։

— Հիմար-հիմար դուրս մի՛ տուր։ Դու իսկի ձի քշել չգիտես։

— Ինչպե՞ս չգիտեմ, գիտեմ։ Այդտեղ ի՞նչ մի իմանալու բան կա։ Համ էլ այնտեղ երկու րոպեում կսովորես,— ասում եմ։— Չհամարձակվեիս սպեղանին պոկել։— Նա անընդհատ քաշքշում էր թևի տակ սպեղանին։— Իսկ ո՞վ է այդպես կտրել մազերդ,— հարցնում եմ։ Նոր միայն նկատեցի, թե ինչպես վատ են կտրել նրա մազերը։ Ուղղակի խուզել-են։

— Քո գործը չէ,— ասում է։ Նա երբեմն այնպե՞ս կպատասխանի։ Մեծամտորեն, հասկանո՞ւմ եք— Երևի էլի բոլոր առարկաներից կտրվել ես,— ասում է դարձյալ մեծամտորեն։ Սիծաղս եկավ։ Նոսում է ուսուցչուհու նման, մինչդեռ մի մատ երեխա է։

— Չէ՛, ոչ բոլոր առարկաներից,— ասում եմ։— Անգլերենը հանձնել եմ։— Ու ես այդ ժամանակ կամքեցի նրա աուտուդիկը։ Պառկել է դունդուկծիկ դարձած, իսկ ետևը դուրս ցցել վերմակի տակից։ Ասենք, նա ետև էլ չունի։ Ես ուժգին չկամքեցի, բայց նա ուղեց խփել ձեռքիս ու վրիպեց։

Ու մեկ էլ ասաց.

— Ախ, ինչո՞ւ, ինչո՞ւ դու էլի,— ուզում էր ասել ինչու

էլի դուրս մնացիր դպրոցից։ Բայց գոնե այնպես ասաց, որ տրամադրությունս ընկավ, սոսկալի տխրեցի։

— Օ՛, տեր աստված, Ֆիբի, գոնե դո՛ւ մի հարցնի,— ասում եմ։— Բոլորն այդ են հարցնում, անհնար է դիմանալ։ Ինչո՞ւ, ինչո՞ւ... Հազար ու մի պատճառով։ Երբեք այդպիսի գարշելի դպրոցում չեմ սովորել։ Ամեն ինչ ցուցադրական է։ Ամեն ինչ ձևական։ Կամ սուտ։ Սրիկաների այդպիսի կուտակում կյանքումս չեմ տեսել։ Օրինակ՝ եթե սենյակում տղաներով նստած շատախոսում եք ու հանկարծ ինչ-որ մեկը ծեծում է դուռը, ուզում է ներս գալ, ոչ մի դեպքում նրան ներս չեն թողնի, եթե նա հիմարավուն է մի քիչ, պզուկոտ։ Դուռը երեսի վրա կծածկեն։ Այնտեղ մի երիցս անիծյալ գաղտնի միություն էլ կար, վախից ես էլ էի ընդունվել այդ միությունը։ Ու այնտեղ մի մզմզոտ պզուկոտ տղա էլ կար՝ Ռոբերտ Էկլին, նա էլ էր ուզում ընդունվել այդ միության մեջ։ Նրան չընդունեցին, Միայն այն պատճառով, որ մզմզոտ է և պզուկոտ։ Հիշելն անգամ զզրելի է։ Հավատա ինձ, այդպիսի կեղտոտ դպրոց կյանքումս չեմ տեսել։

Իմ Ֆիբին լուռ ականջ է դրել։ Ծոծրակից նկատեցի, որ լսում է, նա հիանալի կարող է լսել, երբ հետը զրուցում եսւ Եվ ամենածիծաղելին այն է, որ ամեն ինչ հասկանում է, ինչ էլ որ ասես։ Իսկապես հասկանում է։ Ես էլի սկսեցի Փենսիի մասին պատմել, ուզում էի ամեն ինչ ասած լինել։

— Այնտեղ մի քանի լավ ուսուցիչներ կային, բայց նրանք էլ էին երկերեսանի,— ասում եմ։— Վերցնենք հենց Թեկուզ այն ծերուկին, միստր Սպենսերին։ Նրա կինը միշտ մեզ տաք շոկոլադ էր հյուրասիրում։ Ընդհանրապես երկուսն էլ լավ մարդիկ էին։ Բայց դե մի տեսնեիր, ի՜նչ էր կատարվում նրա հետ, երբ ծերուկ Թերմերը՝ մեր դիրեկտորը, ներս էր գալիս պատմության դասին ու նստում ետևի նստարանին։ Միշտ նա գալիս էր ու կես ժամ նստում ետևի նստարանին։ Կարծես թե ծպտված, հասկանո՞ւմ եսւ Կնստեր, կնստեր, մեկ էլ կսկսեր ծերուկ Սպենսերին ընդհատել իր կրեատիվային օյիններով։ Իսկ ծերուկ Սպենսերը կաշվից դուրս էր գալիս, ծիծաղում էր, հալվում նրա առաջ, կարծես այդ Թերմերը մի ինչ-որ հանճար էր, գրողի ծոցը գնա նա։

— Մի՛ հայհոյիր, խնդրեմ։

— Սիրտդ կխառներ այնտեղ, ասեվածս վկա,— ասում եմ։— Կամ շրջանավարտների օրը վերցրու։ Նրանց մոտ այդպիսի օր կա, կոչվում է «Շրջանավարտների օր», երբ բոլոր տականքները, որ ավարտել են Փենսին, սկսած գրեթե 1776 թվականից, հավաքվում են դպրոցում ու իրե են գալիս ամբողջ տերիտորիայում, իրենց կանանց ու երեխաների հետ։ Դու մի տեսնե՛ր մի ծերուկի, որ մոտ հիսուն տարեկան կլիներ։ Ներս մտավ ուղիղ մեր սենյակը, դուռը ծեծեց, իհարկե, ու հարցրեց՝ կարելի՞ է գնա մեր զուգարանը։ Իսկ զուգարանը միջանցքի ծայրին էր, չհասկացանք, թե ինչու հատկապես մեզ հարցրեց։ Եվ գիտե՞ս ինչ ասաց մեզ։ Ասում է, ուզում եմ տեսնել զուգարանի դռան վրա պահպանվե՞լ են իմ անվան սկզբնատառերը։ Հասկանո՞ւմ ես, նա հարյուր տարի առաջ իր հիմար, ապուշ ապաշնորհ անվանատառերը փորագրել է զուգարանի դռան վրա և ուզում է տեսնել՝ պահպանվե՞լ են դրանք։ Եվ ես ու բնկերս ստիպված եղանք նրան ուղեկցել զուգարան և կանգնել այնտեղ, մինչև նա իր կրթամինային անվանատառերը կորոներ բոլոր դռների վրա։ Որոնում է և պատմում, թե Փենսիում անցկացրած տարիները իր կյանքի լավագույն տարիներն են եղել և ինչ-որ ապուշային խորհուրդներ է տալիս մեզ ապագայի համար։ Ես տա՞ս, ինչպե՞ս ձանձրացա նրանից։ Եվ ոչ թե ինչ-որ շատ տհաճ էր դրա համար, չէ՛։ Բոլորովին էլ պարտադիր չէ տհաճ լինել ձանձրույթ պատճառելու համար, վերջ ի վերջո լավ մարդն էլ կարող է տրամադրություն փչացնել։ Բավական է ապաշնորհ խորհուրդներ տալ, այդ ընթացքում սեփական անվանատառերը փնտրելով զուգարանի դռան վրա, ու վերջ։ Չգիտեմ, դուցե այնքան էլ չընկներ տրամադրությունս, եթե այդ տիպը նաև չհարբ։ Նա շնչահեղձ էր լինում աստիճանները բարձրանալու հետևանքով։ Փնտրում էր իր այդ անվանատառերն ու ֆոֆոցնում, շնչակտուր լինում։ Ե՛վ մեղք էր, և՛ ծիծաղելի ու միաժամանակ իմ ու Ստրեդլեյթերի գլուխն էր մտցնում, որ ինչ-որ հնարավոր է, յուրացնենք Փենսիում։ Տեր աստվա՛ծ, Ֆիբի։ Չեմ կարող քեզ բացատրել։ Ինձ ոչ մի բան դուր չէր գալիս Փենսիում։ Չեմ կարող բացատրել։

Այստեղ Ֆիբին ինչ-որ բան ասաց, որ ես լավ չլսեցի։ Նա գլուխն այնպես էր թաղել բարձի մեջ, որ ասածը չէր լսվում։

— Ի՞նչ,— ասում եմ,— շուռ արի իմ կողմը։ Չեմ լսում ինչ ես ասում, բարձի մեջ ես խոսում։

— Քեզ երբեք ոչինչ դուր չի գալիս։

Ես ավելի շատ տխրեցի, որ նա այդպես ասաց։

— Չէ, դուր է գալիս։ Շատ բան է դուր գալիս։ Այդպես մի՛ ասա։ Ինչո՞ւ ես այդպես ասում։

— Որովհետև դա ճիշտ է։ Քեզ ոչինչ դուր չի գալիս։ Բոլոր գլխոցները դուր չեն գալիս։ Աշխարհում ոչ մի բան դուր չի գալիս։ Դուր չի գալիս, և վերջ։

— Ճիշտ չէ, այստեղ դու սխալվում ես, այո՛, այո՛, սխալվում ես։ Այդ ինչե՞ր ես հորինում իմ մասին,— նրա ասածից տրամադրությունս սոսկալի ընկավ։

— Չէ, չեմ հորինում։ Դե թնկուզ մի բան ասա, որ դու սիրում ես։

— Ի՞նչ ասեմ։ Ասեմ, թե ի՞նչ եմ սիրում, խնդրեմ։

Գժբախտաբար, ես ոչ մի կերպ չէի կարողանում կենտրոնանալ։ Երբեմն դա շատ դժվար է։

— Դու ուզում ես ասել, թե ի՞նչն եմ շատ սիրում,— նորից հարցրի ես։

Նա միանգամից չպատասխանեց։ Ինձնից նա քաշվեց աստված գիտի թե որքան, մահճակալի մյուս ծայրը, ասես մի հարյուր մղոն։

— Դե պատասխանիր։ Ասեմ ի՞նչն եմ սիրում, թե՞ ընդհանրապես ինձ ինչ է դուր գալիս։

— Ի՞նչ ես սիրում։

— Լավ, կասեմ։— Բայց ոչ մի կերպ չէի կարողանում Հէքթցի միայն այն երկու միանձնուհիներին, որ փող էին հավաքում մաշված զամբյուղների մեջ։ Հատկապես այն մեկը, պղպատե ակնոցով։ Հիշեցի նաև մի տղայի, որի հետ սովորում էի էլքտոն-հիլլում։ Այնտեղ մի տղա կար՝ Ջեյմս Քասլը, որ ոչ մի կերպ ես չէր վերցնի իր խոսքը. նա մի բան էր ասել սոսկալի երևակայող մի տիպի՝ Ֆիլ Սթեյբլի մասին։ Ջեյմս Քասլը նրան անվանել էր ինքնասիրահարված մարդ, և այդ սրիկաներից՝ Սթեյբլի ընկերներից մեկը, լուրը տարել էր նրան։ Սթեյբլը վեց ուրիշ տղոցների հետ միասին եկավ Ջեյմս Քասլի սենյակը, փակեց դուռը և փորձեց ստիպել նրան ես վերցնել իր խոսքերը, բայց Ջեյմսը չհամաձայնեց։ Այդ ժամանակ նրանք գործի անցան։ Ես չեմ կարող ասել, թե նրանք ինչ արին,— սոսկալի ստորություն,— բայց Ջեյմսը չհամաձայնեց ես վերցնել իր խոսքերը, ահա թե ինչպիսին էր այդ Ջեյմս Քասլը։ Դուք մի տեսնեի՞ք նրան. նիհարո՞ւկ, փոքրի՞կ, ձեռքերն ասես մատիտներ լինեին։ Եվ ի վերջո, գիտե՞ք, նա ինչ արեց, փոխանակ հրաժարվելու իր խոսքերից։ Դուրս թռավ պատուհանից։ Ես ցնցուղարանում էի և այնտեղից լսեցի, թե ինչպես թրմփաց։ Կարծեցի, թե պատուհանից ինչ-որ բան ընկավ՝ ռադիոընդունիչ կամ պահարանիկ, բայց մտքովս չէր անցնում, թե տղա էր։ Այդ ժամանակ լսեցի, որ բոլորը միջանցքով դեպի աստիճաններն են վազում։ Խալաթս վրաս քաշեցի ու ես էլ վազ տվի, իսկ այնտեղ, աստիճանների վրա, պառկած էր մեր Ջեյմս Քասլը։ Նա արդեն մեռած էր, արնաթաթախ, ատամները դուրս էին թռած։ Բոլորը վախենում էին մոտենալ։ Իսկ նրա հագին այն սվիտերն էր, որ ես էի տվել։ Այդ սողուններին, որ փակել էին նրան սենյակում, ոչինչ չարին, միայն դպրոցից հեռացրին։ Նույնիսկ բանտ չնստեցրին։

Էլ ուրիշ բան չկարողացա հիշել։ Երկու միանձնուհիներին, որոնց հետ նախաճաշել էի, և այդ Ջեյմս Քասլին, որի հետ սովորել էի էլքտոն-հիլլում։ Ամենածիծաղելին այն է, որ ես գրեթե չէի ճանաչում այդ Ջեյմս Քասլին։ Նա շատ սուսիկ-փուսիկ տղա էր։ Մենք միևնույն դասարանում էինք սովորում, բայց նա մյուս ծայրում էր նստում և հազվադեպ էր դուրս գալիս գրատախտակի մոտ, պատասխանելու։ Իրար հետ զրուցել էինք ընդամենը մեկ անգամ, երբ նա խնդրեց այդ սվիտերը։ Ես քիչ մնաց զարմանքից մեռնեմ, երբ նա խնդրեց, այնքան անսպասելի էր դա։ Հիշում եմ, ատամներս էի լվանում լվացարանում, նա մոտեցավ ինձ ու ասաց, որ զարմիկն իրեն տանելու է սահադաշտ։ Մտքովս էլ չէր անցնում, թե նա գիտի, որ ես տաք սվիտեր ունեմ։ Ես նրա մասին միայն այնքանը գիտեի, որ դասամատյանում նրա անունը իմից անմիջապես առաջ էր՝ Քեյբլ Ռ., Քեյբլ Վ., Քոսլ, Քոլֆիլդ, մինչև հիմա էլ հիշում եմ։ Ու եթե ճիշտն ասենք, քիչ էր մնում մերժեի սվիտերս, որովհետև գրեթե չէի ճանաչում նրան։

— Ի՞նչ,— հարցրեց Ֆիբին, մինչ այդ էլ նա ինչ-որ բան

էր խոսել, բայց ես լավ չէի լսել.— Չես կարող ոչ մի բան ասել, ո՛չ մի բան։

— Չէ, կարո՛ղ եմ, կարո՛ղ եմ։

— Դե ասա՛։

— Ես սիրում եմ Ալլիին,— ասում եմ.— Ինձ դուր է գալիս նաև, ա՛յ, այսպես նստել ու զրուցել քեզ հետ և հազար ու մի բաներ հիշել։

— Ալլին մեռել է, դու միշտ միևնույն բանն ես կրկնում։ Քանի որ մարդը մեռել է ու երկինք համբառնել, ուրեմն հնարավոր չէ նրան իսկականից սիրել։

— Գիտեմ, որ մեռել է։ Ինչ է, քո կարծիքով ես չգիտե՞մ, որ մեռել է։ Եվ միևնույն է, ես կարողանում եմ նրան սիրել։ Չի կարելի դադարել մարդուն սիրելուց միայն այն պատճառով, որ նա մեռել է, գրողը տանի, մանավանդ որ նա լավն էր բոլոր կենդանի մնացածներից, հասկանո՞ւմ ես։

Այստեղ Ֆիբին ոչինչ չասաց, երբ ասելիք չունի, նա միշտ լռում է։

— Ա՛յ, հիմա էլ ինձ համար հաճելի է այստեղ,— ասացի ես.— Հասկանո՞ւմ ես, հիմա, նստել այստեղ ու խոսել հարար ու մի բաների մասին...

— Դե չէ, սա բոլորովին ուրիշ բան է։

— Ինչպե՞ս թե ուրիշ բան է։ Իհարկե, նույն բանն է։ Ինչո՞ւ է ուրիշ բան, գրողը տանի։ Զահլաս գնացել է։

— Վերջ տուր՝ գրողը, հա՛ գրողը։ Լավ, մեկ ուրիշ բան էլ ասա։ Ասա, թե ինչ կուզենայիր դառնալ։ Դե, ասենք, գիտնակա՞ն, փաստաբա՞ն, թե մեկ ուրիշ բան։

— Ինձնից ի՞նչ գիտնական, ես ընդունակ չեմ գիտությունների հարցում։

— Դե՛, փաստաբան, ինչպես հայրիկը։

— Փաստաբանը, հավանաբար, վատ չէ, բայց ինձ, միևնույն է, դուր չի գալիս,— ասում եմ.— Հասկանո՞ւմ ես, վատ չէ, երբ նրանք փրկում են անմեղ մարդկանց կյանքը և ընդհանրապես նման գործերով են զբաղվում, բայց բանն էլ հենց այն է, որ փաստաբանները նման բաներով չեն զբաղվում։ Եթե փաստաբան դառնաս, ապա փող պիտի կուտակես, գոլֆ խաղաս, բրիջ, մեքենաներ գնես, շոր կոկոտլներ խմես և ման գաս սենեմոլի պես։ Եվ ընդհանրապես, եթե ամբողջ

ժամանակ միայն մարդկանց կյանք փրկես, որտեղի՞ց պիտի իմանաս, թե հանուն ինչի ես դա անում, հանուն այն բանի, որ իսկապես փրկես մարդկանց կյա՞նքը, թե՞ հանուն այն բանի, որ նշանավոր փաստաբան կոչվես, որպեսզի բոլորը թիթիփացնեն քիկունքիդ ու շնորհավորեն, երբ շահես այդ երիցս անիծյալ դատը, մի խոսքով, ինչպես կինոներում, անպետք ֆիլմերում։ Ինչպե՞ս իմանալ, այդ ամենը դու ցուցադրաբա՞ր ես անում, թե՞ իսկապես, այդ ամենը կե՞ղծ է, թե կեղծ չի։ Ոչ մի կերպ չես կարող իմանալ։

Ես շատ էլ համոզված չէի՝ հասկանո՞ւմ էր այդ ամենն իմ Ֆիբին, թե չէ։ Այնուամենայնիվ, նա դեռ շա՞տ փոքրիկ է։ Բայց դե գոնե ուշադիր լսում էր ինձ։ Իսկ երբ լսում են քեզ, դա արդեն լավ է։

— Հայրիկը քեզ կսպանի, նա ուղղակի կսպանի քեզ,— ասում է նորից Ֆիբին։

Բայց ես նրան չէի լսում։ Մի միտք ծագեց գլխումս, միանգամայն վայրենի մի միտք։

— Գիտե՞ս ինչ կուզեի դառնալ,— ասում եմ.— Գիտե՞ս ինչ։ Եթե կարողանայի ընտրել այն, ինչ ուզում եմ, գրողը տանի։

— Վերջ տուր գրող ասելուն։ Հը, ի՞նչ։

— Գիտե՞ս, մի այսպիսի երգ կա. «Եթե դու երեկոյան բոնել ես մեկին տարեկանի արտում...»

— Այդպես չէ։ Հարկավոր է ասել «Եթե մեկը կանչել է մեկին երեկոյան տարեկանի արտում»։ Դա Ռոբերտ Բիրնսի բանաստեղծությունն է։

— Գիտեմ, որ Բիրնսի բանաստեղծությունն է։

Նա իրավացի էր։ Այնտեղ իսկապես այդպես է. «Եթե մեկը կանչել է մեկին երեկոյան տարեկանի արտում»։ Ճիշտն ասած ես մոռացել էի։

— Ինձ թվում էր, թե այնտեղ «բռնել է մեկին երեկոյան տարեկանի արտում»,— ասում եմ.— Հասկանո՞ւմ ես, ես պատկերացնում եմ, թե ինչպես փոքրիկները երեկոյան խաղում են վիթխարի դաշտում, տարեկանի արտում։ Հազարավոր փոքրիկներ, և շուրջը ոչ մի մարդ, ոչ մի մեծ չկա, բացի ինձնից։ Իսկ ես կանգնած եմ զառիթափի եզրին, անդունդի պռնկին. Հասկանո՞ւմ ես։ Ու իմ գործն այն է, որ

բռնեմ երեխաներին, թույլ չտամ, որ սայթաքեն, անդունդն ընկնեն։ Հասկանո՞ւմ ես, նրանք խաղում են ու չեն տեսնում ուր են գնում, իսկ ես վազում եմ ու բռնում նրանց, որ ցած չընկնեն։ Ահա և իմ պլիքողջ աշխատանքը։ Պահպանել երեխաներին տարեկանի արտում, անդունդի եզրին։ Հասկանում եմ, սա հիմարություն է, բայց միակ բանն է, որ ես ուզում եմ իսկապես։ Երևի ես հիմար եմ։

Ֆիբին երկար լռեց։ Հետո նորից կրկնեց.

— Հայրիկը քեզ կսպանի։

— Թող սպանի, ինչ ունեմ ամեն ինչի վրա։— Ես վեր կացա անկողնուց, որոշեցի զանգահարել մի մարդու՝ էլքտոն-հիլլի իմ անգլերենի ուսուցչին։ Նրան անվանում էին միստր Անտոլինի, հիմա նա ապրում էր Նյու-Յորքում։ Նա էլքտոն-հիլլից դուրս էր եկել և անգլերենի ուսուցչի աշխատանք էր ստացել Նյու-Յորքի համալսարանում։— Ես պետք է զանգահարեմ,— ասում եմ։— Հիմա կգամ։ Ջքնես, լսո՞ւմ ես։— Բոլորովին չէի ուզում; որ նա քներ, մինչև հեռախոսային խոսակցությունս ավարտելը։ Ֆիտեի, որ չի քնի, այնուամենայնիվ, խնդրեցի, որ չքնի։

Ես գնացի դեպի դուռը. Ֆիբին ձայն տվեցետևիցս.

— Հոլդի՛ն,— ու շուռ եկավ։

Նա նստել էր մահճակալին սիրունիկ, ուղղակի սքանչելի։

— Ֆիլիս Մարդուիս անունով մի աղջիկ ինձ սովորեցրել է գկրտալ,— ասում է նա։— Հապա, լսիր։

Ես ականջ դրեցի, բայց առանձնապես մի բան լսեցի։

— Վատ չէ,— ասում եմ։

Ու գնացի հյուրասենյակի, զանգահարելու անգլերենի իմ նախկին ուսուցչին՝ միստր Անտոլինիին։

23

Ջանդահարեցի շատ շատով, որովհետև վախենում էի հանկարծ ծնողներս գան։ Բայց նրանք չեկան։ Միստր Անտոլինին շատ բարեհամբույր մարդ էր։ Ասացի, որ կարող եմ գնալ իր մոտ, թեկուզ հենց հիմա։ Հավանաբար ես նրանց երկուսին էլ արթնացրի, որովհետև երկար ժամանակ ոչ ոք չէր մոտենում հեռախոսին։ Առաջին հերթին նա հարցրեց՝ ի՞նչ է պատահել, իսկ ես պատասխանեցի՝ առանձնապես ոչինչ։ Բայց այնուամենայնիվ, պատմեցի, որ ինձ հեռացրել են Փենսիից։ Միևնույն է, որևէ մեկին պետք է պատմեի։ Նա ասաց.

— Տեր աստվա՛ծ, դու ողորմա մեղավորներիս,— այնուամենայնիվ, նա հումորի զգացում ուներ։ Պատվիրեց թեկուզն հիմա գնալ իր մոտ, եթե պետք է։

Նա իմ ուսուցիչներից ամենալավն էր։ Բավական ջահել, իմ եղբայր Դ. Բ-ից մի քիչ էր մեծ, ու նրա հետ կարելի էր կատակել, թեև բոլորը հարգում էին նրան։ Նա առաջինը գետնից բարձրացրեց այն տղային, որ պատուհանից ցած էր նետվել, Ջեյմս Քասլին։ Ես ձեզ պատմել եմ նրա մասին։ Միստր Անտոլինին շոշափեց նրա զարկերակը, հետո հանեց իր բաճկոնը, ծածկեց Ջեյմս Քասլին ու գրկած տարավ լվացարանը։ Եվ նրա համար նշանակություն չուներ, որ իր բաճկոնը ամբողջապես արյունոտվել էր։

Ես վերադարձա Դ. Բ-ի սենյակը, իմ Ֆիբին այնտեղ արդեն միացրել էր ռադիոն։ Պարիզանակ էին հաղորդում։ Ռադիոն իջեցրել էր, որպեսզի չարթնացնի մեր տնտեսուհուն։ Դուք մի տեսնեիք Ֆիբիին նստել է մահճակալի մեջտեղը, ոտքերը ծալել, ասես յոգ լինի, և երաժշտություն է լսում։ Միծաղից կմեռնեիս։

— Վեր կաց,— ասում եմ։— Ուզո՞ւմ ես պարենք։

Ես ինքս էի նրան պարել սովորեցրել, երբ նա դեռևս շատ պստլիկ էր։ Նա շատ լավ էր պարում։ Ընդհանրապես ես միայն մի քիչ էի ցույց տվել նրան, նա ինքն էր սովորել։ Հնարավոր չէ մարդուն պարել սովորեցնել, ինչպես հարկն է, նա ինքը պետք է պարի։

— Հադիդ կոշիկնե՞ր կան,— ասում է։

— Ոչինչ, կհանեմ։ Վեր կաց։

Նա ցատկեց մահճակալից։ Սպասեց, մինչև հանեցի կոշիկներս, ու սկսեցինք պարել։ Նա շատ լավ է պարում։ Առհասարակ ես չեմ կարող տանել, որ մեծերը պարում են երեխաների հետ, սոսկալի տհաճարան է։ Օրինակ՝ մի որևէ հայրիկ հանկարծ սկսում է պարել իր աղջնակի հետ։ Նա այնպես անշնորհք է տանում աղջկան, որ հազուստը ետևի մասից անընդհատ բարձրանում է, համ էլ աղջիկը բոլորովին պարել

չդիտի, մի խոսքով, ողորմելի տնասրան է։ Բայց ես ռեստորանում չէի պարի Ֆիբիի հետ։ Մենք միայն տանն ենք պարում, այն էլ ոչ լրջորեն։ Թեև նրա բանն ուրիշ է, նա շատ լավ է պարում։ Հնազանդվում է քեզ։ Միայն հարկավոր է ամուր բռնել նրան, այդ դեպքում չի խանգարի, որ քո ոտքերը թեկուզ հարյուր անգամ ավելի երկար են։ Նա բոլորովին ետ չի մնում։ Նրա հետ և՛ անցումներ կարելի է անել, և՛ ամեն ձևի շրջադարձներ, նույնիսկ՝ չիտերրագ. երբեք ետ չի մնում։ Նրա հետ նույնիսկ տանգո կարելի է պարել, ահա թե ինչ։

Մենք չորս պար պարեցինք։ Ընդմիջումներին Ֆիբին այնպես հետաքրքիր է պահում իրեն, որ ծիծաղդ գալիս է։ Կանգնում է ու սպասում։ Չի խոսում, ոչինչ։ Սպասում է կանգնել ու սպասել, մինչև որ նվագախումբը նորից սկսի։ Իսկ իմ ծիծաղը գալիս է։ Բայց նա զայրանում է, նույնիսկ թույլ չի տալիս ծիծաղել։

Մի խոսքով, մենք չորս պար պարեցինք, և ես անջատեցի ռադիոն։ Իմ Ֆիբին մատով վերմակի տակ ու հարցրեց.

— Լա՞վ եմ պարում։

— Այն էլ ինչպե՜ս,— ասում եմ։ Ես նստեցի նրա մահճակալին։ Շունչս կտրվում էր։ Հավանաբար, չափից դուրս շատ էի ծխել։ Իսկ նա գոնե մի քիչ արագ շնչեր։

— Շոշափիր ճակատս,— ասում է նա հանկարծ։

— Ինչո՞ւ։

— Շոշափիր, ձեռքդ դիր։— Ես ձեռքս դրի նրա ճակատին, բայց բան չզգացի։— Շա՞տ է ջերմություն,— ասում է։

— Չէ, մի՞թե ջերմություն ունես։

— Այո, հիմա ես կբարձրացնեմ։ Մի անգամ էլ ձեռք տուր։

Ես նորից ձեռքս դրեցի և նորից ոչինչ չզգացի, բայց, այնուամենայնիվ, ասացի.

— Կարծես թե բարձրանում է։— Չէի ուզում, որ նրա մոտ ինչ-որ թերարժեքության կոմպլեքսի նման բան առաջանա։

Ֆիբին գլխով արեց։

— Ես նույնիսկ ջերմաչափում կարող եմ բարձրացնել։

— Ջեր-մա-չափում։ Ո՞վ է սովորեցրել քեզ։

— Ալիսա Հոլմբորգը։ Հարկավոր է ոտքերը ծալապատիկ

անել ու մտածել մի որևէ շատ տաք բանի մասին։ Օքինակ՝ ջեռուցիչի մասին։ Ու ճակատդ կսկսի այնպես վառվել, որ կարող ես որևէ մեկի ձեռքն այրել։

Ես հազիվ զսպեցի ծիծաղս։ Դիտմամբ ետ քաշեցի ձեռքս, ասես վախենալով այրվելուց։

— Շնորհակալություն, որ նախազգուշացրիր,— ասում եմ։

— Չէ, ես քեզ չէի այրի, շուտ կանգ կառնեի, չը՛շ։— Ու նա հանկարծ վեր թռավ մահճակալի վրա։ Ես սոսկալի վախեցա.

— Ի՞նչ եղավ։

— Մուտքի դուռն էր,— ասում է նա բարձր շշուկով։— Նրա՛նք են։

Ես վեր թռա, վազեցի սեղանի մոտ, անջատեցի լամպը։ Հետո հանգցրի սիգարետը, քնքուշը դրի գրպանս։ Ձեռքերս թափահարեցի, որպեսզի ցրեմ ծուխը։ Եվ ինչո՞ւ ծխեցի այստեղ, գրողը տանի ինձ։ Հետո առա կոշիկներս, խցկվեցի սյուտի պահարանն ու փակեցի դուռը։ Սիրտս թպրտում էր սոսկալի։ Լսեցի, թե ինչպես մայրիկը ներս մտավ։

— Ֆիբի՛,— ասում է,— մի՛ ձևանա։ Ես տեսա, որ քեզ մոտ լույս է վառվում, սիրելիս։

— Բարև,— պատասխանում է Ֆիբին։— Այո, քունս չէր տանում։ Ուրա՞խ անցավ ժամանակը։

— Շա՛տ,— ասաց մայրիկը, բայց զգացվում էր, որ ճիշտ չէ։ Նա բոլորովին չի սիրում հյուր գնալ։— Ինչո՞ւ չես քնել, թույլ տուր իմանալ։ Հո չե՞ս մրսում։

— Չէ, չեմ մրսում։ Պարզապես քունս չի տանում։

— Ֆիբի, դու կարծես թե ծխե՞լ ես։ Ճիշտն ասա, սիրելիս։

— Ի՞նչ,— հարցնում է Ֆիբին։

— Դու լսեցի՞ր ինչ հարցրի։

— Այո, մի րոպեով ծխեցի։ Միմիայն մի անգամ ծուխ արձակեցի։ Հետո պատուհանից դուրս նետեցի։

— Ինչո՞ւ ես այդպիսի բան արել։

— Քունս չէր տանում։

— Դու ինձ վշտացնում ես, Ֆիբի, շատ ես վշտացնում,— ասաց մայրիկը։— Երկրորդ վերմակը տա՞մ։

— Չէ, շնորհակալություն Բարի գիշեր,— ասաց Ֆիբին, երևում էր, չանում է շուտ ազատվել մորից։

— Իսկ կինոն ինչպե՞ս էր,— հարցնում է մայրիկը։

— Հրաշալի։ Միայն Ալիսայի մայրն էր խանգարում։ Ամբողջ ժամանակ իմ վրայով կռանում էր ու հարցնում՝ Ալիսան դողացնո՞ւմ է, թե չէ։ Տաքսիով էլ տուն եկանք։

— Ծող մի շոշափեմ ճակատդ։

— Չէ, ես չեմ վարակվել։ Նա միանգամայն առողջ էր։ Նրա մայրիկն էր ուղղակի հորինում։

— Լավ, քնիր, ասուված քեզ հետ։ Ճաշն ինչպե՞ս էր։

— Գարշանք,— ասաց Ֆիբին։

— Հիշո՞ւմ ես, հայրիկն ինչ ասաց քեզ. ուտելիքը չի կարելի «գարշանք» անվանել։ Եվ ինչո՞ւ էր «գարշանք»։ Քեզ ոչխարի մսով հրաշալի կոտլետ են տվել։ Հատուկ գնացել եմ լեկսինգտոն-ավենյու։

— Կոտլետը համով էր, բայց Ջարլինան մատուցելիս միշտ շնչում է երեսիս, ճաշի վրա էլ է շնչում, ամեն ինչի վրա էլ։

— Դե լավ, քնիր։ Համբուրիր մայրիկին։ Ազոթե՞լ ես։

— Այո, լոգարանում եմ ազոթել։ Բարի գիշեր։

— Բարի գիշեր, շուտ քնիր։ Գլուխս սոսկալի ցավում է,— ասում է մայրիկը։ Նրա գլուխը շատ հաճախ է ցավում։ Ուժեղ է ցավում։

— Ասպիրին ընդունիր,— ասում է Ֆիբին։— Հոլդենը չորեքշաբթի գալո՞ւ է։

— Որքան ինձ հայտնի է, այո։ Դե, լավ ծածկվիր։ Այ այդպես։

Լսեցի, թե մայրիկն ինչպես դուրս եկավ սենյակից և դուռը ծածկեց։ Մի րոպե սպասեցի, հետո դուրս եկա պահարանից։ Ու տեղնուտեղը կպա քրոջս՝ նա մահճակալից իջել էր, գալիս էր ինձ ազատելու, ու այնպես մութ էր, ինչպես դժոխքում։

— Ես քեզ վնասեցի՞,— հարցնում եմ։ Սոսկալի շշուկով էինք խոսում, քանի որ բոլորն էլ տանն էին։— Հարկավոր է փախչել,— ասում եմ։ Մթության մեջ շոշափեցի մահճակալը, նստեցի ու սկսեցի հագնել կոշիկներս։ Սոսկալի նյարդայնանում էի, չեմ թաքցնում։

— Մի՛ գնա,— շշնջաց Ֆիբին։— Սպասիր, մինչև քնեն։

— Չէ, հարկավոր է գնալ։ Հիմա իսկական ժամանակն է։ Մայրիկը գնաց լոգարան, իսկ հայրիկը հիմա կմիացնի ռադիոն՝ վերջին լուրերը լսելու։ Իսկական ժամանակն է։

Այնպես էի նյարդայնանում, որ չէի կարողանում նույնիսկ ինչպես հարկն է կոշիկներիս թելերը կապեմ։ Հարկե, ինձ չէին սպանի, եթե տանը տեսնեին, բայց սոսկալի տհաճ բան կլիներ։

— Որտեղ ես, է՞,— հարցնում եմ Ֆիբիին։ Ես նրան չեմ կարողանում տեսնել մթության մեջ։

— Այստեղ եմ։— Նա կանգնած էր ուղղակի կողքիս։ Իսկ ես չէի տեսնում։

— Ճամպրուկներս կայարանում են,— ասում եմ,— լսիր, Ֆիբ, փող-մող ունե՞ս։ Ինձ մոտ ոչինչ չի մնացել։

— Ունեմ, Սննդյան տանի նվերների համար։ Ես դեռ ոչինչ չեմ գնել։

— Ախ, միայն դա՞,— ես չէի ուզում նվերի փողերը վերցնել։

— Ես մի քիչ պարտք կտամ քեզ,— ասում է։ Ու լսեցի, թե ինչպես է որոնում Դ. Բ-ի դարակներում։ Բացում է դրանց դարակի հետից։ Սենյակում մութ էր ու ոչինչ չէր երեվում։— Որ գնաս, ինձ չես տեսնի թատրոնում,— ասում է ու ձայնը դողում է։

— Ինչպես չեմ տեսնի։ Մինչև քեզ չտեսնեմ, չեմ գնա։ Կարծում ես, այդպիսի ներկայացումը քաց կթողնե՞մ,— հարցնում եմ։— Գիտե՞ս ինչ կանեմ։ Ես միատեր Անտոլինիի մոտ կմնամ ասենք մինչև երեքշաբթի, մինչև երեկո։ Իսկ հետո կվերադառնամ տուն, եթե հաջողվի, ես քեզ կզանգահարեմ։

— Վերցրու,— ասում է։ Ինչ-որ փողեր է մեկնում ինձ, բայց ձեռքս չի գտնում։— Որտե՞ղ ես,— գտավ ձեռքս, փողը գրեց բուռս։

— Է՛, այսքան ինձ հարկավոր չէ,— ասում եմ։— Ինձ քնդամենը մեկ դոլլար տուր, բավական է։ Ազնիվ խոսք, մնացածը ետ վերցրու։

Ես փողը կրկին նրա բուռը դրի, նա չվերցրեց։

— Վերցրու, բոլորը վերցրու Հետո կտաս Կրերես Թատրոնս

— Որքա՞ն է այստեղ, տեր տասվածս

— Ութ դոլլար, ութսուն ցենտ Ջէյ, վաթսունհինգ Ես արդեն շատ եմ ծախսել

Ու հանկարծ ես լաց եղա Ոչ մի կերպ չկարողացա ինձ զսպել Ջանում եմ, որ ձայնս ոչ ոք չլսի, բայց լալիս եմ ու լալիս Ֆիբին շատ վախեցավ, երբ ես լաց եղա Մոտեցավ, հանգստացնում է, բայց մի՞թե միանգամից կարող ես լռել Նստել էի անկողնու եզրին ու լաց էի լինում, իսկ նա թևերը փաթաթել է վզիս, ես էլ նրան եմ փարվել ու լաց եմ լինում, ոչ մի կերպ չեմ կարողանում կանգ առնել Թվում էր, հիմա կխեղդվեմ արցունքներից Հեղճ Ֆիբին սոսկալի վախեցավ Պատուհանը բաց էր, ու ես զգում էի, թե նա ինչպես է դուրս սլանում միայն պիժամայով Ուզում էի նրան պահեցնել, ծածկել վերմակով, չէր պահում Վերջապես դադարեցի լաց լինել Բայց դեռ երկար-երկար ժամանակ չէի կարողանում հանգստանալ Հետո մինչև վերջ կոճկեցի վերարկուս, ասացի, որ անպայման լուր կտամ նրան Նա ասում էր, ավելի լավ կլինի ես պահեմ այդտեղ, իր սենյակում, բայց ասացի՝ չէ, ինձ արդեն սպասում է միստր Անտոլինին Հետո գրպանիցս հանեցի որսորդական գլխարկս ու նվիրեցի նրան Նա չափից դուրս շատ է սիրում ամեն տեսակ անհեթեթ գլխարկներ Սկզբում չէր ուզում վերցնել, բայց հետո համոզեցի Գրազ կգամ, որ հենց այդ գլխարկով էլ չնեց Նա այդպիսի բաներ սիրում է Նորից խոստացա հնարավորության դեպքում զանգել ու գնացի

Տնից գնալը, չգիտեմ ինչու, անհամեմատ հեշտ էր, քան ներս մտնելը Նախ՝ արդեն թքած ունեի, կրանե՞ն ինձ, թե ոչ Ազնիվ խոսք Ես մտածեցի, կրանեն՝ Ծո՛ղ բռնեն Անկեղծ ասած, նույնիսկ ուզում էի, որ բռնեն

Յած իջա ոտքով և ոչ թե վերելակով Իջնում էի ետնամուտքի աստիճաններով Քիչ էր մնում գլուխս խփեմ աղբի դույլին, բայց վերջապես դուրս եկա Վերելակավարը նույնիսկ չնկատեց ինձ Հավանաբար, մինչև հիմա էլ դեռ կարծում է, թե նստած եմ այդ Դիկսթայնների տանը

Միստր ու միսիս Անտոլինիներն ապրում էին մի շատ շքեղ բնակարանում, Սեթոն-Փլեյսի վրա, նրանք հյուրասենյակում նույնիսկ սեփական բար ունեին Հարկավոր էր միայն երկու աստիճան ցած իջնել Ես մի քանի անգամ եղել էի նրանց տանը, որովհետև, երբ հեռացել էի էլքտոն-հիլլից, միստր Անտոլինին գալիս էր մեր տուն իմանալու, թե ինչպես եմ ապրում ես, ու հաճախ էր մեր տանը ճաշում Այն ժամանակ նա ամուսնացած չէր Իսկ երբ ամուսնացավ, ես էի հաճախ թենիս խաղում նրա և միսիս Անտոլինիի հետ՝ Լոնգ-Այլենդում, Ֆորեստ-հիլլի թենիսի ակումբում Միսիս Անտոլինին այդ ակումբի անդամ էր, և չափից դուրս շատ փող ուներ Նա մի հարյուր տարով մեծ է միստր Անտոլինիից, բայց նրանք կարծեմ շատ են սիրում իրար Նախ երկուսն էլ շատ բարեկիրթ ու զարգացած են, հատկապես միստր Անտոլինին, թեև երբ նա զրուցում է որևէ մեկի հետ, ավելի շատ կատակում է, քան խելացի բաներ ասում մեր Դ. Բ-ի նման Միսիս Անտոլինին ավելի լուրջ է Նա ամբիցիայի նապաստներ է ունենում Երկուսն էլ կարդում են Դ. Բ-ի բոլոր պատմվածքները, ու երբ Դ. Բ-ն պատրաստվում էր գնալ Հոլիվուդ, միստր Անտոլինին զանգահարեց նրան ու համոզում էր չգնալ Բայց Դ. Բ-ն, միևնույն է, գնաց Միստր Անտոլինին ասում էր՝ եթե մարդը ընդունակ է գրելու Դ. Բ-ի նման, ապա նա անելիք չունի Հոլիվուդում Ես էլ ճիշտ և ճիշտ նույն բանն էի ասում

Ես ոտքով կգնայի մինչև նրանց տուն, որովհետև չէի ուզում ծախսել Ֆիբիի նվերի փողերը, բայց երբ տնից դուրս եկա, շատ վատ զգացի Գլխապտույտ ունեցա Սոխ ուված եղա տաքսի նստել Չէի ուզում, բայց հարկադրված էի Հապա էլ ինչպես գնայի

Միստր Անտոլինին ինքը բացեց դուռը, երբ զանգ տվի Վերելակավարը, այդ սրիկան, ոչ մի կերպ չէր թողնում, որ վերև գնամ Նա խալաթով ու կոշիկներով էր, ձեռքին՝ գավաթ Նա նրբաճաշակ մարդ էր, բայց ձիու պես խմում էր

— Հոլդե՛ն, տղաս,— ասում է,— տեր աստված, օ՛վ

պրեմի կես մետր բոյ ես քաշել։ Ուրախ եմ քեզ տեսնելուս համար։

— Դուք ինչպե՞ս եք, միստր Անտոլինի, միսիս Անտոլինը նի՞ն ինչպես է։

— Օ՛, մեզ մոտ ամեն ինչ հրաշալի է։ Այստեղ ուրախ բաներ կան։— Նա վերցրեց բաճկոնս ու կախեց։— Իսկ ես կարծում էի՝ կներկայանաս նորածնին գրկած։ Ինչ կարող ենք անել։ Թարթիչներիդ ձյուն է հալվել։

Նա ընդհանրապես սիրում էր սրամտել։ Հետո շուռ եկավ ու գոռաց խոհանոցի կողմը։

— Լիլիան, ի՞նչ եղավ սուրճը— կնոջ անունը Լիլիան է։

— Պատրաստ է,— գոռում է նա։— Հոլդե՞նն է։ Բա՛րև, Հոլդեն։

— Բարև, միսիս Անտոլինի։

Նրանց տանը միշտ հարկ է լինում գոռալ, որովհետև միշտ տարբեր սենյակներում են լինում։ Ծատրիճակ է, իհարկե։

— Նստիր, Հոլդեն,— ասաց միստր Անտոլինին։ Երևում է, քեֆը տեղն էր։ Սենյակն այնպիսի տեսք ուներ, ասես հյուրերը նոր էին գնացել։ Ամենուրեք բաժակներ էին դրված, ընկույզով լի ափսեներ։— Ներիր անկարգության համար,— ասում է միստր Անտոլինին։— Մենք միսիս Անտոլինի բարբիզոնցի ընկերներին էինք ընդունել... բարբիզոնցի բիզոններին։

Ես ծիծաղեցի, իսկ միսիս Անտոլինին ինչ-որ բան գոռաց խոհանոցից, բայց ես լավ չլսեցի։

— Ինչ ասա՞ց,— հարցնում եմ։

— Ասում է, չնայես ինձ, երբ ներս մտնեմ։ Նա անկողնուց է վեր կացել։ Սիգարետ ուզո՞ւմ ես։ Դու ծխո՞ւմ ես։

— Շնորհակալություն,— ես մի սիգարետ վերցրի արկղիկից։— Երբեմն ծխում եմ, բայց շատ չափավոր։

— Հավատում եմ, հավատում եմ։— Նա վիթխարի վառիչը մոտեցրեց ինձ։— Այդպես ուրեմն, դու և Փենսին բարեկամացել եք, ինչպես նավերը ծովում։

Նա սիրում էր այդպես փքուն արտահայտվել։ Երբեմն ինձ համար ծիծաղելի է, երբեմն էլ՝ բոլորովին ոչ։ Հաճախ է ինձ անցկացնում։ Ես չեմ կարող ասել, թե նա սրամիտ չէ, չէ՛, շատ է սրամիտ, բայց երբեմն ուղղակի ազդում են նյարդերիս վրա, երբ անվերջ նման արտահայտություններ են թույլ տալիս. «Բաժանվեցիք, ինչպես նավերը ծովում»։ Դ. Բ-ն էլ է երբեմն չարին անցնում։

— Իսկ ի՞նչ է պատահել,— հարցնում է միստր Անտոլինին։— Ինչպե՞ս է վիճակդ անգլերենից, մթե անգլերենից կտրված լինեիր, ես անմիջապես դուրս կհանեի քեզ անից։ Դու մեր դպրոցում շարադրությունից ամենաառաջինն էիր։

— Չէ, անգլերենը լավ եմ հանձնել։ Ճիշտ է, մենք ավելի շատ գրականություն էինք անցնում։ Ամբողջ քառորդի ընթացքում ես ընդամենը երկու շարադրություն եմ գրել, բայց երկուսի բանավոր խոսքից, մենք այդպիսի առարկա ենք անցնում՝ բանավոր խոսք։ Ես դրանից կարվեցի։

— Ինչո՞ւ։

— Ինքս էլ չգիտեմ,— ասում եմ։ Տրամադիր չէի պատմելու։ Վատ էի զգում, գլուխս էլ սկսեց ուժգին ցավել։ Սուսկալի։ Բայց նա, երևում է, չափից դուրս շատ էր ուզում ամեն ինչ իմանալ, ու ես սկսեցի պատմել։— Հասկանո՞ւմ եք, այդ դասերին ամեն մեկը պետք է վեր կենար և ելույթ ունենար։ Դե, դուք գիտեք, թեմատիկ իմպրովիզացիայի ձևով, և այլն։ Իսկ մթե հանկարծ որևէ մեկը չեզվում էր թեմային, բոլորը գոռում էին. «Շեղվեցի՛ր»։ Դա ինձ ուղղակի կատաղեցնում էր։ Դրա համար էլ մեկ ստացա։

— Ախր ինչո՞ւ։

— Դե ինքս էլ չգիտեմ։ Ազդում է նյարդերիս վրա, երբ գոռում են՝ «Շեղվեցի՛ր»։ Իսկ ես հենց սիրում եմ, որ շեղվում են թեմայից։ Շատ ավելի հետաքրքիր է լինում։

— Մի՞թե դու չես ուզում, որ մարդ ասի միայն այն, ինչի մասին քեզ պատմում է։

— Չէ, ուզում եմ, իհարկե։ Իհարկե, ուզում եմ, որ ինձ ամեն ինչ կարգով պատմեն։ Բայց չեմ սիրում, որ միշտ միևնույն բանն են պատմում։ Ինքս էլ չգիտեմ։ Հավանաբար, ինձ համար ձանձրալի է, երբ շարունակ միևնույն բանի մասին են պատմում։ Իհարկե, այն երեխաները, որոնք միշտ միևնույն թեմայի մասին էին պատմում, ամենաարժանահատականներն էին ստանում. դա արդարացի է։ Բայց մեզ մոտ մի տղա կար՝ Ռիչարդ Կինսելան։ Նա երբեք չէր կարո-

դանում խոսել նույն թեմայով, և նրան միշտ ընդհատում էին՝ «Շեղվո՞ւմ ես»։ Դա սոսկալի էր, որովհետև նախ նա շատ նյարդային էր, հասկանո՞ւմ եք, սոսկալի նյարդային տղա էր, նրա շրթունքները դողում էին նույնիսկ, երբ կանչում էին դաս պատասխանելու, և նա այնպես էր խոսում, որ ոչինչ չէր լսվում, հատկապես, եթե վերջում էիր նստած։ Իսկ երբ շրթունքները մի փոքր դադարում էին դողալուց, նա բոլորից հետաքրքիր էր պատմում։ Բայց դե փաստորեն նա էլ կորվեց։ Եվ միայն այն պատճառով, որ երեխաները ամբողջ ժամանակ գոռում էին՝ «Շեղվեցի՛ր»։ Օրինակ՝ նա պատմում էր այն ֆերմայի մասին, որն իր հայրը գնել էր Վերմոնտում։ Նա պատմում է, իսկ չորս կողմից կանչում են՝ «Շեղվո՞ւմ ես», իսկ մեր ուսուցիչ միստր Վինսոնը նրան մեկ դրեց այն բանի համար, որ իբր նա չի պատմում իրենց ֆերմայի կենդանական ու բուսական աշխարհի մասին։ Եվ նա՝ այդ Ռիչարդ Կինեյլան, այսպես էր պատմում. սկսում էր ֆերմայի մասին, ինչ կար այնտեղ, ինչ չկար. մեկ էլ սկսում էր պատմել մի նամակի մասին, որ մայրն ստացել էր քեռուց, թե այդ քեռին ինչպես էր քառասունորս տարեկանում հիվանդացել հոդացավով և ոչ որի չէր թողնում գնա իր մոտ հոսպիտալ, որովհետև չէր ուզում, որ իրեն տեսնեն հաշմանդամ դարձած։ Իհարկե, դա ֆերմայի հետ ոչ մի կապ չուներ, համաձայն եմ, բայց չէ՞ որ հետաքրքիր է։ Հետաքրքիր է, երբ մարդ պատմում է իր քեռու մասին։ Հատկապես, երբ նա սկսում է ինչ-որ բան դուրս տալ հոր ֆերմայի մասին ու հանկարծ ուզում է ինչ-որ բան պատմել իր քեռու մասին։ Եվ խոզուկյուն է գոռալ՝ «Շեղվո՞ւմ ես թեմայից», երբ նա նո՛ր-նոր է սկսել բացվել, ոգևորվել... չգիտեմ, դժվարանում եմ բացատրել։

Ես չէի էլ ուզում բացատրել։ Գլուխս շատ էր ցավում։ Ես միայն երազում էի, որ միսիս Անտուլինին շուտ բերեր սուրճը։ Ինձ սոսկալի զայրացնում է, որ կանչում են, թե սուրճը պատրաստ է, ու դեռ չեն բերում։

— Լսիր, Հոլդեն... Կարո՞ղ եմ ես քեզ մի համառոտ, մի քիչ հնաոճ մանկավարժական հարց տալ. չե՞ս կարծում, որ ամեն ինչ իր տեղն ու ժամանակն ունի։ Չե՞ս գտնում, որ եթե տարդն սկսել է պատմել հոր ֆերմայի մասին, պետք է

մինչև վերջ հետևի այդ թեմային, իսկ մեկ ուրիշ անգամ արդեն պատմի քեռու հիվանդության մասին։ Իսկ եթե քեռու հիվանդությունը այդքան հրապուրիչ թեմա է, ապա ինչո՞ւ հեռուորը հենց այդ թեման չընտրի, և ոչ թե ֆերման։

Տրամադիր չէի ոչ մտածելու և ոչ էլ պատասխանելու։ Սոսկալի ցավում էր գլուխս, և շատ վատ էի զգում ինձ։ Միշտն ասած, փորս էլ էր ցավում։

— Այո. երևի, այդպես է։ Հավանաբար, պետք է քեռու թեման վերցներ և ոչ թե ֆերմայի, քանի որ նրան քեռու թեման ավելի էր հետաքրքրում։ Բայց հասկանո՞ւմ եք, հաճախ ինքդ էլ չգիտես, թե ինչ է հետաքրքրում, մինչև որ չես սկսում պատմել անհետաքրքիրը։ Պատահում է, որ դա քեզանից կախված չի լինում։ Բայց, իմ կարծիքով, մարդուն հնարավորություն պետք է տան արտահայտվելու, եթե նա արդեն սկսել է հետաքրքիր պատմել ու տարվել է դրանով։ Շատ եմ սիրում, երբ մարդ հափշտակությամբ է պատմում։ Դա լավ բան է։ Դուք չեք համաձայնում այդ ուսուցչին, այդ Վինսոնին։ Նա ձեզ էլ համբերությունից կհանի, կկատաղեցնի, նա ու այդ դասարանցիները։ Հասկանո՞ւմ եք, նա անընդհատ կրկնում էր՝ հարկավոր է ընդհանրացնել, հարկավոր է պարզեցնել։ Բայց մի՞թե կարելի է ամեն ինչ պարզեցնել, ամեն ինչ ընդհանրացնել։ Չէ՛, դուք այդ Վինսոնին չեք ճանաչում։ Իհարկե, անմիջապես երևում է, որ նա զարգացած մարդ է և այլն, բայց ուղեղը որոշակիորեն լավ չի աշխատում։

— Ահա և վերջապես սուրճը, չենտլմեններ,— ասաց միսիս Անտուլինին։ Նա մատուցարանով բերեց սուրճ, թխվածք և ամեն տեսակ ուտելիքներ։— Հոլդեն, ինձ մի՛ նայիր, ես սոսկալի տեսք ունեմ։

— Բարի ձեզ, միսիս Անտուլինի,— ասում եմ։ Ես ուզում եմ վեր կենալ, բայց միստր Անտուլինին թևիցս քաշում է, ետևցնում։ Միսիս Անտուլինի գլուխն ամբողջապես ծածկված էր գանդրացնելու այդ երկաթե բաներով, շրթունքները ներկված չէին։ Ընդհանրապես տեսքը լավ չէր, մի տեսակ պառաված էր։

— Ես ամեն ինչ կդնեմ այստեղ, ինքներդ հյուրասիրվեք,— ասաց նա։ Հետո մատուցարանը դրեց ծխատեղանին, քաժակները ետ հրեց։— Ինչպե՞ս է մայրիկդ, Հոլդեն։

— Ոչինչ, շնորհակալություն։ Ես վաղուց չեմ տեսել նրան, բայց վերջին անգամ...

— Սիրելիս, ինչ որ կարող է պետք լինել Հոլդենին, սպիտակեղենի պահարանում է։ Վերին դարակի վրա։ Ես պատկում եմ քնելու։ Շատ եմ հոգնել,— ասաց միսիս Անտոլինիին։ Դա երևում էր նրա վրայից.— Տղաներ, կարո՞ղ եք ինքներդ անկողին բացել։

— Ամեն ինչ կանենք։ Շուտ արա պառկիր,— ասաց միստր Անտոլինիին։ Նա համբուրեց կնոջը, սա հրաժեշտ տվեց ինձ ու գնաց ննջարան։ Նրանք միշտ համբուրվում էին ուրիշների ներկայությամբ։

Ես կես բաժակ սուրճ խմեցի և թխվածք կերա, որ քարի պես ամուր էր։ Իսկ միստր Անտոլինին դարձյալ վիսկի խմեց։ Երևում է, նա վիսկին բոլորովին չէր թուլացնում։ Իսկական հարբեցող կդառնա, եթե իրեն չզսպի։

— Ես քո հայրիկի հետ նախաճաշել եմ երկու շաբաթ առաջ,— ասում է նա հանկարծ։— Դու այդ մասին գիտե՞ր։

— Ոչ, չգիտեի։

Բայց քեզ, թերևս, հայտնի է, որ նա շատ է մտահոգված քո ճակատագրով։

— Այո, իհարկե, իհարկե, հայտնի է։

— Հավանարար, ինձ դանգահարելուց առաջ, նա բավական ուշադրություն դարձրել քո նախկին դիրեկտորից այն մասին, որ դու ոչ մի հետաքրքրություն չես ցուցաբերում պարապմունքների հանդեպ։ Դասախոսություններից ես թողում, դասերդ չես պարապում, ընդհանրապես բոլորովին ոչ մի բանում...

— Ոչ, ես ոչ մի բան բաց չեմ թողել։ Մեզ արգելվում էր դասերից բացակայել։ Երբեմն միայն այդ բանավոր խոսքին չէի գնում, բայց ոչ մի բան բաց չեմ թողել։

Բոլորովին չէի ուզում խոսել իմ գործերի մասին։ Սուրճից մի փոքր դադարից փորիս ցավը, բայց գլուխս ուղղակի տրաքվում էր։

Միստր Անտոլինին երկրորդ սիգարետը ծխեց։ Նա շոգեքարշի պես էր ծխում։ Հետո ասաց.

— Անկեղծ ասած, չգիտեմ ինչ ասեմ քեզ, Հոլդեն։

— Հասկանում եմ։ Ինձ հետ դժվար է խոսելը։ Գիտեմ։

— Ինձ թվում է, թե դու գնում ես դեպի մի սարսափելի անդունդ։ Բայց անկեղծ ասած, ես ինքս էլ չգիտեմ... Դու ինձ լսո՞ւմ ես։

— Այո։

Երևում էր, որ նա տրամադրված էր շատ լրջորեն խոսելու։

— Գուցե դու կհասնես այն բանին, որ երեսուն տարեկանում կդառնաս որևէ բարի մշտական այցելու և կատես բոլոր այն մարդկանց, ովքեր սրտաբուստ նման են համալսարանական ֆուտբոլային թիմի չեմպիոնին։ Գուցե ժամանակին կդառնաս բավական կիրթ ու կատես այն մարդկանց, ովքեր սխալներով են խոսում։ Գուցեև կծառայես մի որևէ գրասենյակում ու ամրակներ կնետես քեզ չզոհացնող սղագրուհու վրա։ Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում։

— Այո, իհարկե,— ասացի։ Ես նրան շատ լավ էի հասկանում։— Բայց դուք իրավացի չեք այն բանում, թե ես բոլորին կատեմ։ Ամեն տիպի ֆուտբոլային չեմպիոնների և այլն։ Այդտեղ դուք սխալվում եք։ Շատ քիչ մարդիկ կան, որոնց ես ատում եմ։ Պատահել է, որ ես հանկարծ ատել եմ որևէ մեկին, ասենք, ինչպես այդ Սորեղլեյթերին, որի հետ ապրում էի Փենսիում, կամ այն մյուսին՝ Ռոբերտ Էկլիին։ Պատահել է, իհարկե, որ ես նրանց սոսկալի ատել եմ, խոստովանում եմ, բայց միշտ էլ ոչ երկար ժամանակով, հասկանո՞ւմ եք։ Երբեմն մի որոշ ժամանակ չես տեսնում նրան, նա չի գալիս քո սենյակը կամ նրան չես հանդիպում ճաշարանում և կարոտում ես։ Հասկանո՞ւմ եք, նույնիսկ կարոտում ես նրան։

Միստր Անտոլինին երկար լռեց, հետո վեր կացավ, մի կտոր սառույց գցեց վիսկու մեջ ու նորից նստեց։ Երևում է, մտքերի մեջ ընկավ։ Ավելի լավ կաներ խոսակցությունը առավոտյան շարունակեր և ոչ թե հիմա, բայց նա արդեն տրամադրվել էր։ Մարդիկ միշտ վիճելու ցանկություն են ունենում, երբ դու բոլորովին տրամադիր չես այդ բանին։

— Լա՛վ... Այժմ ուշադիր լսիր ինձ։ Գուցե հիմա էլ բավականաչափ հստակ չկարողանամ արտահայտել իմ միտքը, բայց մի երկու օր հետո նամակ կգրեմ քեզ։ Իսկ առայժմ լսիր։

Երևում էր, որ նա չանում է կենտրոնանալ։ Հետո ասաց։

— Անդունդը, ուր թռչում ես դու, սոսկալի անդունդ է։ Նա, ով ընկնում է այնտեղ, երբեք չի դադում հատակը։ Շատ ընկնակում է ավելի ու ավելի խոր գնալ։ Դա պատահում է այնպիսի մարդկանց, որոնք իրենց կյանքի ինչ-որ շրջանում որոնել են մի բան, որը երբեք չի կարող տալ նրանց առօրյա շրջապատը։ Ավելի ճիշտ, կարծել են, թե առօրյա շրջապատում նրանք ոչինչ չեն կարող գտնել իրենց համար։ Եվ գադարել են որոնել։ Դադարել են որոնել, նույնիսկ առանց փորձելու որևէ բան գտնել։ Դու հետևո՞ւմ ես իմ մտքին։

— Այո, սըր։

— Իսկապե՞ս։

— Այո։

Նա վեր կացավ, էլի վիսկի լցրեց իր համար։ Հետո նորից նստեց։ Եվ երկար ժամանակ լուռ մնաց։

— Չեմ ուզում քեզ վախեցնել,— ասաց նա վերջապես,— բայց ես շատ հստակ եմ տեսնում, թե դու ինչպես ազնվորեն գոհարերում ես կյանքդ մի ինչ-որ դատարկ, անարժեք գործի համար— Նա նայեց ինձ առօրինակ աչքերով։— Լսիր, եթե ես մի բան գրեմ քեզ, խոստանո՞ւմ ես ուշադիր կարդալ։ Եվ պահպանել։

— Այո, իհարկե,— ասացի։ Ես իսկապես պահպանել եմ թերթիկը, որ այն ժամանակ նա տվեց ինձ։ Հիմա էլ ինձ մոտ է։

Նա մոտեցավ իր գրասեղանին և, առանց նստելու, ինչ-որ բան գրեց։ Հետո եկավ ու նստեց՝ թերթիկը ձեռքին բռնած։

— Որքան էլ առօրինակ լինի, սրա գրողը բանաստեղծ չէ։ Սա ասել է Վիլհելմ Շտեկել անունով մի հոգեվերլուծող։ Ահա թե նա... Դու ինձ լսո՞ւմ ես։

— Դե, իհարկե։

— Ահա թե ինչ է ասում նա. «Մարդու չհասունացածության նշանը այն է, որ նա ուզում է ազնվորեն մեռնել հանուն արդար գործի, իսկ հասունացածության նշանը՝ ա՛յն, որ ուզում է հնազանդորեն ապրել հանուն արդար գործի»։

Նա թեքվեց ու թուղթը հանձնեց ինձ։ Ես մի անգամ էլ կարդացի, հետո շնորհակալություն հայտնեցի և թուղթը դրեցի գրպանս։ Այնուամենայնիվ, մեծ սիրալիրություն էր, որ նա այդպես չանում էր ինձ համար։ Ափսոս, որ ոչ մի կերպ չէի կարողանում կենտրոնանալ։ Սոսկալի հոգնել էի, ճիշտն ասած։

Իսկ նա բոլորովին չէր հոգնել։ Եվ որ կարևորն է, շատ էր խմել։

— Կգա մի օր,— հանկարծ ասում է նա,— որ դու հարկադրված կլինես որոշել՝ ուր գնալ։ Եվ անմիջապես կգնաս այնտեղ, ուր որոշել ես։ Անհապա՛ղ։ Դու իրավունք չունես կորցնել ոչ մի րոպե։ Դա քեզ չի կարելի։

Ես գլխով արեցի, որովհետև նա նայում էր ուղիղ աչքերիս մեջ, բայց այնքան էլ լավ չէի հասկանում ինչի մասին է խոսում։ Մի քիչ գլխի էի ընկնում, բայց և այնպես համոզված չէի, թե ճիշտ եմ հասկանում։ Ջափից դուրս շատ էի հոգնած, ազնիվ խոսք։

— Չեմ ուզում կրկնել միևնույն բանը, —ասում է նա,— բայց կարծում եմ, որ երբ որոշես քո հետագա ուղին, առաջին հերթին հարկադրված կլինես լրջորեն վերաբերվել դրպրոցական պարապմունքներին։ Այո, հարկադրված կլինես, դու մտածող մարդ ես, անկախ այն բանից, դուր է գալիս քեզ այդ անվանումը, թե չէ։ Դու գիտությամբ ես զբաղվում։ Ու ինձ թվում է, երբ կհաղթահարես բոլոր այդ միստր Վինդսիններին և նրանց «բանավոր կոմպոզիցիաները», դու...

— Վինսոններին,— ասացի ես։ Նա, հավանաբար մոտածում էր միստր Վինսոնների մասին և ոչ թե Վինդսիների։ Ամերիկամենայնիվ, փղոսր ընդհատեցի նրան։

— Լավ, բոլոր այդ միստր Վինսոններին։ Երբ դու կհաղթահարես բոլոր այդ Վինսոններին, կսկսես ավելի ու ավելի մոտենալ (իհարկե, եթե ցանկանաս, եթե ձգտես, սպասես դրան), ավելի կմոտենաս այն գիտելիքներին, որոնք մոտ են քո սրտին։ Ու այդ ժամանակ կպարզես, որ դու առաջինը չես, որոնց շփոթություն, վախ, նույնիսկ զզվանք են պատճառել մարդիկ ու նրանց արարքները։ Կհասկանաս, որ միայն դու չես զգացել այդ բանը, և դա կուրախացնի, սատար կլինի քեզ։ Շատ շատերն են ապրել այդ շփոթությունը բարոյական ու հոգեկան հարցերում, որն ապրում ես դու հիմա։ Բարեբախտաբար, նրանցից ոմանք գրի են առել իրենց ապրումները։ Դու նրանցից շատ բան կսովորես, եթե, իհարկե,

ցանկանաս։ Ինչպես և ուրիշները կսովորեն քեզնից, եթե դու սեփիք ունենաս նրանց։ Փոխադարձ օգնությունը հրաշալի բան է։ Եվ դա ոչ միայն գիտելիքների ասպարեզում, այլև՝ պոեզիայի, այլև՝ պատմության։

Նա կանգ առավ, խմեց մի կում, էլի շարունակեց։ Երեվում է շատ էր տարվել։ Լավ է, չէի ընդհատում, չէի կանգնեցնում։

— Չեմ ուզում քեզ նեղչնչել, թե միայն կրթված ու զարգացած մարդիկ կարող են արժեքավոր ներմուծում կատարել կյանքում,— շարունակեց նա։— Դա այդպես չէ։ Բայց ես հաստատում եմ, որ կրթված ու զարգացած մարդիկ տաղանդավոր ու ստեղծագործող լինելու դեպքում, որ զգեստաբար հազվադեպ է պատահում, ավելի մեծ ու արժեքավոր ժառանգություն են թողնում իրենցից հետո, քան միմիայն տաղանդավոր ու ստեղծագործող մարդիկ։ Նրանք չանում են իրենց միտքն արտահայտել հնարավորին չափ պարզ ու հրատակ, իրենց գաղափարները մինչև վերջ են հասցնում համառորեն ու հաստատակամորեն։ Եվ, որ ամենակարևորն է, տասից ինը դեպքում գիտության մարդիկ անհամեմատ ավելի համեստ են, քան չկրթված, թեկուզև մտածող մարդիկ։ Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում։

— Այո, սըր։

Նա բավական երկար լուռ մնաց։ Զգիտեմ, պատահե՞լ է ձեզ, թե ոչ, բայց շատ դժվար է նստել ու սպասել, մինչև որ մտասուզված մարդը կրկին խոսի։ Ես ամեն կերպ չանում էի ինձ զսպել, որ չհորանջեմ։ Ոչ թե այն պատճառով, որ ձանձրալի էր լսելը, բոլորովին էլ ոչ, պարզապես քունս առել էր։

— Մի առավելություն էլ կա, որը կտա քեզ սկադեմիական դասընթացը։ Եթե բավականաչափ խորանաս գիտելիքների մեջ, պատկերացում կկազմես քո ունակությունների ուղղության ու հնարավորությունների մասին։ Ինչն է նրա համար ընդունելի, ինչը՝ ոչ։ Եվ որոշ ժամանակ հետո կհասկանաս՝ որ մտածելակերպն է քեզ հարմար, որը՝ ոչ։ Եվ դա կօգնի երկար ժամանակ չվատնել քեզ հարմարեցնելու համար մի այնպիսի մտածելակերպ, որը բոլորովին պետք չէ, հարմար չէ քեզ։ Դու կճանաչես քո իսկական չափսերը և

դրանից ելնելով հագուստ կընտրես քո խելքի համար— Եվ այստեղ հանկարծ ես լայն հորանջեցի։ Անտաշ անասունի մեկն եմ, գիտեմ, բայց ի՞նչ կարող էի անել։ Միստր Անտոլինին միայն ծիծաղեց։

— Լավ,— ասաց նա,— արի քեզ համար անկողին բացենք։

Ես նրա հետից գնացի դեպի պահարանը։ Նա փորձում էր ինձ համար սավան ու վերմակ հանել վերին դարակից, բայց ձեռքի գավաթը խանգարում էր։ Այդ ժամանակ ես խմեց պարունակությունը, գավաթը դրեց հատակին, հետո հանեց, ինչ որ պետք էր։ Ես օգնեցի նրան այդ ամենը հասցնել բազմոցին։ Միասին սկսեցինք անկողին բացել։ Չի կարելի ասել, թե նա մի առանձին ճարպկություն էր հանդես բերում այդ գործում։ Ոչինչ չէր կարողանում անել, ինչպես հարկն է։ Բայց ինձ համար միևնույն էր։ Ես պատրաստ էի թեկուզ կանգնած քնել, այնքան էի հոգնած։

— Իսկ ինչպե՞ս են քո հրապուրանքները։

— Ոչինչ։— Ես մի կարգին դրուցակից չէի առհասարակ, ու հիմա էլ բոլորովին ցանկություն չունեի խոսելու։

— Ինչպե՞ս է Ապլինն։— Նա ճանաչում էր Սալլի Հեյսին։ Ես մի անգամ ծանոթացրել էի նրանց։

— Լավ է։ Մենք այսօր ցերեկը տեսնվել ենք։— Գրողը տանի, ինձ թվում էր, թե դրանից հետո քսան տարի էր անցել։— Բայց հիմա քիչ ընդհանուր բան կա մեր միջև։

— Զարմանալի գեղեցիկ աղջիկ է։ Իսկ ինչպե՞ս է մյուսը։ Հիշո՞ւմ ես, պատմում էիր, որ նրա հետ Մեյնում ես ծանոթացել...

— Ա՛խ, Ջեյն Գալլահերը։ Նա ոչինչ։ Հավանաբար, ես վաղը կզանգահարեմ նրան։

Վերջապես բացեցինք անկողինը։

— Պառկիր,— ասաց միստր Անտոլինին։— Զգիտեմ ինչպես ես տեղավորելու քո երկար ոտքերը։

— Ոչինչ, ընտելացել եմ կարճ մահճակալներին։ Շատ շնորհակալություն, սըր։ Դուք և միսիս Անտոլինին այսօր իսկապես փրկեցիք իմ կյանքը։

— Լոզարանի տեղը գիտես։ Եթե որևէ բանի կարիք ունե-

նաս, ձայն տուր ինձ։ Ես մի քիչ էլ կնստեմ խոհանոցում։ Լույսը քեզ չի՞ խանգարի։

— Չէ, ինչ եք ասում, շատ շնորհակալություն։

— Դե լավ։ Բարի գիշեր, բարեկամս։

— Բարի գիշեր, սըր։ Շատ շնորհակալություն։

Նա դուրս եկավ խոհանոց, իսկ ես գնացի լոգարան, հանվեցի, լվացվեցի։ Ատամներս չլվացի, որովհետև ատամի խոզանակը չէի վերցրել հետս։ Պիժամա էլ չունեի, իսկ միստր Անտոլինին մոռացավ տալ։ Վերադարձա հյուրասենյակ, հանգցրի բազմոցի գլխավերևի լամպը և միմիայն տրուսիկով մատ վերմակի տակ։ Բազմոցը չափից դուրս կարճ էր, բայց ես պատրաստ էի քնկուզն կանգնած քնել ու աչքս էլ չէի թարթի։ Երկու վայրկյան ես պառկած մտածում էի միստր Անտոլինիի ասածների վրա։ Մտածելակերպի և այլնի մասին։ Նա շատ խելացի է, ազնիվ խոսք։ Բայց աչքերս ինքնաբերաբար փակվեցին, ու ես քնեցի։ Հետո մի բան պատահեց։ Ճիշտն ասած, չեմ էլ ուզում պատմել։

Հանկարծ ես արթնացա։ Չգիտեմ ժամը քանիսն էր, բայց արթնացա։ Ինչ-որ բան զգացի ճակատիս, ինչ-որ մեկի ձեռքը։ Տեր աստվա՜ծ, ինչպե՜ս վախեցա։ Պարզվում է, դա միստր Անտոլինիի ձեռքն էր։ Նա նստել էր հատակին, բազմոցի մոտ և ոչ այն է ճակատս շոշափում էր, ոչ այն է՝ շոյում։ Ազնիվ խոսք, ես հազար մետր վեր թռա։

— Ի՞նչ եք անում։

— Ոչինչ։ Պարզապես նայում եմ քեզ... հիանում եմ...

— Չէ, դուք ի՞նչ եք անում այստեղ,— նորից եմ ասում ես։

Ուղղակի չգիտեի ինչ ասեի, տխմարի պես ինձ կորցրել էի։

— Սուս արա, ի՞նչ ես ասում։ Պարզապես մոռեցա տեսնեմ...

— Միևնույն է, իմ գնալու ժամանակն է,— ասում եմ։ Տեր աստվա՜ծ, ինչպես վախեցա։ Սկսեցի մթության մեջ հագնել տաքաոս, ու ոչ մի կերպ չէի կարողանում ոտքս ճիշտ տեղը մտցնել, այնպես էի նյարդայնացել։ Դարցնեբրում ուշադիր շատ տեսել էի այդ անիծյալ աննորմալներին։

— Ո՞ւր պիտի գնաս,— հարցրեց միստր Անտոլինին։ Նա

ջանում էր շատ հանգիստ ու սառը խոսել, բայց երևում էր, որ իրեն կորցրել էր։ Հավատացեք ինձ։

— Ես ճամպրուկներս կայարանում եմ թողել։ Թևրես հարկավոր է գնալ վերցնել։ Բոլոր իրերս այնտեղ են։

— Իրերդ մինչև առավոտ ոչ մի տեղ չեն փախչի։ Պառկիր, խնդրեմ, և քնիր։ Չեմ հասկանում, ինչ է կատարվում քեզ հետ։

— Ոչինչ չի կատարվում։ Պարզապես բոլոր իրերս ու փողերս ճամպրուկներում են։ Ես շուտով կվերադառնամ։ Տաքսի կվերցնեմ և կվերադառնամ։— Գրողը տանի, քիչ էր մնում գլուխս ջարդեի մթության մեջ։— Բանն այն է, որ իմ փողերը չեն։ Մայրիկինն են, և ես պետք է...

— Հիմարություններ մի՛ անի, Հոլդեն։ Պառկիր քնիր։ Ես էլ եմ գնում քնեմ։ Մինչև առավոտ քո փողերը ոչ մի տեղ չեն կորչի...

— Չէ, չէ, անպայման պետք է գնամ, ազնիվ խոսք։

Ես գրեթե արդեն հագնվել էի, միայն փողկապս չէի գրտնում։ Ոչ մի կերպ չէի կարողանում հիշել, թե որտեղ եմ դրել այդ անիծյալ փողկապը։ Հագա բաճկոնս, առանց փողկապի կդնամ։ Իսկ միստր Անտոլինին նստել էր բազկաթոռին ու հետևից նայում էր ինձ։ Մութ էր, և ես վատ էի տեսնում նրան, բայց զգում էի, թե ինչպես է հետևում ինձ։ Եվ խղում էր։ Այդպես էլ ձեռքից ցած չէր դրել սիրած գավաթը։

— Դու զարմանալի տարօրինակ տղա ես։

— Գիտեմ,— ասացի։ Ես նույնիսկ փողկապս չփնտրեցի։ Այդպես էլ առանց փողկապի գնացի։— Ցտեսություն, սըր,— ասում եմ։— Եվ շատ շնորհակալություն, ազնիվ խոսք։

Նա մինչև դուռն մոտ եկավ իմ հետից, իսկ երբ վերելակ կանչեցի, կանգ առավ շեմքին։ Եվ նորից կրկնեց, որ ես շատ, շատ տարօրինակ տղա եմ։ Այո, տարօրինակ եմ, ինչպե՜ս չէ։ Նա այնքան սպասեց, մինչև որ եկավ այդ երիցս անիծյալ վերելակը։ Կյանքումս երբեք այդքան չեմ սպասել վերելակին, գրողը տանի դրան։ Մի ամբողջ հավիտենականություն, ասածով եմ երդվում։

Չգիտեի նույնիսկ, թե ինչի մասին խոսեմ, քանի դեռ սպասում էի վերելակին, իսկ նա կանգնել էր շեմքին, ու ես ասացի.

— Կսկսեմ լավ գրքեր կարդալ, իսկապես, կսկսեմ,— չէ որ մի բան պետք է ասեի։ Ընդհանրապես անհարմար ստացվեց։

— Վերցրու ճամպրուկներդ ու էլի շուտ այստեղ արի։ Ես գուցը բաց կթողնեմ։

— Շատ շնորհակալություն,— ասում եմ։— Ցտեսություն։— Վերջապես վերելակն եկավ։ Ես փակեցի դուռը, սկսեցի իջնել։ Տեր աստվա՛ծ, ինչպես էի ցողացնում։ Քրտինքս էլ վրա էր տվել։ Երբ ինձ հետ անսպասելի բան է տեղի ունենում, քրտինքս վրա է տալիս։ Իսկ դպրոցում մի քանի անգամ ամեն տեսակ այլանդակություններից էի հանգիպել։ Մանկուց սկսած։ Ատում եմ։

25

Երբ դուրս եկա տնից, սկսել էր լուսանալ։ Սոսկալի ցուրտ էր, բայց ինձ համար հաճելի էր, որովհետև քրտնել էի։

Բոլորովին չգիտեի, թե ուր գնամ։ Քույրիկիս փողերով հյուրանոցում համար վարձել չէի ուզում։ Վերջ ի վերջո ոտքով գնացի մինչև Լեքսինգտոն և մետրո նստեցի մինչև Կենտրոնական կայարան։ Ճամպրուկներս կայարանում էին, ու ես որոշեցի քնել սպասասրահում, այնտեղ, ուր ամբացված են այդ անիծյալ նստարանները։ Այդպես էլ արեցի։ Սկզբում ոչինչ, մարդիկ քիչ կային, կարելի էր պառկել, ոտքերը մեկնել նստարանի վրա։ Բայց ես չեմ ուզում այդ մասին պատմել, բավական զզվելի զգացում է։ Ավելի լավ է, այնտեղ մի՛ գնացեք։ Լուրջ եմ ասում։ Թախիծ է պատում հոգիդ։

Քնեցի մինչև ժամը ինը, այդ ժամանակ միլիոնավոր մարդիկ լցվեցին, հարկադրված եղա ոտքերս քաշել։ Իսկ ոտքերս կախած ես չեմ կարողանում քնել։ Նստեցի։ Գլուխս առաջվա պես ցավում էր։ Նույնիսկ ավելի ուժեղ։ Իսկ տրամադրությունս այնքան վատ էր, որ կյանքումս երբեք այդքան վատ տրամադրություն չեմ ունեցել։

Չէի ուզում մտածել միստր Անտոլինիի մասին, բայց չէի կարող չմտածել. ի՞նչ է ասելու իր կնոջը, երբ սա տեսնի, որ այնտեղ չեմ գիշերել։ Բայց ինձ դա չէր անհանգստացնում,

ես հրաշալի գիտեի, որ միստր Անտոլինին բավականաչափ խելացի է և պատասխան կգտնի։ Կասի, որ տուն եմ գնացել, և վերջ։ Դա ինձ շատ չէր անհանգստացնում։ Ինձ մի ուրիշ բան էր տանջում, այն, թե ինչպես արթնացա ես նրա ձեռքի հպումից։ Հասկանո՞ւմ եք, հանկարծ սկսեցի մտածել՝ գուցե ես անտեղի ենթադրեցի, թե նա ուզում է ինձ կպչել։ Գուցե պարզապես ուզում էր շոյել գլուխս, գուցե սիրում է շոյել երեխաների գլուխը, երբ նրանք քնած են։ Մի՞թե կարող ես հաստատ ասել։ Երբեք չես կարող։ Մտածեցի նույնիսկ, որ պետք է ճամպրուկներն առնեի ու վերադառնայի նրանց տուն, ինչպես խոստացել էի։ Հասկանո՞ւմ եք, ես մտածեցի, որ թեև նույնիսկ նա տարօրինակություններ ունի, միևնույն է, իմ հանդեպ շատ լավ է վերաբերվել։ Չի բարկացել, որ գիշերվա կեսին արթնացրել եմ նրան, ասաց՝ արի թեկուզ հիմա, եթե հարկավոր է։ Եվ ինչպե՞ս էր ջանք թափում, ամեն տեսակ խորհուրդներ էր տալիս մտածելակերպի և այլնի մասին, և ինչպես միայն նա չվախեցավ ու մոտեցավ այն տղային՝ Չեյմս Քասլին, երբ նա ընկած էր մեռած, հիշո՞ւմ եք, ես ձեզ պատմել եմ։ Ես նստել մտածում էի այդ ամենի մասին։ Ու որքան շատ էի մտածում, այնքան ընկնում էր տրամադրությունս։ Ինձ տանջում էր այն միտքը, թե հարկավոր է վերադառնալ նրա տուն։ Հավանաբար, նա իսկապես հենց այնպես էր շոյում գլուխս։

Ու որքան շատ էի մտածում այդ մասին, այնքան ավելի էի տանջվում ու տխրում։ Այդ ժամանակ հակառակի պես սկսեցին աչքերս էլ ցավել։ Ցավում են, կսկծում անիծվածների պես, այն պատճառով, որ անքուն եմ։ Հետո հարբուխ սկսվեց, ես էլ թաշկինակ չունեի։ Ճամպրուկիս մեջ կային, բայց չէի ուզում ճամպրուկները վերցնել պահպանման կետից ու բոլորի աչքի առաջ բացել։

Կողքիս նստարանի վրա ինչ-որ մեկը ամսագիր էր մոռացել, սկսեցի կարդալ։ Գուցե, դադարեմ միստր Անտոլինիի և հազար ու մի բանների մասին մտածելուց, գոնե ժամանակավորապես մոռանամ։ Բայց այդ անիծյալ հոդվածից հարյուրապատիկ վատացա։ Այնտեղ բազմապիսի հորմոնների մասին էր գրված, նկարագրված էր, թե ինչպիսի տեսք պետք է ունենաք, ինչպիսի դեմք, աչքեր, եթե ձեր բոլոր հորմոն-

ները կարդին են, իսկ իմ տեսքը ճիշտ հակառակն էր. ես ճիշտ այնպիսի տեսք ունեի, ինչպես հոդվածում նկարագրված, որի բոլոր հորմոնները խախտված էին։ Սկսեցի սոսկալի անհանգստանալ, թե ինչ է պատահել իմ հորմոններին։ Հետո ակսեցի մեկ ուրիշ հոդված կարդալ. ինչպես կանխավ որոշել՝ քաղցկեղ ունե՞ս, թե ոչ։ Այնտեղ գրված էր, որ եթե քեռանում խոցեր կան, որոնք երկար ժամանակ չեն բուժվում, նշանակում է, ամենայն հավանականությամբ գու հիվանդ ես քաղցկեղով։ Իսկ իմ շրթունքին ներսի կողմից արդեն երկու շաբաթ էր, որ վերք կար։ Հը՛մ, ուրախ ամսագիր է, խոսք չկա։ Ես մի կողմ նետեցի այն ու գնացի ման գալու։ Հաշվեցի, որ եթե քաղցկեղ ունեմ, ապա երկու-երեք ամսից հետո կմեռնեմ։ Լրջորեն այդպես էլ մտածում էի։ Հաստատ համոզված էի, որ կմեռնեմ։ Ու տրամադրությունս դրանից, պարզ է, չէր լավանում։

Կարծես թե անձրև էր գալիս, բայց ես, միևնույն է, գնացի զբոսնելու։ Նախ հարկավոր էր նախաճաշել։ Ախորժակ չունեի, բայց, հասկանում էի, որ, այնուամենայնիվ, հարկավոր է ամրապնդվել։ Համենայն դեպս, մի որևէ սննդավետ բան ուտել։ Գնացի դեպի արևելյան թաղամասերը, որտեղ ռեստորանները համեմատաբար էժան են. չէի ուզում շատ ծախսել։

Ճանապարհին տեսա, թե ինչպես երկու մարդ առնածառ էին իջեցնում մեքենայից։ Ով մեկը անընդհատ ձայն էր տալիս մյուսին՝ բռնիր այդ գրողի տարած տիկնիկր, ամուր բռնիր, գրան այդպես է պետք։ Շատ գեղեցիկ է այդպես խոսել Սննդյան տոնածառի մասին։ Բայց չգիտեմ ինչու ծիծաղս եկավ, ու ես քրքջացի։ Ավելի վատ չէր կարող լինել, սիրտս ակսեց խառնել, քիչ էր մնում ես տայի, բայց հետո անցավ, ինքս էլ չգիտեմ ինչպես։ Չէ՞ որ ես որևէ հնացած բան չէի կերել, բացի այդ էլ, դիմացկուն ստամոքս ունեմ։

Մի խոսքով, առայժմ ամեն ինչ անցավ, ու ես որոշեցի ուտել։ Մտա մի շատ էժանագին ռեստորան և փքաբլիթներ ու սուրճ պատվիրեցի։ Միայն թե փքաբլիթները չկերա, չկարողացա ուտել։ Եթե տրամադրությունդ շատ է ընկած, դժվար է կուլ գնում։ Բայց մատուցողը հիանալի մարդ էր։ Նա փքա-

բլիթները ետ տարավ ու ինձնից ոչինչ չվերցրեց։ Ես մեկայն սուրճ խմեցի ու գնացի Հինգերորդ ավենյուի կողմը։

Երկուշաբթի էր, մոտենում էին Սննդյան տոները, և խանութներում աշխույժ առևտուր էր գնում։ Հինգերորդ ավենյուում շատ հաճելի էր։ Տոնական տրամադրություն էր զգացվում։ Բոլոր անկյուններում մորուքավոր կլաուսներ էին կանգնած, զնգզնգում էին զանգակները, և փրկության բանակի կանայք, երանք, որոնք երբեք չեն ներկում շրթունքները, նույնպես զանգակներ էին հնչեցնում։ Ես անվերջ որոնում էի այն երկու միանձնուհիներին, որոնց հետ նախաճաշել էի նախորդ օրը, բայց նրանք ոչ մի տեղ չէին երևում։ Ինչևէ, այդպես էլ գիտեի, որովհետև նրանք ասացին, որ եկել են Նյու-Յորք ուսուցչություն անելու, բայց և այնպես որոնում էի։ Համենայն դեպս, տրամադրությունս հանկարծ տոնական դարձավ։ Մայրերի հետ հազարավոր երեխաներ էին դուրս գալիս ավտոբուսներից, հլումաւտ անում խանութները։ Ի՞նչ լավ կլիներ, որ Ֆիբրին ինձ հետ լիներ։ Նա այնքան փոքր չէ, որ գժվի խաղալիքների համար, բայց սիրում է նայել ամբոխին ու հազար ու մի խենթություններ հորինել։ Անցյալ Սննդյան տոներին նրան քաղաք տարա գնումներ կատարելու։ Ի՞նչ տեսա, որ չարեցինք։ Կարծեմ դա Բլումինգդեյլի մոտ էր։ Մենք մտանք կոշիկի խանութ ու ձևացրինք, թե քրոջս հարկավոր են այդ երկարաճիտ լեռնային կոշիկներից, գիտե՞ք, ա՛յն, որ հարյուր անգղեր ունեն կապիչների համար։ Ուղղակի գժվացրինք այդ վաճառողին։ Իմ Ֆիբրին մի քանի զույգ փորձեց, ու ամեն անգամ խեղճ վաճառողը ստիպված էր լինում նրա կոշիկի կապիչներն ամրացնել մինչև ծունկը։ Հոգսություն էր, իհարկե, բայց Ֆիբրին ուղղակի մեռնում էր։ Վերջ ի վերջո մենք մի զույգ անային կոշիկներ գնեցինք և խնդրեցինք ուղարկել տուն։ Վաճառողը հրաշալի մարդ դուրս եկավ։ Իմ կարծիքով նա հասկանում էր, որ մենք խաղում ենք, որովհետև Ֆիբրին անվերջ քրքջում էր։

Ես քայլում էի Հինգերորդ ավենյուով, քայլում էի առանց փողկապի, գնում էի ու գնում։ Ով հանկարծ մի սոսկալի քան կատարվեց ինձ հետ։ Ամեն անգամ, երբ հասնում էի քաղամասի վերջը և մայթից իջնում էի սալարկուղի, ինձ սկսում էր թվալ, որ ալ մի կերպ չեմ կարողանալու անցնել մյուս

կողմը։ Թվում էր, թե հանկարծ կգլորվեմ ցա՛ծ, ցա՛ծ, ցա՛ծ, ու ինձ այլևս չեն տեսնի մարդիկ։ Օ՛հ, որքա՜ն վախեցա, նույնիսկ չեք կարող պատկերացնել։ Ես ամբողջապես քրտնել էի, ամբողջ վերնաշապիկս ու սպիտակեղենս ջուր էին դարձել։ Եվ սկսեցի մի բան անել։ Հենց որ հասնում էի անկյունին, սկսում էի խոսել իմ եղբոր՝ Ալլիի հետ։ Ես նրան ասում էի. «Ալլի՛, չթողնես ընկնեմ։ Ալլի՛, չթողնես ընկնեմ։ Ալլի՛, չթողնես ընկնեմ։ Ալլի՛, խնդրում եմ քեզ»։ Ու հենց որ բարեհաջող հասնում էի մյուս մայթը, ասում էի. «Շնորհակալություն»։ Ու այդպես բոլոր անկյուններում նորից էի սկսում։ Բայց կանգ չէի առնում։ Կարծեմ, վախենում էի կանգ առնել, ճիշտն ասած, լավ չեմ հիշում։ Գիտեմ միայն, որ հասա Վաթսուներորդ փողոցին, կենդանաբանական այգու մոտով, ասուված գիտե թե ուր։ Այստեղ նստեցի նստարանին։ Քրտինքը կարկտի պես թափվում էր վրայիցս։ Մոտ մի ժամ երևի նստեցի այդ նստարանին։ Վերջապես որոշեցի, թե ինչ պետք է անեմ։ Որոշեցի մեկնել։ Որոշեցի, որ այլևս տուն չեմ վերադառնա և ոչ մի գպրոց էլ չեմ ընդունվի։ Որոշեցի, որ կհանդիպեմ քրոջս, փողը կտամ իրեն, իսկ հետո դուրս կգամ խճուղի ու պատահական մեքենաներով կգնամ հետո՛ւ Արևմուտք։ Որոշեցի նախ դուրս գալ Հոլլենդ-Թաննել, այնտեղից պատահական մեքենայով ավելի հետու, հետո՝ էլի, այնպես որ մի քանի օր հետո կլինեմ հեռավոր Արևմուտքում, որտեղ տաք ու գեղեցիկ է, և որտեղ ոչ ոք ինձ չի ճանաչում։ Ու այնտեղ աշխատանք կճարեմ ինձ համար։ Մտածեցի, որ հեշտությամբ աշխատանք կճարեմ մի որևէ բենզոլայանում, կսպասարկեմ ուղևորներին։ Մի խոսքով ինձ համար բոլորովին միևնույն էր, թե ինչ աշխատանք կանեի, միայն թե ոչ ոք ինձ չճանաչեր և ես էլ ոչ ոքի չճանաչեի։ Որոշեցի ահա թե ինչ անել. խուլ ու համր ձևանալ։ Այդ դեպքում հարկ չէր լինի ոչ մեկի հետ ոչ մի տեսակ անմիտ հիմար խոսակցություններ ունենալ։ Եթե որևէ մեկը ցանկանա ինձ հետ խոսել, հարկադրված կլինի թղթի վրա գրել ու ցույց տալ ինձ։ Դա վերջ ի վերջո կձանձրացնի նրանց, ու ես ամբողջ կյանքումս կաղատվեմ խոսակցություններից։ Բոլորը կհամարեն, որ ես դժբախտ խուլ ու համր հիմար եմ ու հանգիստ կթողնեն ինձ։ Ես վառելանյութ կլցնեմ նրանց հիմար մեքենաները, դրա դիմաց աշխատավարձ կստանամ, նա գցած փողերովս խրճիթ կշինեմ և մինչև կյանքիս վերջը կապրեմ այնտեղ։ Խրճիթը կշինեմ անտառի եզրին, միայն ոչ թավուտում, ես սիրում եմ, որ արևը լավ է լուսավորում։ Ինքս էլ ճաշ կպատրաստեմ, իսկ հետագայում, երբ ցանկանամ ամուսնանալ, գուցե հանդիպեմ մի որևէ խուլ ու համր գեղեցկուհու, և մենք ամուսնանանք։ Նա ինձ հետ կապրի խրճիթում, իսկ եթե կուզի ինչ-որ բան ասել, նա էլ կգրի թղթի վրա։ Երբ երեխաներ ունենանք, մենք նրանց թաքուն կպահենք բոլորից։ Շատ գրքեր կառնենք նրանց համար ու ինքներս էլ գրել-կարդալ կսովորեցնենք։

Ես ուղղակի բորբոքվել էի, ազնիվ խոսք։ Իհարկե, հիմարություն էր մտածել, թե խուլ ու համր կձևանամ, բայց միևնույն է, ինձ դուր էր գալիս պատկերացնել, թե դա ինչպես է լինելու։ Ու հասատաս որոշեցի գնալ Արևմուտք։ Մնում էր միայն հրաժեշտ տալ Ֆիբիին։ Ես վեր թռա ու գժի պես, սլացա փողոցով, ճիշտն ասած, քիչ մնաց ընկնեի մեքենայի տակ, ուղիղ դրախտանութ վազեցի, բլոկնոտ ու մատիտ գնեցի։ Որոշեցի երկտող գրել Ֆիբիին, թե որտեղ և ինչպես հանդիպենք, որպեսզի կարողանամ հրաժեշտ տալ և վերադարձնել նվերի փողերը։ Երկտողը կտանեմ դպրոց, այնտեղ գրասենյակի աշխատողներից որևէ մեկին կխնդրեմ հանձնել Ֆիբիին։ Եվ, բլոկնոտն ու մատիտը գրպանս դնելով, վազեցի դեպի դպրոց. ես չափից դուրս շատ էի հուզվում, չէի կարող երկտողը դրախտանութում գրել։ Շատ էի շտապում, հարկավոր էր երկտողը ժամանակին հասցնել, քանի դեռ նա տուն չէր գնացել նախաճաշելու, շատ քիչ ժամանակ էր մնացել։

Դպրոցը լավ էի ճանաչում, որովհետև փոքր ժամանակ ինքս էլ այնտեղ էի գնում։ Երբ բակ մտա, մի տեսակ դարձա։ Չէի կարծում, թե ամեն ինչ այդպես լավ կհիշեմ, բայց, պարզվեց, ամեն ինչ հիշում էի։ Ամեն ինչ մնացել էր այնպես, ինչպես իմ ժամանակ։ Նույն վիթխարի մարմնամարզական դահլիճը ցածում, որտեղ միշտ լավ չէր լուսավորվում, նույն մետաղալարի ցանցերը լամպերի շուրջը, որպեսզի գնդակը կպչելիս չջարդվեն։ Հատակին նույն սպիտակ շրջանագծերը զանազան խաղերի համար։ Եվ բասկետբոլա-

ջին նույն օդակները առանց ցանցերի. միայն տախտակի պատվանդանն էր և օդակը։

Ոչ ոք չէր երևում, հավանաբար այն պատճառով, որ պարապմունքի ժամ էր, և դասամիջոցը դեռ չէր սկսվել։ Ես միայն մի փոքրիկի տեսա՝ մի սևամորթ տղայի, որ վազում էր զուգարան։ Նրա գրպանից դուրս էր ցցվել փայտե համարը, մեզ էլ էին այդպիսի համար տալիս, ի նշան դասից դուրս գալու թույլտվության։

Ես դեռևս քրտնած էի, բայց ոչ այնպես թունդ։ Դուրս եկա, նստեցի սանդուղքի ցածի աստիճանին և հանեցի բլոկնոտն ու մատիտը։ Սանդուղքը նույն հոտն ուներ, ինչ-որ իմ ժամանակ։ Ասես ինչ-որ մեկն այնտեղ միզել էր։ Տարրական դպրոցներում սանդուղքներից միշտ այդպիսի հոտ էր գալիս։ Մի խոսքով, նստեցի ու երկտող գրեցի.

Սիբելի Ֆիբի.

Ջեմ կարող մինչև շոբեշաբթի սպասել, դրա համար էլ այսօր երեկոյան ճանապարհ կընկնեմ դեպի Արևմուտք։ Ինձ ապահիր բանգարանում, մուտքի մոտ, տասներկուսն անց տասնհինգ, եթե կարող ես, և ես ֆո նվերի փողերը կվերադարձնեմ։ Շատ ֆիչ եմ ծախսել։

Համբուրում եմ։

Հոլդեն։

Թանգարանը ուղղակի դպրոցի կողքին էր, միևնույն է, նախաճաշից հետո Ֆիբին այնտեղով պիտի անցներ, ու գիտեի, որ նա ինձ կհանդիպի։

Աստիճաններով բարձրացա դիրեկտորի գրասենյակը, որպեսզի խնդրեմ որևէ մեկին՝ երկտողը հանձնել քույրիկիս։ Ես մի տասը տակ ծալեցի թուղթը, որպեսզի ոչ ոք չկարդա։ Այդ գարշելի դպրոցներում ոչ ոքի հնարավոր չէ վստահել։ Բայց եղբոր երկտողը, գիտեի, որ անպայման կհանձնեն։

Երբ աստիճաններով վեր էի բարձրանում, էլի սիրտս խառնեց, բայց հետո անցավ։ Մի քիչ նստեցի, հետո լավ զգացի ինձ։ Ինչ-որ մեկը պատի վրա անպատկառ բան էր գրել։ Ես զայրույթից ուղղակի կատաղեցի։ Պատկերացրի, որ Ֆիբին ու մյուս երեխաները կարող են կարդալ ու հարցնել,

թե դա ինչ բան է, իսկ մի որևէ կեղտոտ տղա նրանց կբացատրի, այն էլ հիմարավարի, թե դա ինչ է նշանակում, և երեխաները կսկսեն նման բաներ մտածել ու հուզվել։ Ես պատրաստ էի սպանել գրողին։ Պատկերացրի, որ մի որևէ սրիկա անբարոյական իր կարիքի համար գիշերով մտել է դպրոց, իսկ հետո պատի վրա գրել այդ խոսքերը։ Ու պատկերացրի, թե ինչպես եմ բռնում նրան հանցանքի վայրում և գլուխը խփում քարե աստիճաններին, մինչև որ սատկում է արնաշաղախ եղած։ Բայց մտածեցի, որ համարձակությունս չի բավարարի։ Ես ինձ գիտեմ։ Ու դրանից ավելի վատ զգացի։ Ճիշտ ասած, համարձակությունս չբավարարեց նույնիսկ դա պատից մաքրել։ Վախեցա, հանկարծ ուսուցիչներից որևէ մեկը տեսնի մաքրելիս ու կարծի, թե ես եմ գրել։ Բայց հետո, այնուամենայնիվ, մաքրեցի։ Մաքրեցի ու գնացի դիրեկտորի գրասենյակ։

Դիրեկտորն այնտեղ չէր, բայց գրամեքենայի հետևում նստած էր հարյուրին մոտ մի պառավ։ Ասացի, որ ես 4-րդ «բ»-ի Ֆիբի Քոլֆիլդի եղբայրն եմ և շատ եմ խնդրում այս երկտողը հանձնել նրան։ Ասացի, որ դա շատ կարևոր է, որովհետև մայրիկը վատառողջ է ու նախաճաշ չի պատրաստել Ֆիբիի համար, և որ ես պիտի հանդիպեմ Ֆիբիին ու նրան կերակրեմ նախաճաշարանում։ Պառավը շատ բարեհամբույր կին դուրս եկավ։ Նա վերցրեց երկտողը, հարևան սենյակից կանչեց ինչ-որ մի կնոջ, և սա երկտողը տարավ հանձնելու Ֆիբիին։ Հետո ես մի քիչ զրուցեցի այդ հարյուրամյա կնոջ հետ։ Նա շատ բարեհամբույր կին էր, ու ես պատմեցի, որ մենք բոլորս՝ ես ու իմ եղբայրները, այդ դպրոցում ենք սովորել։ Նա հարցրեց, թե հիմա որտեղ եմ սովորում, ասացի՝ Փենսիում, և նա ասաց՝ Փենսին շատ լավ դպրոց է։ Եթե նույնիսկ ցանկանայի բռնությամբ նրան խելքի բերել, համարձակությունս չէր բավարարի։ Թող նա էլ կարծի, թե Փենսին լավ դպրոց է։ Հիմարություն է մարդու գլուխը մի նոր բան մտցնել, երբ նա արդեն հարյուր տարու մեջ է։ Բացի այդ էլ, նրանք այդպիսի բաներ չեն սիրում։ Հետո ես հրաժեշտ տվի ու գնացի։ Նա ետևիցս ձեռքս՝ «Բարի ճանապարհ», ճիշտ ինչպես ծերունի Սպենսերը, երբ մեկնեցի Փենսիից։ Տեր աստված, որքա՜ն եմ ատում այդ սովորու-

թյունը, եռանից ծղրտալ՝ «Քարի ճանապա՞րհ»։ Դրանից որոշ մտադրություն ընկնում է։

Մյուս առնդուղքով իջա ու նորից պատի վրա լկտիաս գրություններ տեսա գրված։ Փորձեցի մաքրել, բայց այս անգամ ինչ-որ սուր գործիքով էր փորագրված։ Հնարավոր չէր մաքրել։ Եվ անօգուտ էր։ Մարդ եթե միլիոն տարի էլ ժամանակ ունենա, դարձյալ չի հասցնի բոլոր լկտիություններց մաքրել բոլոր պատերի վրայից։

Ես նայեցի մարմնամարզական դահլիճի ժամացույցին, ընդամենը երկուսից քսան էր պակաս։ Մինչև ընդմիջումը գեռ շատ ժամանակ կար։ Բայց ես, այնուամենայնիվ, գնացի թանգարան։ Միևնույն է, ուրիշ գնալու տեղ չունեի։ Մտածեցի՝ ավտոմատից չղանգահարե՞մ Ջեյն Գալլահերին, նախքան Արևմուտք գնալս, բայց տրամադրություն չունեի։ Համ էլ հասկ֊ցված չէի, թե վերադարձած կլինեի։ Գնացի թանգարան ու սկսեցի սպասել այնտեղ։

Մինչ ես սպասում էի Ֆիբիին թանգարանի մուտքի մոտ, երկու երեխա մոտեցան ու ինձ հարցրին, թե չգիտե՞մ, արդյոք, որտեղ են մումիաները։ Հարցնողի տարատան արձակված էր։ Ես նրան ասացի՝ կոճկիր։ Եվ նա սկսեց կոճկել ուղղակի իմ աչքի առաջ, առանց ամաչելու, նույնիսկ սյան եռևը չանցավ կամ մի անկյուն չքաշվեց։ Սիծաղելի է։ Ես հավանաբար կքրքջայի, բայց վախեցա էլի սիրուս խառնի, ու զսպեցի ինձ։

— Որտե՞ղ են այդ մումիաները, հը՞,— կրկնեց տղան։— Գուք չգիտե՞ք որտեղ են։

Ես որոշեցի նրանց բարկացնել։

— Մումիանե՞րը, իսկ ի՞նչ բան են դրանք։

— Գե, դուք էլ գիտեք, էլի՛, դիակները։ Ալն, որ պուրգերի մեջ էլ են պահում։

Պուրգերի՞, այ քեզ ծիծա՞ղ, ուզում է ասել՝ բուրգերի։

— Իսկ ինչո՞ւ դպրոցում չեք, երեխաներ,— հարցնում եմ։

— Դաս չունենք,— ասում է այն մեկը, որ անընդհատ խոսում է։ Տեսա, որ խաբում է սրիկան։ Բայց, միևնույն է, մինչև Ֆիբիի գալն անելիք չունեի ու նրանց տարա այնտեղ, որտեղ մումիաներն էին գտնվում։ Առաջ ճիշտ գիտեի, որ-

տեղ են գտնվում, բայց հարյուր տարի կլիներ, որ այնտեղ չէի մտել։

— Իսկ ձեզ հետաքրքրո՞ւմ է տեսնել մումիաները,— հարցնում եմ։

— Հհը՛։

— Իսկ քո ընկերը հա՞մր է, ինչ է։

— Նա ոչ թե ընկերս է, այլ՝ եղբայրս։

— Մի՞թե նա չի կարողանում խոսել,— հարցնում եմ։— Ես ի՛նչ է, խոսել չգիտե՞ս։

— Գիտեմ,— պատասխանում է,— միայն թե չէմ ուզում։

Վերջապես գտանք այն սրահի մուտքը, որտեղ գտնվում են մումիաները։

— Իսկ դուք գիտե՞ք, եգիպտացիներն ինչպես էին թաղում իրենց մեռելներին,— հարցնում եմ զրուցասերին։

— Ո՛չ։

— Հարկավոր է իմանալ։ Դա շատ հետաքրքիր է։ Նրանք փաթաթում էին դիակների գլուխները այնպիսի գործվածքներով, որոնք ներծծված էին հատուկ գաղտնի նյութով։ Ու այդ դիակները կարելի էր պահել թեկուզև հազար տարի, միևնույն է, դրանց գլուխները չէին փտի։ Եգիպտացիներից բացի ոչ ոք չէր կարողանում անել այդ բանը։ Ժամանակակի՛ց գիտությունը նույնիսկ չգիտի ինչպես էր արվում դա։

Մումիաները տեսնելու համար հարկավոր էր անցնել շատ նեղլիկ միջանցքով, որը պատված էր ուղղակի փարավոնների գերեզմաններից վերցված սալաքարերով։ Բավական սոսկալիացուցիչ տեղ է, և տեսա, թե ինչպես այդ երկու քաջերը, որոնց տանում էի, կարգին վախենում են։ Կատվի ձագերի պես սեղմվել էին ինձ, իսկ չխոսկանը նույնիսկ կառչել էր իմ թևքից։

— Գնանք տուն,— հանկարծ ասաց նա։— Ես արդեն ամեն ինչ տեսա։ Շո՛ւտ գնանք։— Նա շուռ եկավ ու փախավ։

— Նա վախկոտ է, ամեն ինչից վախենում է,— ասաց մյուսը։— Առաջմ,— և նույնպես վազեց եղբոր հետից։

Ես մենակ մնացի գերեզմանաքարերի մեջ։ Ինձ դուր էր գալիս այդտեղ։ Ու հանկարծ պատի վրա տեսա, գուշակեցեք, թե ինչ։ Դարձյալ լկտիություններ։ Կարմիր մատիտով, ուղղակի ապակեպատ ցուցափեղկի տակ, քարի վրա։

Ամբողջ դժբախտությունն էլ հենց այդ է։ Անհնար է գրաշնել մի խաղաղ, հանգիստ անկյուն։ Չէ, այս աշխարհում այդպիսի տեղ չկա։ Երբեմն մտածում ես, իսկ գուցե կա, բայց մինչև հասնես այնտեղ, որևէ մեկը թաքուն առաջ կանցնի քեղնից ու մի որևէ անվայել բան կգրի ուղղակի քթիդ տակ։ Ինքներդ ստուգեցեք։ Ինձ երբեմն թվում է, ա՛յ, կմեռնեմ, կընկնեմ գերեզմանոց, հուշարձան կդնեն գերեզմանիս, վրան կգրեն՝ «Հոլդեն Քոլֆիլդ», ծննդյան ու մահվան թիվը, և այդ ամենի տակ էլի որևէ մեկը մի որևէ անվայել բան կխորշի։ Համոզված եմ, որ այդպես էլ կլինի։

Ես դուրս եկա մումիաների դահլիճից ու գնացի զուգարան։ Լուծ էի ընկել, ճիշտն ասած։ Բայց դրանից չվախեցա, վախեցա մեկ այլ բանից։ Զուգարանից դուրս գալու ժամանակ կորցրի գիտակցությունս։ Բախտս բերեց դեռ, որ հաջող ընկա։ Կարող էի գլուխս ջարդել հատակին խփելուց, բայց ուղղակի կողքիս վրա ընկա։ Տարօրինակ զգացում է դա։ Սակայն ուշաթափությունից հետո ես ինձ ավելի լավ զգացի։ Ջեռքս, ճիշտ է, ցավում էր, բայց գլուխս էլ շատ չէր պտտվում։

Արդեն տասներկուսն անց տասն էր, և ես գնացի մուտքի մոտ ու սպասեցի իմ Ֆիբիին։ Մտածեցի, որ գուցե վերջին անգամ եմ տեսնում նրան։ Եվ ընդհանրապես հարազատներիցս այլևս ոչ մեկին չեմ տեսնի։ Այսինքն, իհարկե, կտեսնեմ որևէ մեկին, միայն թե ոչ շուտ։ Գուցե տուն կգամ, երբ երեսունհինգ տարեկան լինեմ, եթե նրանցից որևէ մեկը հանկարծ հիվանդանա ու ցանկանա մահից առաջ տեսնել ինձ. դա միակ բանն է, որի պատճառով կարող եմ թողնել իմ խրճիթն ու վերադառնալ տուն։ Ես նույնիսկ պատկերացրի, թե ինչպես կվերադառնամ։ Գիտեմ, մայրիկը սոսկալի կհուզվի, լաց կլինի, կխնդրի մնալ, չվերադառնալ իմ խրճիթը, բայց ես, այնուամենայնիվ, կգնամ։ Ես անմատչելի կմնամ, ինչպես սատանան։ Կհանդստացնեմ մայրիկին, կգնամ սենյակի մյուս ծայրը, կհանեմ ծխախոտատուփը ու կծխեմ սառը հանգստությամբ։ Ես նրանց կհրավիրեմ ինձ մոտ, եթե ցանկանան, բայց չեմ ստիպի։ Այնպես կանեմ, որ Ֆիբին հյուր գա ինձ ամռանը, և՛ Սենդյան տոներին, և զատկի արձակուրդին։ Դ. Բ-ն էլ թող գա, թող ապրի ինձ մոտ, երբ

աշխատելու համար մի խաղաղ անկյունի կարիք կունենա։ Բայց թույլ չեմ տա, որ իմ խրճիթում որևէ սցենար գրի։ Միայն պատմվածքներ և գրքեր։ Ես այսպիսի կարգ կհաստատեմ՝ ոչ մի կեղծիք թույլ չտալ իմ տանը։ Իսկ ով նույնիսկ թեթևակիորեն փորձի կեղծիք կատարել, թող անմիջապես թողնի և հեռանա։

Հանկարծ նայեցի հանդերձարանի ժամացույցին և տեսա, որ արդեն մեկից քսանհինգ է պակաս։ Ես վախեցա, հանկարծ գրասենյակի պատավը պատվիրած լինի այն կնոջը՝ երկտողը չտալ Ֆիբիին։ Վախեցա, թե հանկարծ նա այրած լինի երկտողս կամ դեն նետած։ Շատ վախեցա։ Ես շատ էի ուզում քույրիկիս տեսնել մեկնելուց առաջ։ Եվ, բացի այդ, փողն էլ ձեռքիս էր։

Հանկարծ տեսա նրան։ Տեսա ապակե դռան եզրից։ Եվ նկատեցի, որովհետև նրա գլխին իմ արտառոց որսորդական գլխարկն էր, տասը մղոնի վրա էլ կտեսնես այդ գլխարկը։

Դուրս եկա ու սկսեցի իջնել աստիճաններով։ Մի բան միայն չէի հասկանում՝ ո՞ւր էր տանում այդ վիթխարի ճամպրուկը։ Նա անցնում էր Հինգերորդ ավենյուն ու մի կերպ քարշ էր տալիս մի վիթխարի, անհեթեթ ճամպրուկ։ Հազիվհազ էր տանում։ Երբ մոտեցա, հասկացա, որ դա իմ հին ճամպրուկն է, որ դեռ Հուտոնի դպրոցում ունեի։ Ոչ մի կերպ չէի հասկանում, թե դա նրա ինչին էր պետք։

— Ա՜խ,— ասաց նա մոտենալով։ Ուղղակի շունչը կտրվում էր այդ հիմար ճամպրուկի երեսից։

— Կարծում էի, թե էլ չես գա,— ասում եմ։— Ինչի՞ համար ես քարշ տալիս այս ճամպրուկը։ Ինձ ոչինչ հարկավոր չէ։ Ես թեթև եմ գնալու։ Նույնիսկ պահ տվածս ճամպրուկները չեմ վերցնելու։ Այդ ի՞նչ ես լցրել։

Նա ցած դրեց ճամպրուկը։

— Իմ իրերն են,— ասում է։— Ես գալիս եմ քեզ հետ։ Կարելի՞ է։ Հա՞։ Ինձ էլ կտանե՞ս։

— Ի՞նչ,— քիչ էր մնում վայր ընկնեի։ Ազնիվ խոսք, գլուխս պտտվեց, ուր որ էր ուշաթափվելու էի։

— Ամեն ինչ հետևամուտքով եմ իջեցրել, որպեսզի Ջարլինան չտեսնի։ Մանր չէ։ Ընդամենը երկու շոր է, կոշիկներս, սպիտակեղեն, գուլպաներ և զանազան մանրուք։ Դու

փորձիր, բարձրացրու։ Շատ թեթև է, դե, փորձիր... Կարելի՞ է, ես էլ գամ քեզ հետ, Հոլդեն։ Կարելի՞ է, հը՞։ Խնդրում եմ, կարելի՞ է, ես էլ...

— Չէ՛, չի՛ կարելի, լսի՛ր։

— Ինչո՞ւ չի կարելի։ Խնդրում եմ, ի՛նձ էլ վերցրու... Հը՞, Հոլդեն, խնդրում եմ։ Ես քեզ չեմ խանգարի, միայն կգամ քեզ հետ, և վերջ։ Թեև կուզես, շորերս էլ չեմ վերցնի, միայն...

— Ոչինչ էլ չես վերցնի։ Եվ ոչ էլ կգաս։ Ես մենակ եմ գնում։ Ջայնդ կտրիր։

— Լա՛վ, էլի, Հոլդեն, խնդրում եմ։ Ես շատ, շատ, շատ... Նույնիսկ չես նկատի...

— Դու ոչ մի տեղ չես գա։ Լռիր, լսո՞ւմ ես։ Այստեղ տուր ճամպրուկը։

Ես վերցրի ճամպրուկը։ Շատ էի ուզում հասցնել նրա հետույքին։ Եվս մի պահ, ու արդեն պետք է հասցնեի։ Լուրջ եմ ասում։

Բայց այստեղ նա լաց եղավ։

— Իսկ ես կարծում էի դու պատրաստվում ես թատրոնում խաղա՛լ։ Կարծում էի, ուզում ես Բենեդիկտ Առնոլդի գե՛րը կատարել այդ պիեսում,— ասում եմ։ Ջայնս դարձավ զայրալից, զզվելի։— Այս ի՛նչ ես արել, հը՞։ Ի՛նչ է, չե՞ս ուզում խաղալ այդ ներկայացման մեջ։

Այստեղ նա ավելի ուժգին լաց եղավ, ու ես նույնիսկ ուրախացա։ Հանկարծ ցանկացա, որ նա շատ խիստ լաց լինի։ Սոսկալի զայրացած էի նրա վրա։ Իմ կարծիքով, ես զայրացած էի, որ նա ուզում է հրաժարվել իր դերից ու մեկնել ինձ հետ։

— Գնա՛նք,— ասում եմ։ Ես նորից սկսեցի աստիճաններով բարձրանալ թանգարան։ Որոշեցի, որ այդ հիմար ճամպրուկը կհանձնեմ հանդերձարան, իսկ ժամը երեքին, դասից տուն գնալիս, նա կտանի իր հետ։ Գիտեի, որ դպրոց տանել չի կարող։— Դե գնանք,— ասում եմ։

Բայց նա թանգարան չեկավ։ Ջուզեց ինձ հետ գալ։ Ես մենակ գնացի, ճամպրուկը հանձնեցի հանդերձարան ու նորից ցած իջա։ Նա դեռ կանգնած էր մայթին, բայց երբ մոտեցա, շուռ եկավ թիկունքով դեպի ինձ։ Դա կարողանում է անել։ Թիկունքը կդարձնի քեզ, ու վերջ։

— Ես ոչ մի տեղ չեմ գնում։ Միտքս փոխեցի։ Վե՛րջ տուր լացիդ, լսո՞ւմ ես։— Հիմարություն էր այդ ասելը, որովհետև նա արդեն չէր լալիս։ Բայց ես, համենայն դեպս, ասացի. «Վերջ տուր լացիդ»։— Դե գնանք։ Ես քեզ կտանեմ դպրոց։ Շուտ արա, գնա՛նք։ Դու ուշանում ես։

Նա նույնիսկ չպատասխանեց ինձ։ Փորձեցի բռնել ձեռքը, բայց նա ետ քաշեց։ Ու ամբողջ ժամանակ երեսը շուռ էր տալիս ինձնից։

— Նախաճաշե՞լ ես,— հարցնում եմ։— Դու արդեն նախաճաշե՞լ ես։

Չի ուզում պատասխանել։ Եվ հանկարծ հանեց իմ որսորդական գլխարկն ու շպրտեց գրեթե երեսիս։ Իսկ ինքն էլի շուռ եկավ։ Միծաղս եկավ, ես լռեցի։ Միայն գետնից վերցրի գլխարկն ու դրի գրպանս։

— Լավ, գնանք, ես քեզ կուղեկցեմ մինչև դպրոց։

— Այլևս ես դպրոց չեմ գնալու։

Ի՞նչ ասեի։ Կանգ առա, լռեցի, հետո ասում եմ.

— Չէ, դպրոց անպայման պետք է գնաս։ Դու ախր պետք է խաղաս այդ ներկայացման մեջ, ճի՞շտ է։ Ուզում ես Բենեդիկտ Առնո՞լդ լինես։

— Ո՛չ։

— Ճիշտ չէ, ուզում ես։ Այն էլ ինչպե՞ս ես ուզում։ Դե, վերջ տուր, գնանք։ Նախ ես ոչ մի տեղ էլ չեմ գնում։ Ճիշտ եմ ասում։ Կվերադառնամ տուն։ Միայն քեզ տանեմ դպրոց, վերադառնալու եմ տուն։ Նախ կգնամ կայարան, կվերցնեմ ճամպրուկներս, իսկ հետո ուղիղ տուն...

— Իսկ ես քեզ ասում եմ, որ այլևս դպրոց չեմ գնալու։ Ինչ ուզում ես արա, դպրոց է՛լ չեմ գնալու։ Եվ ընդհանրապես ձայնդ կտրիր։

Կյանքում առաջին անգամ նա ինձ ասաց՝ «ձայնդ կտրիր»։ Կոպտորեն, ուղղակի սարսափելի էր։ Սարսափելի էր լսել։ Ավելի վատ էր, քան փողոցային հայհոյանք լսեի։ Ու չի նայում իմ կողմը, իսկ երբ փորձում եմ ձեռք տալ ուսին, կամ բռնել ձեռքը, դուրս է պրծնում։

— Լսիր, ուզո՞ւմ ես զբոսնել,— հարցնում եմ,— ուզո՞ւմ

նակ են այդ երեխաները, նրանց հետ պետք է զգույշ վարվես։

Կողքովս չի ուզում քայլել,— մենք արդեն հեռացել ենք ավազանից,— բայց, այնուամենայնիվ, շատ հեռու չի գընում։ Նա ճանապարհի մի կողմով է գնում, ես՝ մյուս։ Դա էլ մի հաճելի բան չէ, բայց ավելի լավ է, քան մեկ մղոն հեռավորության վրա մնալը, ինչպես առաջ։ Գնացինք արջերին տեսնելու փոքրիկ բլրակի վրա, բայց այնտեղ տեսնելու բան չկար։ Միայն մի արջ դուրս եկավ՝ սպիտակ, բևեռային։ Իսկ մյուսը՝ գորշը, մտել էր որջը և դուրս չէր գալիս։ Կողքիս՝ ականջներին հասնող կովբոյական գլխարկով մի տղա էր կանգնած ու ամբողջ ժամանակ կրկնում էր.

— Հայրիկ, ստիպիր, թող դուրս գա։ Հայրիկ, ստիպիր, թող դուրս գա։

Ես նայեցի Ֆիբրիին, բայց նա նույնիսկ չծիծաղեց։ Գիտեք, երեխաներն ինչպես են նեղանում, նրանք նույնիսկ չեն ծիծաղում, ոչ մի գնով։

Արջերի մոտից գնացինք դեպի ելքը, անցանք կենդանաբանական այգու փողոցը, հետո դուրս եկանք փոքրիկ թունելով, որտեղից միշտ վատ հոտ է գալիս։ Այդտեղով դուրս ես գալիս կարուսելների մոտ։ Իմ Ֆիբրին դեռևս չէր խոսում, բայց արդեն գրեթե կողքովս էր գնում։ Ուզում էի բռնել նրա վերարկուի գոտուց, բայց թույլ չտվեց։

— Ձեռքդ քաշիր, խնդրեմ,— ասում է։ Դեռևս ջղված էր ինձ վրա։ Բայց մենք գնալով մոտենում էինք կարուսելներին, ու արդեն լսվում էր երաժշտության ձայնը. այնտեղ միշտ նվագում էին «О Մերի»։ Մի հիսուն տարի առաջ էլ Նրանք այդ երգն էին նվագում, երբ ես փոքրիկ էի։ Կարուսելների ամենալավ բանը դա է, որ երաժշտությունը միշտ նույնն է։

— Իսկ ես կարծում էի կարուսելը ձմռանը փակվում է,— հանկարծ ասում է Ֆիբրին։ Առաջին անգամ խոսեց հետս։ Երևի մոռացել էր, որ նեղացած է։

— Հավանաբար այն պատճառով, որ շուտով Սննդյան տոնն է,— ասում եմ։

Նա ոչինչ չպատասխանեց։ Երևի հիշեց, որ վիրավորված է։

ես միասին գնանք կենդանաբանական այգի։ Եթե այսօր թույլ տամ դպրոց չգնաս և տանեմ կենդանաբանական այգի, վերջ կտա՞ս հիմարություններիդ։— Չի պատասխանում, իսկ ես կրկնում եմ ասածս.— Եթե թույլ տամ բաց թողնել երեկոյան պարապմունքները և տանեմ զբոսանքի, դու վերջ կտա՞ս մոծակներ բշելուն։ Խելացի կվարվե՞ս, վաղը կգնա՞ս դպրոց։

— Կուզեմ՝ կգնամ, կուզեմ՝ չէ,— ասաց ու նետվեց դեպի փողոցի մյուս կողմը, չնայեց նույնիսկ՝ մեքենա է գալիս, թե ոչ։ Երբեմն նա ուղղակի գժվում է։

Սակայն ես նրա ետևից չգնացի։ Գիտեի, որ նա ինքը իմ ետևից խելոք կգա, և կամաց ճամփա ընկա դեպի կենդանաբանական այգի, փողոցի մի կողմով, իսկ նա՝ մյուս։ Զննացնում է, թե իմ կողմը չի նայում, բայց աչքի պոչով բարկությամբ նայում է, թե ուր եմ գնում։ Այդպես էլ գնացինք ամբողջ ճանապարհը, մինչև կենդանաբանական այգի։ Ես անհանգստացա միայն, երբ անցավ երկհարկանի ավտոբուսը, որովհետև նրան կորցրի տեսադաշտից։

Բայց երբ մոտեցանք այգուն, ձայն տվի.

— Է՛յ, Ֆիբրի, ես գնում եմ կենդանաբանական այգի։ Արի այստեղ։

Նա չնայեց էլ իմ կողմը, բայց հասկացա, որ լսեց։ Երբ սկսեցի իջնել այգու աստիճաններից, շուռ եկա ու տեսա, որ անցավ փողոցը և նույնիսկ գալիս է իմ ետևից։

Կենդանաբանական այգում մարդ քիչ կար, գարշելի եղանակ էր, բայց ավազանի շուրջը, որտեղ ծովացուլերն էին լողանում, հանդիսատեսներ էին հավաքվել։ Ես պետք է անցնեի, բայց իմ Ֆիբրին կանգնեց ու սկսեց դիտել, թե ինչպես են կերակրում ծովացուլերին,— նրանց համար ձուկ էին նետում,— ես էլ ետ դարձա։ Մոտծում էի, հիմա կմոտենամ նրան և այլն։ Մոտեցա, կանգնեցի ետևում և ձեռքս դրի ուսին, բայց նա պոչից ու դուրս պրծավ ձեռքիս տակից, նա հեշտությամբ կպոկվի քեզնից, եթե ուզենա։ Նայում է՝ ինչպես են կերակրում ծովացուլերին, իսկ ես կանգնել եմ ետևը, բայց էլ ձեռքս չեմ դնում ուսին, ընդհանրապես ձեռք չեմ տալիս, վախենում եմ՝ հանկարծ թողնի, փախչի։ Տարօրի-

— Ուզո՞ւմ ես կարուսել նստել,— հարցնում եմ, Գիտեմ որ շատ է ուզում, երբ նա շատ պստլիկ էր, ես, Ալլին ու Դ. Բ-ն նրան բերում էինք այստեղ, և նա գժվում էր կարուսելի համար. Ուզղակի պոկել չէինք կարողանում կարուսելից։

— Ես արդեն մեծ եմ,— ասում էր։ Կարծում էի, չի պատասխանի, բայց պատասխանեց։

— Հիմարություն։ Նստիր, ես քեզ կսպասեմ։ Գնա՛,— ասացի։ Մենք արդեն մոտեցել էինք կարուսելին։ Մի քանի երեխաներ էլ կային այնտեղ, շատ փոքրիկներ, իսկ ծնողները նստարաններին նստած սպասում էին։ Ես մոտեցա տոմսավաճառի պատուհանին և իմ Ֆիբիի համար տոմսակ գնեցի։ Գնեցի ու տվի նրան։ Նա արդեն բոլորովին մոտ էր կանգնել.— Ահա՛,— ասում եմ,— չէ, սպասիր, մի րոպե, վերցրու քո նվերի փողերը, բոլորը վերցրու։— Ուզում էի բոլորը վերադարձնել նրան։

— Չէ, քեզ մոտ պահիր, պահիր մոտդ,— ասում է ու հանկարծ ավելացնում է.— խնդրում եմ, պահիր։

Մի տեսակ անհարմար ես զգում, որ քեզ այդպես խրնդրում են, հատկապես երբ դա քո փոքրիկ քույրիկն է։ Ես նույնիսկ հուզվեցի։ Բայց փողը սոիպված դրեցի դրպանս։

— Իսկ դու նստելո՞ւ ես,— հարցրեց նա ու մի հրաշալի հայացքով նայեց ինձ։ Երևում էր, որ բարկությունը բոլորովին անցել էր։

— Հաջորդ անգամ գուցե։ Հիմա կնայեմ քեզ, տոմսակը մո՞տդ է։

— Այո։

— Դե գնա, իսկ ես կնստեմ այստեղ, նստարանին, կնայեմ քեզ։

Ես նստեցի նստարանին, իսկ նա գնաց դեպի կարուսելը։ Պատվեց չորս կողմը։ Այսինքն՝ ամբողջ կարուսելի շուրջը։ Հետո ընտրեց ամենամեծ ձին, զզգված, պատավ կարմիր խալավորին։ Այդ ժամանակ կարուսելը պտտվեց, ու ես տեսա, թե նա ինչպես սլացավ։ Նրա հետ պտտվում էին նաև մի քանի երեխա՝ հինգ թե վեց, և նվագում էին «Մուխը պատում է աչքերդ» երգը։ Այնպե՜ս ուրախ էր, զվարճալի։ Ու

բոլոր երեխաները աշխատում էին բռնել ոսկե օղակը, իմ Ֆիբին նույնպես։ Ես նույնիսկ վախեցա՝ հանկարծ չբռնի՞ այդ անտեր ձիու վրայից, բայց ոչինչ հնարավոր չէր ո՛չ ասել, ո՛չ անել։ Երեխաներն այդպես են, ինքն արդեն որոշել են բռնել ոսկե օղակը, ապա չպետք է նրանց խանգարել։ Կբռնկնեն՝ կբռնկնեն, բայց այդ ժամանակ չպետք է խոսել։

Երբ պտույտը վերջացավ, նա իջավ ձիուց ու եկավ ինձ մոտ։

— Հիմա էլ դու նստիր։

— Չէ, ավելի լավ է ես նայեմ քեզ։— Ես մի քիչ էլ տվի նրան իր փողերից.— Գնա մի տոմս էլ դնիր։— Նա վերցրեց փողը։

— Ես էլ չեմ բարկանում քեզ վրա,— ասում էր։

— Տեսնում եմ, վազիր, հիմա կպտտվի։— Ու մեկ էլ նա համբուրեց ինձ։ Հետո մեկնեց ափը։

— Անձրև, հիմա անձրև կգա։

— Տեսնում եմ։

Գիտե՞ք ինչ արեց նա, քիչ մնաց ուշքս գնար։ Ջեռքը մացրեց գրպանս, դուրս քաշեց որսորդական կարմիր գլխարկը ու դրեց գլխիս։

— Իսկ դու չե՞ս ուզում դնես,— հարցնում եմ։

— Նախ դու դիր,— ասում էր։

— Լավ։ Դե վազիր, թե չէ բաց կթողնես այս պտույտը։ Եվ քո ձին էլ կզբաղեցնեն։

Բայց նա չէր հեռանում մոտիցս։

— Դու ճի՞շտ էիր ասում։ Իսկապե՞ս ոչ մի տեղ չես գնալու։ Իսկապե՞ս վերադառնալու ես տուն։

— Այո,— ասացի ես։ Ու չէի խաբում։ Իսկապես վերադարձա տուն։— Դե շո՛ւտ արա, —ասում եմ։— Հիմա կբռնկվի։

Նա վազեց տոմսակ գնեց ու վերջին պահին հասավ կարուսելի մոտ։ Էլի պտտվեց չորսբոլորը։ Մինչև որ գտավ իր նախկին ձին։ Հեծավ, ձեռքը թափահարեց իմ կողմը, ես էլ ձեռքս թափահարեցի։

Ու այդ ժամանակ սոսկալի անձրև սկսվեց։ Իսկական տեղատարափ, ասես՝ ծակ վկա։ Բոլոր մայրիկներն ու տատիկ-

ները, մի խոսքով, ովքեր կային, վազեցին կարուսելի տանիքի տակ, որպեսզի մինչև ոսկորները չթրջվեն, իսկ ես այդպես էլ մնացի անձրևի տակ նստած։ Սոսկալի թրջվեցի։ Հատկապես օձիքս ու տաբատս։ Որսորդական գլխարկը ինչ-որ չափով ինձ պաշտպանում էր, բայց, այնուամենայնիվ, մինչև վերջին թելը թրջվեցի։ Ու ինձ համար միևնույն էր։ Հանկարծ այնպես երջանիկ զգացի ինձ, որ Ֆիբին պատվում էր կարուսելով։ Քիչ էր մնում երջանկությունից գոռայի, ճիշտն ասած։ Ինքս էլ չեմ հասկանում ինչու։ Նա այնքա՞ն լավն էր, այնքա՞ն ուրախ էր պատվում, իր կապույտ վերարկուն հագին։ Ափսո՞ս, որ դուք չեք տեսել նրան, ասելիք վկա։

26

Ահա և բոլորը, պլկես ոչինչ չեմ պատմելու։ Իհարկե, կարող էի պատմել, թե ինչ կատարվեց տանը, և ես ինչպես հիվանդացա, և ո՛ր դպրոցն են պատրաստվում ուղարկել ինձ աշնանը, երբ այստեղից դուրս գրեն, բայց այդ մասին չարժե խոսել։ Հավես չկա, ազնիվ խոսք։ Հետաքրքիր չէ։

Շատերը, հատկապես այդ հոգեվերլուծողը, որ գալիս է այս սանատորիան, հարցնում են ինձ՝ կարգին սովորելո՞ւ եմ, երբ աշնանը դպրոց ընդունվեմ։ Իմ կարծիքով դա զարմանալի հիմար հարց է։ Մարդ նախօրոք ինչպե՞ս կարող է ասել, թե ինչ է անելու։ Նախապես ոչինչ չես կարող իմանալ։ Ինձ թվում է, թե պիտի սովորեմ, բայց ի՞նչ իմանամ։ Եվ հիմարություն է հարցնել, ազնիվ խոսք։

Դ. Բ-ն ուրիշների նման չէ, բայց նա էլ է զանազան հարցեր տալիս։ Շաբաթ օրը եկել էր ինձ մոտ այն անգլուհու հետ, որը պետք է նկարահանվի նրա ֆիլմում։ Շատ է կոտրատվում այդ անգլուհին, բայց փոխարենը շատ գեղեցիկն է։ Եվ երբ նա գնաց միջանցքի ծայրին գտնվող կանացի սենյակը, Դ. Բ-ն ինձ հարցրեց, թե ինչ եմ մտածում այն մասին, ինչ որ կատարվեց, այն մասին, ինչ որ ձեզ պատմեցի։ Բոլորովին չգիտեի ինչ պատասխանեմ։ Ճիշտն ասած, ես էլ չգիտեմ ինչ մտածեմ։ Ափսո՞ս, որ շատերին եմ պատմել այս ամենը։ Գիտեմ միայն, որ մի տեսակ զգում եմ այն մարդկանց կարիքը, ում մասին որ պատմել եմ։ Օրինակ՝ Սարեդ-

լեյթերի կամ հենց թեկուզ այդ էկլիի։ Երբեմն թվում է, թե նույնիսկ այն ստոր Մորիսին եմ կարոտում, տաբօրինակ բան է։ Եվ լավ կանեք, որ դուք էլ ոչ մեկին ոչինչ չպատմեք։ Թե չէ ամեն ինչ պատմում եք, հետո տխրում եք առանց դրանց։